Co-funded by the European Union

VIBE

Երիտասարդների ձայնը հանուն ակտիվ քաղաքացիության

Էրազմուս-Երիտասարդություն-2025-CB-101242150

Սթորիթելինգի ուսուցման գործիքակազմ երիտասարդական աշխատողների համար



Co-funded by the European Union

Սթորիթելինգի ուսուցման գործիքակազմ երիտասարդական աշխատողների համար

Հուլիս 2026

Մշակողներ՝ FECE, VisMed, YIC, MilleniuM

Ծանուցում. Ծրագիրը ֆինանսավորվում է Եվրոպական միության կողմից: Այնուամենայնիվ, արտահայտված տեսակետներն ու կարծիքները բացառապես հեղինակներինն են և պարտադիր չէ, որ արտացոլեն Եվրոպական միության կամ Եվրոպական հանձնաժողովի տեսակետները: Եվրոպական միությունը և դրամաշնորհ տրամադրող մարմինը պատասխանատվություն չեն կրում դրանց համար:

Co-funded by the European Union

Բովանդակություն

1 Ներածություն

2 Քննադատական մտածողություն և մեդիագրագիտություն

3 Սթորիթելինգ և համայնքային ներգրավվածություն

4 Եզրակացություն

Ներածություն

Հետևյալ գործիքակազմը երիտասարդական աշխատողներին տրամադրում է կիրառելի և մատչելի մեթոդներ՝ սթորիթելինգ և համայնքային ներգրավվածության միջոցով երիտասարդներին մեդիագրագիտության և քննադատական մտածողության հիմունքներին ծանոթացնելու համար: Ներգրավող դերային խաղերի և քննադատական մտածողությունն ու խնդիրների լուծման հմտությունները զարգացնող մեթոդների միջոցով մասնակիցները խորացնում են իրենց պատկերացումները մեդիագրագիտության վերաբերյալ, ավելի լավ են գիտակցում սոցիալական և քաղաքական գործընթացներն ու դրանց ազդեցությունը և սովորում են ձեռք բերած հմտությունները կիրառել գործնական իրավիճակներում:

Հիմնական նպատակն է զարգացնել քննարկումներ վարելու, երկխոսություն խթանելու և քննադատական մտածողության ձևավորմանը նպաստելու հմտությունները: Սա նպաստում է սոցիալական համերաշխությանն ու խաղաղության ամրապնդմանը, ինչպես նաև եվրոպական արժեքների տարածմանը և երիտասարդական աշխատողներին անհրաժեշտ հմտությունների ու կարողությունների զարգացմանը՝ համայնքային կյանքում ակտիվորեն ներգրավվելու և համայնքային խնդիրների լուծմանը մասնակցելու համար: Գործիքակազմը կենտրոնանում է առաջնորդության հմտությունների զարգացման և հասարակական խնդիրների նկատմամբ պատասխանատու ու էթիկական վերաբերմունքի ձևավորման վրա:

Ինչո՞ւ է մշակվել այս գործիքակազմը

Երիտասարդներն ունեն իրենց առանձնահատուկ տեսակետները, կյանքի փորձն ու կարիքները, որոնք անհրաժեշտ է ճանաչել և հարգել հատկապես այն դեպքերում, երբ ընդունվող որոշումներն անմիջականորեն վերաբերում են նրանց: Երիտասարդներին արդյունավետ աջակցելու համար անհրաժեշտ է ստեղծել անվտանգ, ներառական և նրանց հնարավորություններ ընձեռող միջավայր, որտեղ նրանք իրենց լսված ու գնահատված կզգան և կկարողանան իրական փոփոխություններ նախաձեռնել: Նույնքան կարևոր է աջակցել երիտասարդներին՝ արտահայտելու իրենց տեսակետները, զարգացնելու առաջնորդության հմտությունները և ձևավորելու այն կարողությունները, որոնք անհրաժեշտ են համայնքային կյանքում ակտիվ դերակատարում ունենալու համար: Երիտասարդներին իրենց գաղափարներով կիսվելու խրախուսումը նպաստում է նրանց ինքնավստահության ամրապնդմանը, զարգացնում է քննադատական մտածողությունը և խթանում ակտիվ մասնակցությունը: Միևնույն ժամանակ, դա նրանց հնարավորություն է տալիս դառնալու պատասխանատու քաղաքացիներ և ժողովրդավարական ու եվրոպական արժեքների պաշտպաններ: Մեծահասակները, ուսուցիչները և համայնքի առաջնորդները կարևոր դեր ունեն այս գործընթացում՝ ուշադիր լսելով երիտասարդներին, ուղղորդելով նրանց և ապահովելով, որ երիտասարդների տեսակետները ոչ միայն լսելի լինեն, այլև հաշվի առնվեն և վերածվեն գործողությունների:

Այս գործիքակազմը անդրադառնում է սթորիթելինգին, մեդիագրագիտությանը, քննադատական մտածողությանը և համայնքային հարցերում ակտիվ մասնակցությանը՝ որպես այսօրվա տեղեկատվությամբ հարուստ հասարակությունում երիտասարդների հզորացման կարևոր գործիքների: Սթորիթելինգի միջոցով երիտասարդները կարող են ներկայացնել իրենց տեսակետները և ձևավորել այնպիսի պատմություններ, որոնք արտացոլում են իրենց իրականությունն ու փորձառությունը:

Մեդիագրագիտության զարգացումը նրանց հնարավորություն է տալիս քննադատաբար գնահատել տեղեկատվությունը, ճանաչել կողմնակալությունը և պատասխանատու կերպով կողմնորոշվել թվային միջավայրում: Քննադատական մտածողության հմտությունների հետ համադրվելով՝ այս կարողությունները նպաստում են տեղեկացված որոշումների կայացմանը և բովանդակալից ներգրավվածությանը: Ակտիվ մասնակցության խրախուսումն օգնում է երիտասարդներին դրսևորել նախաձեռնողականություն, ներդրում ունենալ իրենց համայնքների զարգացման գործում և ձևավորվել որպես գիտակից ու պատասխանատու քաղաքացիներ:

Ոչ ֆորմալ և ինֆորմալ ուսումնառության (NFIL) մոտեցումներն առաջարկում են ճկուն, մասնակցային և գործնական մեթոդներ, որոնք օգնում են երիտասարդներին զարգացնել քննադատական մտածողության, թիմային աշխատանքի և հաղորդակցման հմտությունները:

Այս մոտեցումը խրախուսվում է երիտասարդներին ազատորեն արտահայտել իրենց կարծիքը, ճանաչել իրենց իրավունքներն ու պարտականությունները և ակտիվ դեր ստանձնել իրենց համայնքներում՝ հանդես գալով որպես համայնքի զարգացմանը նպաստողներ և կարծիքի ձևավորման վրա ազդեցություն ունեցողներ:

Այս գործիքակազմը մշակված է՝ աջակցելու երիտասարդներին դառնալ կարծիք ձևավորողներ և ակտիվորեն մասնակցել ժողովրդավարական գործընթացներին: Դրանում ներառված գործիքներն անմիջականորեն առնչվում են սթորիթելինգի մեթոդներին և նպաստում են այս ուղղությամբ երիտասարդների հետ աշխատելու համար անհրաժեշտ գիտելիքների և հմտությունների զարգացմանը:

Այսպիսով, առաջարկելով այդ կարողություններն ու հմտությունները զարգացնելու գաղափարներ և մեթոդներ՝ գործիքակազմն օգնում է երիտասարդական աշխատողներին և դասընթացավարներին իրենց աշխատանքը կազմակերպել որպես մասնագիտական հմտությունների զարգացման ամբողջական և հետևողական գործընթաց:

Գործիքակազմը հիմնված է չորս երկրների գործընկեր կազմակերպությունների փորձի վրա և քայլ առ քայլ ուղղորդում է թե ինչպես դառնալ իրազեկ, պատասխանատու և համայնքային կյանքում ակտիվորեն ներգրավված անդամներ՝ տեղական, ազգային կամ համաշխարհային մակարդակներում:

Յուրաքանչյուր թեմա ներառում է մի քանի ուսումնական գործիքներ, որոնք մշակված են թիմային աշխատանքի վրա հիմնված դերային խաղերի ձևաչափով և ուղղված են տվյալ թեմայի վերաբերյալ գիտելիքների ու հմտությունների զարգացմանը: Յուրաքանչյուր գործիք ուղեկցվում է դասընթացավարների համար նախատեսված քայլ առ քայլ հրահանգներով, որոնք ներկայացնում են նախապատրաստման ընթացքը, անհրաժեշտ նյութերը և իրականացման կարգը:

Յուրաքանչյուր գործիքի համար ներկայացված են հետևյալ բաժինները՝

- Զարգացվող հմտություններ և հիմնական հասկացություններ
- Նպատակներ
- Անհրաժեշտ նյութեր
- Գործիքներ և աղբյուրներ
- Տևողություն
- Մասնակիցների թիվը
- Նկարագրություն
- Ամփոփիչ քննարկման հարցեր
- Մասնակիցներին տրամադրվող նյութեր

Քննադատական մտածողություն և մեդիագրագիտություն

Այս թեմատիկ ուղղության շրջանակում ներկայացվում է թեմայի տեսական հիմքը և առանձնացվում են քննադատական մտածողության ու մեդիագրագիտությանն առնչվող հիմնական հասկացությունները: Դերային խաղերի և ինտերակտիվ մեթոդների միջոցով դասընթացի մասնակիցները յուրացնում են հիմնական եզրույթներն ու սովորում դրանց կիրառման եղանակները: Ընտրված գործիքները հանդիսանում են գործնական ուղեցույց ներառական, ժողովրդավարական և մարդու իրավունքների վրա հիմնված համայնքներ ձևավորելու համար անհրաժեշտ հիմնական սկզբունքների և մոտեցումների համար:

Գործիքները ներառում են ռազմավարություններ և վարժություններ, որոնք խրախուսում են խմբային և համայնքային որոշումների կայացման գործընթացներում բովանդակալից և հարգալից մասնակցությունը: Այս բաժնում ներկայացվում են նաև քաղաքացիական ներգրավվածությունը խթանող գործիքներ և թվային հարթակներ, որոնք նպաստում են ժողովրդավարական գործընթացների վերաբերյալ գիտելիքների խորացմանը, հավասար հնարավորությունների ստեղծմանը և համայնքային կապերի ամրապնդմանը:



1. Մեդիագրագիտությունը գործնականում Իրազեկումից՝ դեպի համատեքստի ըմբռնում

Զարգացվող հմտություններ և հասկացություններ	• Քննադատական մտածողություն • Մեդիագրագիտություն • Քաղաքացիական լրագրություն • Հաղորդակցություն և թիմային աշխատանք • Սթորիթելինգ և հաղորդագրության ձևավորում
Նպատակներ	• Մասնակիցներին ծանոթացնել լրագրության պատմության առանցքային փուլերին և մինչև մեր օրերը մեդիայի զարգացման հիմնական ուղղություններին: • Ներկայացնել սթորիթելինգի հիմնական մոդելները: • Խթանել քննադատական մտածողությունը՝ նորությունների ընկալման գործընթացում համատեքստի և ամբողջական պատկերի կարևորության վերաբերյալ: • Զարգացնել վերնագրերում հուզական մանիպուլյացիան և սենսացիոն մոտեցումները ճանաչելու հմտությունները: • Խրախուսել հիմնավորված քննարկում այն մասին, թե ինչպես է մեդիայում տեղեկատվության ներկայացման ձևը ազդում հանրային վերաբերմունքների և կարծիքների վրա:
Անհրաժեշտ նյութեր	A4 չափի թղթեր, գունավոր մարկերներ, գրիչներ, փոքրիկ պայուսակ, ժամաչափ կամ հեռախոս՝ ժամանակին հետևելու համար, մկրատ:
Գործիքներ և աղբյուրներ	Բինգոյի հարցերն ու պատասխանները՝ դասընթացավարի համար
Տևողություն	85-90 րոպե
Մասնակիցների թիվը	10-20 մասնակից
Ուսումնական նյութեր	Բինգոյի քարտեր՝ «Լրագրության բինգո», 1-ից 16-ը թվերի տպված ցանկ, տպված սցենարներ՝ «Կորած համատեքստի որոնում» և «Կիանու Ռիվզի» դեպքը:

Նկարագրություն

Գործնական աշխատանքը բաղկացած է 2 մասից:

Մաս 1. Լրագրության բինգո (30 րոպե)

Մասնակիցները բաժանվում են երկու թիմի: Յուրաքանչյուր թիմ ստանում է 16 վանդակից բաղկացած տպված բինգոյի քարտ և մյուս թիմից տարբերվող գույնի մարկեր: Դասընթացավարն ունի փոքրիկ պայուսակ, որի մեջ դրված են 1-ից 16-ը կտրված համարները, «Լրագրության բինգո» իր քարտը և հարցերի ցանկը, որոնց համարները համապատասխանում են բինգոյի քարտի վանդակներին:

Մասնակիցներից մեկը պայուսակից պատահականորեն հանում է մեկ համար, որից հետո դասընթացավարը կարդում է տվյալ համարին համապատասխան հարցը և պատասխանի երեք տարբերակները, իսկ հանված համարը դնում է մի կողմ: Յուրաքանչյուր համար հանելիս թիմերը պատասխանում են հերթով: Պատասխանելու իրավունքը ստանում է տվյալ հերթի թիմից առաջինը ձեռք բարձրացրած մասնակիցը: Մասնակիցները պատասխանում են անհատապես՝ առանց թիմակիցների հետ խորհրդակցելու: Պատասխանելու համար տրվում է 30 վայրկյան: Ճիշտ պատասխանի դեպքում երկու թիմերն էլ համապատասխան վանդակը նշում են ճիշտ պատասխանած թիմի գույնով: Առաջին թիմը, որը լրացնում է ամբողջական հորիզոնական կամ ուղղահայաց շարք, բացականչում է՝ «Բինգո՛» և ստանում 1 լրացուցիչ միավոր: Սակայն «Բինգո՛» բացականչելով չի ավարտվում խաղը: Դասընթացավարը շարունակում է հանել համարները, մինչև բոլոր 16 հարցերը հնչեն՝ համոզվելու համար որ ուսումնական բովանդակության բոլոր փաստերը ներկայացվել են: Յուրաքանչյուր ճիշտ պատասխանի համար թիմը ստանում է 1 միավոր: Բոլոր 16 փուլերի ավարտից հետո հաղթում է առավելագույն ընդհանուր միավոր հավաքած թիմը՝ հաշվի առնելով ճիշտ պատասխանների համար ստացած միավորները և «Բինգո»-ի լրացուցիչ միավորը:

Մաս 2. Թիմային դեպքի ուսումնասիրություն՝ «Կորած համատեքստի որոնում» (40 րոպե)

Դասընթացավարը մասնակիցներին վերաբաժանում է երեք նոր խմբի: Յուրաքանչյուր խումբ ստանում է նույն դեպքի տարբեր տարբերակ պարունակող տպագիր տեքստ՝ նվազագույն, մասնակի կամ ամբողջական մանրամասներով: Խմբերը չգիտեն, որ աշխատում են նույն պատմության վրա և պարզապես ստացել են տարբեր ծավալի տեղեկություն: Յուրաքանչյուր թիմի առաջադրանքն է կարդալ իր տեքստը և պատրաստել երեք նույնական հարցերի պատասխանները (15 րոպե): Յուրաքանչյուր խմբի ներկայացուցիչ նախ ներկայացնում է իր խմբի առաջարկած վերնագիրը (հարց 3), ապա՝ մյուս երկու հարցերի պատասխանները:

Միայն այն բանից հետո, երբ բոլոր երեք խմբերը ներկայացնում են իրենց տեսակետները, դասընթացավարը բացահայտում է, որ բոլոր խմբերն աշխատել են միևնույն պատմության շուրջ, սակայն որոշ մանրամասներ միտումնավոր բաց են թողնվել: Այնուհետև դասընթացավարը յուրաքանչյուր խմբին առաջարկում է բարձրաձայն կարդալ իր տեքստը: Դրան հաջորդում է քննարկում այն մասին, թե ինչ դեր ունի համատեքստը հանրային կարծիքի ձևավորման գործում *(20 րոպե)*:

Ըստ ցանկության. Որպես ամփոփում՝ դասընթացավարը ներկայացնում է իրական դեպքի՝ «Կիանու Ռիվզի» դեպքի լուսաբանման երկու տարբերակ՝ մեկը սենսիացիոն, մյուսը՝ օբյեկտիվ: Այս օրինակն օգնում է ցույց տալ, թե ինչպես կարող է փաստերի ընտրությունն ազդել ընթերցողի ընկալման վրա *(5 րոպե)*:

Դասընթացավարն ամփոփում է հիմնական եզրակացությունները՝

- Մեդիագրագիտությունը սկսվում է հետևյալ հարցից. **«Ի՞նչ դեռ չգիտեմ այս պատմության մասին»:**
- Քննադատական մտածողությունն այն գործիքն է, որն օգնում է մեզ տարբերակել հուզական ազդեցությունը օբյեկտիվ իրականությունից:
- Առանց համատեքստի տեղեկատվությունը ոչ միայն թերի է, այլև կարող է դառնալ մանիպուլյացիայի միջոց: Մանրամասների բացակայությունը կարող է զոհին ներկայացնել որպես մեղավոր, իսկ մեղավորին՝ որպես զոհ:

Ամփոփիչ քննարկման հարցեր

- Այսօր ստացած ո՞ր տեղեկությունն է ձեզ ամենից շատ զարմացրել և ինչու՞:
- «Լրագրության բինգո»-ի ո՞ր հարցն էր ձեզ համար ամենահետաքրքիրը և ինչու՞:
- Ձեր կարծիքով՝ կարճ նորություններ կամ վերնագրեր կարդալիս հաճա՞խ ենք թերի համատեքստի պատճառով սխալ պատկերացում կազմում:
- Ձեր կարծիքով՝ մեդիան միտումնավո՞ր է որոշ մանրամասներ թաքցնում, թե՞ պարզապես բավարար տեղեկատվություն չի ունենում:
- Որպես քաղաքացիական լրագրողներ՝ ի՞նչ անձնական պատասխանատվություն ենք կրում նախքան «Կիսվել» կոճակը սեղմելը:
- Եթե վաղը բոլոր լրատվամիջոցները վերանային, ո՞վ կպատմեր տեղի ունեցող իրադարձությունների մասին:

Աղբյուր՝ մշակվել է FECE-ի կողմից՝ VIBE նախագծի շրջանակում:

Դասընթացավարի համար

Բինգոյի հարցերն ու պատասխանները

Հարց 1. Գուտենբերգի տպագրական մեքենան ձեռագիր գրելու համեմատ քանի՞ անգամ ավելի արագ էր տպագրում:
A) 10 անգամ B) 100 անգամ C) 1 000 անգամ
Ճիշտ պատասխան՝ C) 1 000 անգամ

Հարց 2. Հետազոտությունների համաձայն՝ X-ում (Twitter) կեղծ լուրերը իրական լուրերի համեմատ քանի՞ անգամ ավելի արագ են տարածվում:
A) 2 անգամ B) 6 անգամ C) 10 անգամ
Ճիշտ պատասխան՝ B) 6 անգամ

Հարց 3. Ի՞նչ է նշանակում AIDA գրավոր հաղորդակցության մոդելի առաջին «A» տառը:
A) Ուշադրություն (Attention) B) Վերլուծություն (Analysis) C) Գործողություն (Action)
Ճիշտ պատասխան՝ A) Ուշադրություն (Attention)

Հարց 4. Հետևյալ հարթակներից ո՞րը բնորոշ չէ քաղաքացիական լրագրությանը:
A) Անձնական բլոգ B) Facebook-ի ուղիղ հեռարձակում C) Ազգային հեռուստատեսության լրատվական թողարկում
Ճիշտ պատասխան՝ C) Ազգային հեռուստատեսության լրատվական թողարկում

Հարց 5. Ի՞նչն է հիմնականում նպաստել համացանցում քաղաքացիական լրագրության զարգացմանը 1990-ականների վերջին:
A) Էլեկտրոնային փոստը B) Առցանց ֆորումները C) Բլոգները
Ճիշտ պատասխան՝ C) Բլոգները

Հարց 6. Ե՞րբ է լույս տեսել աշխարհում առաջին տպագիր օրաթերթը:
A) 1605 թ. B) 1702 թ. C) 1833 թ.
Ճիշտ պատասխան՝ B) 1702 թ.
Նշում. Աշխարհում առաջին օրաթերթը կոչվում էր «The Daily Courant» և սկսել է հրատարակվել Լոնդոնում 1702 թվականին: Հետաքրքիր է, որ դրա հիմնադիրն ու առաջին հրատարակիչը կին էր՝ Էլիզաբեթ Մալեթը:

Հարց 7. 2023 թվականին մոտավորապես քանի՞ deepfake (արհեստական բանականությամբ ստեղծված կամ կեղծված տեսաձայնային բովանդակություն) ֆայլ էր շրջանառվում համացանցում:
A) Մոտ 2 000 000 B) Մոտ 500 000 C) Մոտ 100 000
Ճիշտ պատասխան՝ B) մոտ 500 000

Հարց *8*. Սթորիթելինգում ի՞նչ է նշանակում «*PAS*» հապավումը:
A) Ապացուցել – փաստարկել – ամփոփել *(Prove – Argue – Summarise)*
B) Հրապարակել – վերլուծել – կիսվել *(Publish – Analyse – Share)*
C) Խնդիր – խնդրի սրում – լուծում *(Problem – Agitation – Solution)*
Ճիշտ պատասխան՝ *C)* Խնդիր – խնդրի սրում – լուծում

Հարց 9. Մոտավորապես քանի՞ միլիարդ դոլարի վնաս է ապատեղեկատվությունը տարեկան պատճառում համաշխարհային տնտեսությանը:
A) 78 միլիարդ դոլար B) 200 միլիարդ դոլար C) 12 միլիարդ դոլար
Ճիշտ պատասխան՝ A) 78 միլիարդ դոլար

Հարց *10*. Կարո՞ղ է քաղաքացիական լրագրողը զրպարտության համար ենթարկվել քրեական պատասխանատվության:
A) Ոչ, քանի որ նա պրոֆեսիոնալ լրագրող չէ *B)* Միայն այն դեպքում, եթե ունի ավելի քան *1 000* հետևորդ *C)* Այո, օրենքը տարածվում է բոլոր քաղաքացիների վրա
Ճիշտ պատասխան՝ *C)* Այո, օրենքը տարածվում է բոլոր քաղաքացիների վրա

Հարց *11*. Մեդիայի ո՞ր տեսակն է հայտնի որպես «յոթերորդ իշխանություն»:
A) Ռադիոն *B)* Տպագիր մամուլը *C)* Հեռուստատեսությունը
Ճիշտ պատասխան՝ *B)* Տպագիր մամուլը

Հարց *12*. Ռիոյի Օլիմպիական խաղերի ժամանակ աշխատանքի առաջին տարում քանի՞ հոդված է հրապարակել *The Washington Post*-ի արհեստական բանականության համակարգը:
A) Մոտ *50 B)* Մոտ *200 C)* Ավելի քան *850*
Ճիշտ պատասխան՝ *C)* Ավելի քան *850*

Հարց *13*. Ո՞ր տարրն է արդյունավետ սթորիթելինգի հիմքում:
A) Տեքստի երկարությունը *B)* Մարդկային պատմությունն ու հույզերը *C)* Տեքստի տոնը
Ճիշտ պատասխան՝ *B)* Մարդկային պատմությունն ու հույզերը

Հարց *14*. Վերջին երկու տարիներին ո՞ր հավելվածն է դարձել երիտասարդների շրջանում նորությունների ստացման առաջատար աղբյուրը:
A) LinkedIn B) Snapchat C) TikTok
Ճիշտ պատասխան՝ *C) TikTok*

Հարց *15*. Ի՞նչ է նշանակում «արձագանքների փակ շրջանակ» *(echo chamber)* հասկացությունը:

A) Հեռուստատեսային ստուդիայում առաջացած տեխնիկական անսարքություն

B) Ռադիոլուրերի ձայնագրման վայր

C) Միջավայր, որտեղ մենք հիմնականում լսում ենք միայն մեր սեփական տեսակետներին նման կարծիքներ

Ճիշտ պատասխան՝ *C)* Միջավայր, որտեղ մենք հիմնականում լսում ենք միայն մեր սեփական տեսակետներին նման կարծիքներ

Հարց 16. Ի՞նչ է «փաստերի ստուգումը» (fact-checking):

A) Անձնական կարծիք արտահայտող հոդված գրելը

B) Տեղեկատվության հավաստիությունը ստուգելու գործընթացը


C) Ձեզ դուր չեկող մեկնաբանությունները ջնջելը

Ճիշտ պատասխան՝ B) Տեղեկատվության հավաստիությունը ստուգելու գործընթացը

Բաշխիչ նյութ 1

ԼՐԱԳՐՈՒԹՅԱՆ ԲԻՆԳՈ

1	2	3	4
5	6	7	8
9	10	11	12
13	14	15	16





Բաշխիչ նյութ 2

1	2	3	4
5	6	7	8
9	10	11	12
13	14	15	16

Բաշխիչ նյութ 3

«Կորած համատեքստի որոնում»

Տեքստ 1. Նվազագույն տեղեկատվություն (Թիմ 1)
21-ամյա երիտասարդը ձերբակալվել է սուպերմարկետի անվտանգության աշխատակիցների կողմից՝ սննդամթերք գողանալիս: Գողացված ապրանքների ընդհանուր արժեքը կազմել է մոտ 15 եվրո: Դեպքը փոխանցվել է ոստիկանությանը:

Տեքստ 2. Մասնակի տեղեկատվություն (Թիմ 2)
21-ամյա երիտասարդը ձերբակալվել է սուպերմարկետի անվտանգության աշխատակիցների կողմից՝ մոտ 15 եվրո արժողությամբ սննդամթերք գողանալիս: Դեպքը փոխանցվել է ոստիկանությանը: Ականատեսների խոսքով՝ երիտասարդն ապրում է միայնակ և վերջերս կորցրել է աշխատանքը: Ձերբակալման ժամանակ նա դիմադրություն չի ցուցաբերել և ներողություն է խնդրել աշխատակիցներից:

Տեքստ 3. Ամբողջական տեղեկատվություն (Թիմ 3)
21-ամյա երիտասարդը ձերբակալվել է սուպերմարկետի անվտանգության աշխատակիցների կողմից՝ մոտ 15 եվրո արժողությամբ սննդամթերք գողանալիս: Դեպքը փոխանցվել է ոստիկանությանը: Երիտասարդն ապրում է միայնակ և երկու ամիս առաջ ստիպված է եղել թողնել համալսարանը, քանի որ այլևս ի վիճակի չէր վճարել ուսման վարձը: Դրանից կարճ ժամանակ անց նա կորցրել է նաև կես դրույքով աշխատանքը: Նրա ծնողները նույնպես ֆինանսական դժվարություններ ունեն, և երիտասարդը չի դիմել նրանց օգնությանը՝ չցանկանալով լրացուցիչ ծանրաբեռնել նրանց: Դեպքի օրը նրա տանը արդեն երկու օր սնունդ չէր եղել: Ձերբակալման ժամանակ երիտասարդը դիմադրություն չի ցուցաբերել և ներողություն է խնդրել աշխատակիցներից:

Երեք հարցերը (նույնը՝ բոլոր խմբերի համար)
Հարց 1. Ինչպե՞ս կբնութագրեիք երիտասարդին՝ որպես հանգամանքների զո՞հ, թե՞ որպես մեկի, ով գիտակցաբար որոշել է խախտել օրենքը: Ինչու՞:
Հարց 2. Ձեր կարծիքով՝ ո՞րն է նրա նկատմամբ արդար մոտեցումը՝ պատիժ, աջակցություն, թե՞ մեկ այլ տարբերակ:
Հարց 3. Եթե դուք լրագրող լինեիք և ստիպված լինեիք լուսաբանել այս դեպքը՝ հիմնվելով միայն ձեր ունեցած տեղեկատվության վրա, ի՞նչ վերնագիր կգրեիք:

Բաշխիչ նյութ 4

«Կիանու Ռիվզի» դեպքը

Տարբերակ 1. Դեղին մամուլ (սենսացիայի և դրամատիկության շեշտադրում)

Վերնագիր. «ՈՂԲԵՐԳՈՒԹՅՈՒՆ. Կիանու Ռիվզին անհնար է ճանաչել: Դերասանը միայնակ ու անտուն է մնացել փողոցու՞մ»
Մոտեցում. Օգտագործվում է պապարացիի լուսանկար, որտեղ դերասանը միայնակ նստած է նստարանին և սենդվիչ է ուտում: Վերնագիրը տպավորություն է ստեղծում, թե նա դեպրեսիայի մեջ է, սնանկացել է կամ անձնական ծանր իրավիճակում է հայտնվել՝ ընթերցողին ցնցելու և հնարավորինս շատ դիտումներ ու հղման սեղմումներ ստանալու նպատակով:

Տարբերակ 2. Լուրջ լրատվամիջոց (փաստեր և համատեքստ)
Վերնագիր. «Կիանու Ռիվզին նկատել են այգում ճաշելիս՝ նկարահանումների ընդմիջման ժամանակ»
Մոտեցում. Տեքստում բացատրվում է, որ դերասանը պարզապես նախընտրում է հանգիստ ապրելակերպ և հաճախ ժամանակն անցկացնում է սովորական քաղաքացու պես: Ոչ մի դրամատիկ պատմություն, ոչ մի սենսացիա, պարզապես փաստ՝ մարդը ճաշում է:



Լուսանկարի աղբյուր: *https://www.vanityfair.com/style/2019/12/sad-keanu-sad-affleck-2010s*

2. Կադրից այն կողմ Քննադատական մտածողություն՝ 6 դիտանկյունից

Զարգացվող հմտություններ և հիմնական հասկացություններ	• Քննադատական մտածողություն • Մեդիագրագիտություն • Փաստերի ստուգում • Հաղորդակցման և թիմային աշխատանքի հմտություններ • Մեդիա դեպքերի ուսումնասիրություն և վերլուծություն
Նպատակներ	• Զարգացնել քննադատական մտածողությունը՝ իրավիճակները տարբեր դիտանկյուններից նայելու միջոցով: • Ցույց տալ, թե ինչպես կարող է համատեքստի բացակայությունը հանգեցնել հապճեպ եզրակացությունների: • Զարգացնել թվային միջավայրում արհեստական բանականության հնարավորություններն ու ռիսկերը ճանաչելու և գնահատելու հմտությունները: • Խթանել թիմային աշխատանքը, ապրումակցումը և կառուցվածքային բանավեճ վարելու հմտությունները:
Անհրաժեշտ նյութեր	A4 չափի թղթեր, գրիչներ, ժամաչափ կամ հեռախոս՝ ժամանակը վերահսկելու համար, մկրատ, laptop, պրոյեկտոր, կպչուն թերթիկներ
Գործիքներ և աղբյուրներ	Ցուցադրվող պատկեր A՝ «Կտրված տեսարան» (Cropped view), ցուցադրվող պատկեր B՝ «Ամբողջական պատկերը» (Full reality), Էդվարդ դե Բոնոյի «Մտածողության վեց գլխարկներ» մեթոդը
Տևողություն	80-90 րոպե
Մասնակիցների թիվը	10-20 մասնակից
Ուսումնական նյութեր	Ցուցադրվող նկար A՝ «Կտրված տեսարան» (Cropped view) և նկար B՝ «Ամբողջական պատկերը» (Full reality), դերային քարտեր

Նկարագրություն

Գործնական աշխատանքը բաղկացած է 2 մասից:

Մաս 1. Կադրից դուրս. մտքի թակարդը շան օրինակով (15 րոպե)

Դասընթացավարը յուրաքանչյուր մասնակցի տալիս է մեկ ինքնակպչուն թերթիկ և գրիչ, ապա պրոյեկտորով ցուցադրում է պատկեր A-ն՝ կտրված տարբերակով: Մասնակիցներին առաջարկվում է ինքնուրույն պատասխանել երկու պարզ հարցի.
1. Ի՞նչ է տեղի ունենում լուսանկարում (ինչի՞ն է նայում շունը, ի՞նչ է անում և այլն)՝ մեկ նախադասությամբ
2. Ի՞նչ է զգում շունը (խաղա՞լ է ուզում, ուրա՞խ է, վախեցա՞ծ է և այլն)՝ ընդամենը մեկ բառով (1 րոպե):

Այնուհետև դասընթացավարն արագ հավաքում է բոլոր թերթիկները և փակցնում պատին կամ գրատախտակին այնպես, որ դրանք տեսանելի լինեն բոլորին: Բարձրաձայն կարդում է առավել տարբերվող կամ հաճախ կրկնվող պատասխաններից մի քանիսը, որոնք արտացոլում են խմբի ընդհանուր ընկալումը: Դրանից անմիջապես հետո դասընթացավարը փոխում է պատկերը և ցուցադրում պատկեր B-ն՝ «Ամբողջական պատկերը», որտեղ երևում է, որ շունը ցատկում է թենիսի գնդակի հետևից: Մասնակիցներին մի փոքր ժամանակ է տրվում արձագանքելու համար, որից հետո դասընթացավարը վարում է կարճ քննարկում այն մասին, թե ինչպես կարող է համատեքստի բացակայությունը մեզ մոլորեցնել: Ամփոփելով՝ նա ընդգծում է հիմնական միտքը. թվային աշխարհում լրատվամիջոցները հաճախ մեզ ներկայացնում են համատեքստից կտրված պատկերներ, մեջբերումներ կամ վերնագրեր՝ ակնթարթային հուզական արձագանք առաջացնելու համար, նախքան կհասցնենք քննադատաբար վերլուծել ստացած տեղեկատվությունը:

Այս ներածական փուլի հիմնական նպատակն է թեթև և հետաքրքիր տեսողական փորձի միջոցով ստեղծել անկաշկանդ մթնոլորտ, միաժամանակ գործնականում ցույց տալ քննադատական մտածողության կարևորությունը և տրամաբանական անցում ապահովել դեպի հաջորդ փուլում նախատեսված դեպքի ուսումնասիրությունը:

Մաս 2. Թիմային դեպքի ուսումնասիրություն՝ «Թակարդ շների... և մարդկանց համար» (45 րոպե)

Դասընթացավարը սկսում է Էդվարդ դե Բոնոյի «Մտածողության վեց գլխարկներ» մեթոդի վերաբերյալ կարճ տեսական ներկայացմամբ (5 րոպե), որը կիրառվելու է այս գործնական աշխատանքի ընթացքում: Նա դիմում է խմբին հետևյալ խոսքերով՝

«Դոկտոր Էդվարդ դե Բոնոյի կողմից 1985 թվականին ստեղծված այս հայտնի մեթոդն օգնում է մեզ դուրս գալ ավանդական բանավեճի շրջանակներից՝ խնդիրները դիտարկելով վեց տարբեր դիտանկյուններից: Յուրաքանչյուր գույն ներկայացնում է որոշակի դեր և դիտանկյուն. սպիտակը կենտրոնանում է փաստերի վրա, կարմիրը՝ հույզերի և ներքին զգացողության, սևը՝ ռիսկերի և քննադատական գնահատման, դեղինը՝ դրական կողմերի և լավատեսական մոտեցման, կանաչը՝ ստեղծագործական մտածողության և նոր գաղափարների վրա, իսկ կապույտը վերահսկում և համակարգում է մտածողության ամբողջ գործընթացը: Մեր գործնական աշխատանքի համար իրական գլխարկների փոխարեն պատրաստել ենք գունավոր դերային քարտեր, որոնց վրա հստակ ներկայացված է յուրաքանչյուր դերի նկարագրությունը: Հետևաբար, անհանգստանալու կարիք չկա, եթե մոռանաք որևէ մանրամասն»:

Այնուհետև դասընթացավարը մասնակիցներին բացատրում է, որ նրանք բաժանվելու են երեք թիմի: Ցանկության դեպքում նախորդ փուլում ձևավորված խմբերը կարող են փոփոխվել՝ աշխատանքն ավելի դինամիկ դարձնելու համար: Յուրաքանչյուր թիմ պատահականության սկզբունքով ստանում է նախապես կազմված դերերի երեք զույգերից մեկը՝ սպիտակ և կարմիր, սև և դեղին, կանաչ և կապույտ: Թիմերը կարող են բաժանվել երկու փոքր ենթախմբի, որոնցից յուրաքանչյուրը ստանձնում է իրեն հատկացված «գլխարկներից» մեկի դերը: Այս ձևաչափը հնարավորություն է տալիս միասին ձևավորել բազմակողմ և տարբեր դիտանկյուններ ներառող փաստարկներ:

Դասընթացավարը բաժանում է «Թակարդ՝ շների… և մարդկանց համար» դեպքի ուսումնասիրության տպված օրինակները և առաջարկում թիմերին ստանձնել իրենց հատկացված դերերը: Թիմային աշխատանքի համար տրվում է 15–20 րոպե, որի ընթացքում մասնակիցները պատմությունը վերլուծում են իրենց դերին համապատասխան դիտանկյունից՝ պարզելով, թե տվյալ դերն ինչի վրա է ուշադրություն դարձնում պատմության մեջ, ինչ հարցեր կարող է առաջադրել և ինչ պատասխաններ կարող է տալ:

Բոլոր փաստարկները գրի են առնվում թղթի վրա: Դրան հաջորդում է եզրափակիչ փուլը (15–20 րոպե), որի ընթացքում յուրաքանչյուր թիմ ընտրում է մեկ ներկայացուցչի՝ իր փաստարկները ներկայացնելու համար: Այնուհետև դասընթացավարն ամփոփում է աշխատանքը՝ վարելով քննարկում տարբեր դիտանկյունների հակադրության և տարբեր դերերի բախման շուրջ:

Դասընթացավարն ամփոփում է հիմնական եզրակացությունները՝

- Ճշմարտությունը երբեք միակողմանի չէ, ուստի ամբողջական պատկերը տեսնելու համար անհրաժեշտ է գիտակցաբար փոխել մեր դիտանկյունը և իրավիճակը դիտարկել տարբեր դերերից:

- Արհեստական բանականությունը կարող է ստեղծել չափազանց համոզիչ կեղծ բովանդակություն, ինչի պատճառով քննադատական մտածողությունն ու մեդիագրագիտությունն այսօր առավել կարևոր են, քան երբևէ:


Ամփոփիչ հարցեր

- Այսօր ստացած ո՞ր տեղեկությունն է ձեզ ամենից շատ զարմացրել և ինչու՞:
- Եթե մինչ այս դասընթացը սոցիալական ցանցերում հանդիպեիք կապված շան պատկերին, ինչպիսի՞ն կլիներ ձեր առաջին արձագանքը: Կկիսվեի՞ք այդ պատկերով:
- Ո՞ր դերը (գույնը) ստանձնելն էր ձեզ համար ամենադժվարը և ինչու՞:
- Ձեր կարծիքով՝ քննադատական մտածողությունը հմտությու՞ն է, որը հնարավոր է զարգացնել և կատարելագործել գործնական աշխատանքի միջոցով, թե՞ այն ավելի շատ բնածին հատկություն է՝ կա՛մ ունես, կա՛մ չունես:
- Ձեր կարծիքով՝ արդյոք քննադատական մտածողությունն այսօրվա աշխարհում պարզապես օգտակար հատկություն լինելուց վերածվե՞լ է կենսականորեն անհրաժեշտ հմտության:
- Մի աշխարհում, որտեղ արհեստական բանականությունը (ԱԲ) կարող է ստեղծել կատարյալ կեղծօքներ, ու՞մ և ինչի՞ն կարող ենք իրականում վստահել:


Աղբյուր՝ մշակվել է FECE-ի կողմից՝ VIBE նախագծի շրջանակում:

Դասընթացավարի համար

Նկար A (կտրված տեսարան)



Նկար B (ամբողջական պատկեր)



Բաշխիչ նյութ 1

Դեպքի ուսումնասիրություն. «Թակարդ շների... և մարդկանց համար»

Եվրոպական խոշոր քաղաքներից մեկում ուժեղ փոթորկի և հանկարծակի ջրհեղեղի ժամանակ սոցիալական ցանցերում արագորեն տարածվում է մի պատկեր, որտեղ երևում է ջրի բարձրացող մակարդակի մեջ լուսասյանը կապված սարսափահար շուն: Պատկերը տարածվում է հետևյալ գրառմամբ. «Մարդիկ փախչում և փրկում են իրենց՝ լքելով ամենաանմեղներին: Տարածե՛ք այս գրառումը, որպեսզի գտնենք դաժան տիրոջը»:

Մի քանի ժամվա ընթացքում գրառումը հազարավոր անգամներ տարածվում է, իսկ մեկնաբանությունների բաժնում առցանց վրդովմունքի մեծ ալիք է բարձրանում՝ ուղղված տեղի բնակիչների և նրանց՝ իբր անմարդկային վերաբերմունքի դեմ: Հաջորդ օրը պարզվում է, որ պատկերն ամբողջությամբ ստեղծվել է արհեստական բանականության (ԱԲ) միջոցով՝ օտարերկրյա օգտատիրոջ կողմից՝ բացառապես հետևորդների թիվն ավելացնելու նպատակով: Իրականում տվյալ քաղաքում տարհանումը կազմակերպված է եղել բարձր մակարդակով, և ոչ մի կենդանի չի տուժել: Սակայն մինչ ճշմարտության բացահայտվելը պատմությունն արդեն հայտնվել էր տարածաշրջանային լրատվական կայքերում, որոնք այն վերահրապարակել էին որպես հաստատված փաստ՝ առանց նույնիսկ տարրական ստուգում իրականացնելու:

Բաշխիչ նյութ 2

Դուք լիովին օբյեկտիվ եք և կենտրոնանում եք բացառապես հստակ փաստերի, տվյալների և ստուգված տեղեկատվության վրա:

? Ուղղորդող հարց ?

Ի՞նչ հավաստի տեղեկատվություն ունենք, և ինչ տվյալներ են մեզ պակասում:

Դուք արտահայտում եք միայն հույզերը, ներքին զգացողություններն ու բնազդային արձագանքները՝ առանց դրանք տրամաբանորեն հիմնավորելու անհրաժեշտության:

? Ուղղորդող հարց ?

Ի՞նչ հույզեր է առաջացնում այս սկանդալը, և ինչո՞ւ են մարդիկ այդքան բուռն արձագանքել:

Դուք հոռետես եք և կենտրոնանում եք թույլ կողմերի, թաքնված վտանգների ու հնարավոր ռիսկերի վրա:

? Ուղղորդող հարց ?

Ի՞նչ երկարաժամկետ ռիսկեր կարող է նման՝ ԱԲ-ի միջոցով ստեղծված ապատեղեկատվությունն առաջացնել հասարակության համար:

Դուք ծայրահեղ լավատես եք և կենտրոնանում եք տրամաբանական առավելությունների ու հնարավոր դրական արդյունքների վրա:

? Ուղղորդող հարց ?

Մարդկանց արձագանքի մեջ կա՞ որևէ դրական կողմ, և ինչ կարևոր դաս կարող ենք քաղել այս դեպքից:

Դուք ստեղծագործական գաղափարների շարժիչ ուժն եք, մտածում եք ընդունված շրջանակներից դուրս և առաջարկում նոր այլընտրանքներ ու լուծումներ:

? Ուղղորդող հարց ?

Ի՞նչ նորարարական լուծում կամ արշավ կարող ենք առաջարկել՝ երիտասարդներին սովորեցնելու, թե ինչպես ճանաչել ԱԲ-ի միջոցով իրականացվող խաբեությունները:

Դուք վարողն ու համակարգողն եք, հետևում եք գործընթացին, ամփոփում քննարկումը և առանձնացնում հիմնական եզրակացությունները:

? Ուղղորդող հարց ?

Ի՞նչ է այս դեպքը մեզ սովորեցնում այսօրվա թվային մեդիագրագիտության մասին:

3. Քաոսի ճարտարապետները
Խափանումից՝ դեպի պաշտպանություն

Զարգացվող հմտություններ և հիմնական հասկացություններ	• Քննադատական մտածողություն և մեդիագրագիտություն • Հաղորդակցման և թիմային աշխատանքի հմտություններ • Թվային միջավայրում պաշտպանության եղանակներ • Ապատեղեկատվության տարածման հնարքներ
Նպատակներ	• Մասնակիցներին հետաքրքիր մեթոդներով ծանոթացնել «Հակադարձ մտագրոհի» մեթոդին: • Տեսանելի դարձնել ապատեղեկատվության հիմնական բաղադրիչները՝ տեքստը, տեսողական նյութերը և տարածման ուղիները: • Խթանել ստեղծարար և քննադատական մտածողությունը՝ փորձելով հարցին նայել «վատ դերակատարի» տեսանկյունից: • Ձևավորել առօրյա կյանքում կիրառելի թվային պաշտպանության գործնական կանոններ:
Անհրաժեշտ նյութեր	Կպչուն թերթիկներ, գրիչներ, տարբեր գույների մարկերներ, մեծ թղթեր (առնվազն 6 թերթ), ժամաչափ կամ հեռախոս՝ ժամանակը վերահսկելու համար:
Գործիքներ և աղբյուրներ	Դասընթացավարների համար՝ «Հակադարձ մտագրոհ» մեթոդի համառոտ նկարագրությամբ հոդված:
Տևողություն	80–90 րոպե
Մասնակիցների թիվը	10–20 մասնակից

Նկարագրություն

Գործնական աշխատանքը բաղկացած է 2 մասից:

Մաս 1. Առաքելության խափանում (25 րոպե)

Դասընթացավարը սկսում է «Հակադարձ մտագրոհ» մեթոդի վերաբերյալ կարճ տեսական ներկայացմամբ (5 րոպե), որը կիրառվելու է այս գործնական աշխատանքի ընթացքում: Բացատրվում է, որ աշխատանքի համար յուրաքանչյուր մասնակցի անհրաժեշտ են կպչուն թերթիկներ և գրիչ, ինչպես նաև երեք մեծ թուղթ, որոնք նախապես տեղադրվում են սենյակի երեք տարբեր անկյուններում՝ մասնակիցների կուտակումից խուսափելու համար:

Դասընթացավարը մասնակիցներին առաջարկում է բաժանվել զույգերի: Եթե մասնակիցների ընդհանուր թիվը կենտ է, և որևէ մեկը մնում է առանց զույգի, նա միանում է զույգերից մեկին՝ որպես երրորդ անդամ: Այնուհետև դասընթացավարը դիմում է խմբին. «Այսօր «Հակադարձ մտագրոհ» մեթոդի միջոցով ամբողջությամբ շրջելու ենք խաղի կանոնները: Խնդիրը լուծելու ուղիներ փնտրելու փոխարեն՝ նախ սովորելու ենք, թե ինչպես կարելի է խնդիր ստեղծել: Դուք ստանձնելու եք թվային միջավայրում միտումնավոր խափանումներ իրականացնող անձանց, համակարգչային հանցագործների և օնլայն սադրիչների դերերը: Պատկերացրեք, որ ձեր նպատակն է համացանցում ստեղծել հնարավորինս անթերի, լայնածավալ և վտանգավոր ապատեղեկատվական արշավ, որպեսզի ամբողջ հասարակությունն անմիջապես հավատա դրան, և քաոս առաջանա: Սենյակի երեք անկյուններում տեսնում եք երեք մեծ թղթեր, որոնց վրա ներկայացված են լրատվական նյութի երեք բաղադրիչները՝ «Վերնագիր և տեքստ», «Տեսողական բովանդակություն» և «Տարածման ուղիներ և հնարքներ»: Սակայն մինչ դրանց մոտենալը, դուք կունենաք 5 րոպե՝ ինքնուրույն մտածելու և ձեր սկզբնական գաղափարները կպչուն թերթիկների վրա գրելու համար: Այնուհետև զույգերով պետք է հերթով մոտենաք բոլոր երեք անկյուններին և համապատասխան թղթերի վրա փակցնեք ձեր գրառումները: Կարևոր պայման կա. թղթերի վրա գրված գաղափարները չպետք է կրկնվեն: Նախքան ձեր թերթիկը փակցնելը, կարդացեք, թե ինչ են ձեզանից առաջ գրել մյուս մասնակիցները: Եթե ձեր գաղափարն արդեն գրված է, պետք է նորը մտածեք»:

Եթե մասնակիցները դժվարանում են գաղափարներ առաջարկել, դասընթացավարը կարող է մի քանի օրինակ բերել՝ նրանց ուղղորդելու համար, օրինակ՝ ուշադրություն գրավող և մոլորեցնող վերնագրեր, հուզական մանիպուլիացիայի հնարքներ, հորինված փորձագիտական մեջբերումներ, լուսանկարների կեղծում կամ փոփոխում, կեղծ հաշիվների ցանցեր:

Մասնակիցների կողմից գաղափարներն ինքնուրույն գրի առնելուց հետո (5 րոպե) սկսվում է գործնական աշխատանքի ակտիվ փուլը (10 րոպե): Զույգերը հերթով մոտենում են երեք անկյուններին, քննարկում իրենց գաղափարները, կարդում մյուսների գրառումները և կպչուն թերթիկները փակցնում համապատասխան բաժնում: Օրինակ՝ **«ՇՈԿ ԵՎ ՍԵՆՍԱՑԻԱ»**՝ վերնագրերի և տեքստային բովանդակության համար, **«AI դիփֆեյք»**՝ տեսողական բովանդակության համար, կամ **«վճարովի բոտեր»**՝ տարածման մեթոդների և հնարքների համար:

Վերջին 5 րոպեի ընթացքում մասնակիցները վերադառնում են իրենց տեղերը, իսկ դասընթացավարը բարձրաձայն կարդում է պատերին փակցված ամենաստեղծագործ կամ անհեթեթ հնարքներից մի քանիսը և վարում կարճ քննարկում այն մասին, թե որքան հեշտությամբ կարելի է թվային միջավայրում կեղծ տեղեկատվություն ստեղծել:

Մաս *2*. Թվային անվտանգության պատի կառուցում *(40* րոպե*)*

Դասընթացավարը բացատրում է, որ գործնական աշխատանքի երկրորդ մասում նախորդ փուլում բացահայտված ռիսկերն ու մանիպուլյացիոն հնարքները պետք է վերածել դրանցից պաշտպանվելու հստակ և կիրառելի եղանակների: Դրա համար մասնակիցները բաժանվում են երեք թիմի՝ հաշվի առնելով մասնակիցների ընդհանուր թիվը: Յուրաքանչյուր թիմ ընտրում է նախորդ փուլում կպչուն թերթիկներով լրացված երեք մեծ թղթերից մեկը և ստանում նոր՝ մեծ դատարկ թուղթ, տարբեր գույների մարկերներ և գրիչներ:

Դասընթացավարը ուղղորդում է թիմային աշխատանքը հետևյալ խոսքերով *(5* րոպե*)*.«Մինչ այս պահը դուք թվային միջավայրում միտումնավոր խափանումներ իրականացնողների դերում էիք և տեսաք, թե որքան հեշտությամբ կարելի է կեղծ տեղեկատվություն ստեղծել: Այժմ, սակայն, վերադառնում ենք ճշմարտության և մեդիագրագիտության կողմը: Յուրաքանչյուր թիմ վերցնում է սենյակի անկյուններում տեղադրված՝ կպչուն թերթիկներով լրացված մեծ թղթերից մեկը: Ձեր խնդիրն է ուսումնասիրել հավաքված հնարքները և մտածել, թե ինչպես կարելի է դրանք կանխել կամ դրանցից պաշտպանվել: Նոր մեծ թղթի վրա պետք է գրեք պաշտպանության հիմնական կանոնները՝ պահպանելով նույն բաժնի վերնագիրը՝ «Վերնագիր և տեքստ», «Տեսողական բովանդակություն» կամ «Տարածման ուղիներ և հնարքներ»: Աշխատանքն ավելի հետաքրքիր դարձնելու համար առաջարկում եմ չսահմանափակվել միայն գրելով, այլ մարկերների օգնությամբ պատկերել և նկարել ձեր գաղափարները: Կարող եք նկարել վահաններ, զտիչներ, խոշորացույցներ և այլ պատկերներ: Թիմային աշխատանքի համար ունեք *20* րոպե»:

Թիմային աշխատանքի ավարտից հետո (20 րոպե) սկսվում է եզրափակիչ փուլը (15 րոպե): Յուրաքանչյուր թիմից նախապես ընտրված ներկայացուցիչը ներկայանում է խմբին, ներկայացնում մեդիագրագիտությանն ուղղված իր թիմի տեսողական լուծումները, որից հետո երեք մեծ թղթերը կողք կողքի փակցվում են պատին կամ տեղադրվում հատակին: Այսպիսով, երեք մասերը տեսողականորեն միավորվում են՝ կազմելով մեկ ամբողջական «Թվային անվտանգության պատ»:

Դասընթացավարն ամփոփում է հիմնական եզրակացությունները՝

- Մեզանից յուրաքանչյուրն ինքն է ընտրում՝ լինել քաոս ստեղծող, թե թվային միջավայրի պաշտպան: Մեր ամենօրյա փոքր որոշումներն անգամ կարող են էական ազդեցություն ունենալ:
- «Հակադարձ մտագրոհ» մեթոդը ցույց է տալիս, որ համացանցում կեղծ տեղեկատվություն ստեղծելը բավականին հեշտ է: Սակայն երբ հասկանում ենք դրա ստեղծման և տարածման մեխանիզմները, կարող ենք գիտակցաբար ձևավորել դրանցից պաշտպանվելու արդյունավետ միջոցներ:

Ամփոփիչ քննարկման հարցեր

- Ի՞նչն այսօր ձեզ ամենաշատը զարմացրեց և ինչու՞:
- Երեք կատեգորիաներից ո՞րը՝ «Վերնագիր և տեքստ», «Տեսողական բովանդակություն» կամ «Տարածում և հնարքներ», ձեր կարծիքով ամենահեշտն էր մանիպուլյացիայի ենթարկել և ինչու՞:
- Եթե պատին փակցված թերթիկներից միայն մեկը ընտրեիք, ո՞րն, ըստ ձեզ, կարող է ընդամենը մի քանի ժամվա ընթացքում ամենամեծ զանգվածային խուճապը առաջացնել:
- Երբ «սաբոտաժները» վերածում էիք «պաշտպանության կանոնների», ի՞նչն էր ձեզ համար ամենադժվարը:
- Թե՛ կեղծ տեղեկատվություն ստեղծողի, թե՛ պաշտպանության «ճարտարապետի» դերում լինելուց հետո, ըստ ձեզ, ո՞րն է մեդիագրագիտության ամենակարևոր հմտությունը, որը կարող է օգնել հեշտությամբ մանիպուլյացիայի չենթարկվել:
- Եթե հնարավորություն ունենայիք ձեր մշակած «ոսկե կանոններից» միայն մեկը որպես ինքնաբերաբար գործող «գերհմտություն» ներդնել յուրաքանչյուր մարդու մտածողության մեջ, ո՞րը կընտրեիք:

Աղբյուր՝ մշակվել է FECE-ի կողմից՝ VIBE նախագծի շրջանակում:

4. Արհեստական բանականությունը լրագրության մեջ Հնարավորությու՞ն, թե՞ սպառնալիք

Զարգացվող հմտություններ և հիմնական հասկացություններ	• Քննադատական մտածողություն • Մեդիագրագիտություն • Լրագրության էթիկական սկզբունքներ • Հաղորդակցման և թիմային աշխատանքի հմտություններ
Նպատակներ	• Խթանել քննադատական մտածողությունը՝ մեդիայում արհեստական բանականության դերի վերաբերյալ: • Մասնակիցներին ծանոթացնել լրագրության մեջ արհեստական բանականության չարաշահման իրական դեպքերին: • Զարգացնել հավաստի և մանիպուլյատիվ բովանդակությունը տարբերակելու հմտությունները: • Խթանել մեդիայի արդիական թեմաների շուրջ հիմնավորված քննարկումներ վարելու հմտությունները:
Անհրաժեշտ նյութեր	A4 չափի թղթեր, գրիչներ, ժամաչափ կամ հեռախոս՝ ժամանակը վերահսկելու համար:
Տևողություն	90–100 րոպե
Մասնակիցների թիվը	15–25 մասնակից
Ուսումնական նյութեր	Դեպքի ուսումնասիրություն՝ «Շումախեր.առաջին (ոչ) իրական հարցազրույցը»

Նկարագրություն

Գործնական աշխատանքը բաղկացած է 3 մասից:

Մաս 1. Ճշմարտությու՞ն, թե՞ սուտ (15 րոպե)

Դասընթացավարը բարձրաձայն կարդում է լրագրության մեջ արհեստական բանականության կիրառման վերաբերյալ երեք պնդում, որոնցից երկուսը հորինված են, իսկ մեկը՝ իրական: Մասնակիցները պետք է որոշեն, թե պնդումներից որն է իրական՝ ձեռք բարձրացնելով և քվեարկելով:

Քվեարկությունն անցկացվում է միայն այն բանից հետո, երբ դասընթացավարը կարդում է բոլոր երեք պնդումները, այլ ոչ թե յուրաքանչյուր պնդումից հետո: Այնուհետև դասընթացավարը բացահայտում է ճիշտ պատասխանը՝ Microsoft-ի դեպքը, համառոտ ներկայացնում դրա մանրամասները և վարում կարճ քննարկում (մինչև 5 րոպե)՝ պարզելու մասնակիցների վերաբերմունքը ներկայացված երեք պնդումների նկատմամբ:

Պնդում 1 (Ճիշտ) «Խոշոր տեխնոլոգիական ընկերություններից մեկը աշխատանքից ազատել է իր լրատվական հարթակի գրեթե 80 լրագրողի և նրանց ամբողջությամբ փոխարինել արհեստական բանականությամբ: Դրանից կարճ ժամանակ անց ալգորիթմը սկսել է կայքում միլիոնավոր օգտատերերի համար հրապարակել լուրեր բռնված ջրահարսների և «Մեծ ոտք» (Bigfoot) առասպելական արարածին տեսնելու դեպքերի մասին»:
Պնդում 2 (Սխալ) «Արիա անունով արհեստական բանականության համակարգին հաջողվել է կանխատեսել Դոնալդ Թրամփի դատավարության երդվյալ ատենակալների կազմում ընդգրկվելիք բոլոր 12 անձանց անունները՝ վերլուծելով միայն վերջին 5 տարիների ընթացքում Facebook-ում նրանց հրապարակային մեկնաբանությունները»:
Պնդում 3 (Սխալ) «Աշխարհի առաջատար թերթերից մեկը հայտարարել է, որ 2025 թվականից այլևս աշխատանքի չի ընդունելու սոցիալական ցանցերում 10 000-ից պակաս հետևորդ ունեցող լրագրողների, քանի որ իր արհեստական բանականության ալգորիթմը ցույց է տվել, որ միայն մեծ ազդեցություն ունեցող հեղինակները կարող են նորությունների նկատմամբ «իրական» վստահություն ձևավորել»:

Ճիշտ պնդման մանրամասները. Խոսքը Microsoft ընկերության և նրա MSN լրատվական հարթակի մասին է: 2020 թվականին ընկերությունն իսկապես աշխատանքից ազատել է մոտ 80 լրագրողի և նրանց աշխատանքը փոխանցել արհեստական բանականության ալգորիթմի, որն ընտրում և հրապարակում է նորություններ ամբողջ աշխարհում միլիոնավոր օգտատերերի համար: Դրանից կարճ ժամանակ անց կայքում սկսել են հայտնվել այնպիսի նյութեր, որոնք որևէ խմբագիր չէր հրապարակի:

Մաս 2. Թիմային դեպքի ուսումնասիրություն՝ «Շումախեր. առաջին (ոչ) իրական հարցազրույցը» (40 րոպե)

Դասընթացավարը մասնակիցներին բաժանում է 5 խմբի՝ յուրաքանչյուրում մոտ 4 մասնակից: Յուրաքանչյուր խումբ ստանում է «Շումախեր. առաջին (ոչ) իրական հարցազրույցը» դեպքի նկարագրությամբ և երեք հարցերով տպված թերթիկ:

Խմբերը կարդում են նյութը (5 րոպե), այնուհետև քննարկում են հարցերը և գրի առնում իրենց պատասխանները (15 րոպե): Դրան հաջորդում է արդյունքների ներկայացումն ու քննարկումը (20 րոպե): Դասընթացավարը ներկայացնում է առաջին հարցը, որից հետո յուրաքանչյուր խումբ արտահայտում է իր տեսակետը, և տեղի է ունենում կարճ քննարկում: Նույն ընթացակարգը հերթականությամբ կրկնվում է երկրորդ և երրորդ հարցերի համար:

Մաս 3. Բանավեճ (30 րոպե)

Դասընթացավարը մասնակիցներին պատահականության սկզբունքով բաժանում է երկու թիմի՝ արհեստական բանականության կիրառմանը «Կողմ» և «Դեմ» լրագրության մեջ: Յուրաքանչյուր թիմ պետք է պաշտպանի իրեն հատկացված դիրքորոշումը՝ անկախ թիմի անդամների անձնական տեսակետներից:

Հարցը լսելուց հետո թիմերին տրվում է 3 րոպե՝ այն միմյանց հետ քննարկելու համար: Յուրաքանչյուր թիմ ընտրում է մեկ խոսնակ, որը ներկայացնում է թիմի փաստարկները (2 րոպե): Յուրաքանչյուր նոր հարցի համար ընտրվում է նոր խոսնակ: Դրան հաջորդում է տվյալ հարցի շուրջ ազատ քննարկում (3 րոպե), որից հետո անցում է կատարվում հաջորդ հարցին՝ յուրաքանչյուր թիմից նոր խոսնակի մասնակցությամբ:

Հարց 1. Արդյո՞ք արհեստական բանականությունը պետք է փոխարինի լրագրողներին առօրյա նորություններ պատրաստելիս (օրինակ՝ եղանակի տեսություն, մարզական արդյունքներ):

Հարց 2. Արդյո՞ք լրատվամիջոցներում արհեստական բանականության միջոցով ստեղծված ամբողջ բովանդակությունը պարտադիր պետք է ունենա հատուկ նշում կամ «Ստեղծված է արհեստական բանականության միջոցով» գրառումը:

Հարց 3. Կարո՞ղ է արհեստական բանականությունն ավելի անաչառ լինել, քան մարդը՝ լրագրողական նյութեր գրելիս և իրադարձությունները լուսաբանելիս:

Դասընթացավարն ամփոփում է հիմնական եզրակացությունները՝

- Տեխնոլոգիան գործիք է, ոչ թե մարդուն փոխարինող միջոց:
- Արհեստական բանականությունը կարող է տեղեկատվություն ստեղծել, սակայն դրա ճշմարտացիության և բարոյական սկզբունքների պահպանումը կարող է ապահովել միայն մարդը:

Ամփոփիչ քննարկման հարցեր

- Այսօր ստացած ո՞ր տեղեկությունն է ձեզ ամենից շատ զարմացրել և ինչու՞:
- Ձեր կարծիքով՝ ընթերցողները կարո՞ղ են ճանաչել ԱԲ-ի միջոցով ստեղծված բովանդակությունը:
- Ինչպե՞ս կարձագանքեիք, եթե պարզեիք, որ ձեր հետևած լրատվամիջոցը գաղտնի օգտագործել է ԱԲ՝ առանց այդ մասին իր ընթերցողներին տեղեկացնելու:
- Ձեր կարծիքով՝ ինչու՞ են էթիկական կանոնները հաճախ հետ մնում տեխնոլոգիական նորարարություններից:
- Եթե ստիպված լինեիք լրագրության մեջ ԱԲ-ի կիրառման միայն մեկ կանոն սահմանել, ո՞րն այն կլիներ:

Աղբյուր՝ մշակվել է FECE-ի կողմից՝ VIBE նախագծի շրջանակում:

Բաշխիչ նյութ 1

Միխայել Շումախերը գերմանացի լեգենդար «Ֆորմուլա 1»-ի ավտոարշավորդ է, աշխարհի յոթակի չեմպիոն և «Գրան պրիի» 91 մրցավազքի հաղթող: 2013 թվականին դահուկներով սահելիս տեղի ունեցած ծանր վթարից հետո նա գտնվում է շուրջօրյա խնամք պահանջող վիճակում, իսկ նրա ընտանիքը 10 տարի շարունակ որևէ տեղեկություն չի տրամադրել լրատվամիջոցներին:

2023 թվականի ապրիլին գերմանական **«Die Aktuelle»** ամսագիրը հրապարակեց **«Միխայել Շումախեր. առաջին հարցազրույցը»** վերնագրով նյութ՝ մանր տառերով ավելացնելով **«Այնքան համոզիչ է հնչում, կարծես իրական լինի»** ենթավերնագիրը: Նյութում ներկայացված էին Շումախերին վերագրվող «պատասխաններ»՝ նրա առողջական վիճակի և առօրյայի վերաբերյալ: Իրականում ամբողջ հարցազրույցը ստեղծվել էր արհեստական բանականության միջոցով՝ **Character AI** հարթակի օգնությամբ, որին հանձնարարվել էր ընդօրինակել Շումախերին: Այն փաստը, որ հարցազրույցն իրական չէ, նշված էր միայն հոդվածի վերջում՝ մանր և հեշտությամբ աննկատ մնացող տառերով:

Հրապարակումը միջազգային սկանդալի և մեծ վրդովմունքի պատճառ դարձավ՝ մարդու արժանապատվության խախտման պատճառով: Funke հրատարակչական խումբը պաշտոնապես ներողություն խնդրեց Շումախերի ընտանիքից՝ հրապարակված նյութը որակելով որպես մոլորեցնող և լրագրողական չափանիշներին չհամապատասխանող: Դրա հետևանքով անմիջապես աշխատանքից ազատվեց ամսագրի գլխավոր խմբագիր Աննե Հոֆմանը, որը ղեկավարում էր ամսագիրը 2009 թվականից: Շումախերի հարազատները նաև դատական հայց ներկայացրին լրատվամիջոցի դեմ և շահեցին դատը. Մյունխենի դատարանը նրանց օգտին սահմանեց 200 000 եվրոյի փոխհատուցում:

Հարց 1. Ամսագիրը մանր տառերով նշել էր, որ հարցազրույցը **«Այնքան համոզիչ է հնչում, կարծես իրական լինի»**: Արդյո՞ք սա բավարար է՝ հրապարակումն ընթերցողների նկատմամբ ազնիվ համարելու համար:
Հարց 2. Ձեր կարծիքով՝ այս դեպքում ո՞վ պետք է կրի լսարանին մոլորեցնելու հիմնական պատասխանատվությունը՝ ծրագիրը (քանի որ դրա ստեղծած բովանդակությունը չափազանց համոզիչ է), լրագրողը (ով պատրաստել է հարցերը), գլխավոր խմբագիրը (ով հաստատել է սենսացիոն վերնագիրը), թե՞ մեկ ուրիշը:
Հարց 3. Կա՞ն իրավիճակներ, երբ նման բովանդակություն ստեղծելու համար ԱԲ-ի կիրառումը կարող է ընդունելի լինել:

5.Ստեղծի՛ր ճշմարտության քո տարբերակը

Զարգացվող հմտություններ և հիմնական հասկացություններ	• Զարգացնել քննադատական մտածողությունն ու տրամաբանական դատողություններ անելու կարողությունը: • Հասկանալ, թե ինչպես կարելի է ձևավորել և մանիպուլյացիայի ենթարկել տեղեկատվությունը: • Զարգացնել փաստարկելու և սեփական տեսակետը հիմնավորելու հմտությունները: • Զարգացնել ստեղծագործական և վերլուծական մտածողությունը: • Զարգացնել թիմային աշխատանքի և հաղորդակցման հմտությունները:
Նպատակներ	• Օգնել մասնակիցներին հասկանալ, թե ինչպես են ստեղծվում պատմությունները և որքան հեշտությամբ կարելի է մանիպուլյացիայի ենթարկել տեղեկատվությունը, ինչպես նաև զարգացնել ստեղծված «ճշմարտությունները» քննադատաբար գնահատելու կարողությունը: • Օգնել մասնակիցներին տարբերակել փաստերը, ենթադրությունները և մեկնաբանությունները: • Բացահայտել տեղեկատվության և մեդիա բովանդակության մեջ կիրառվող մանիպուլյացիայի տարածված հնարքները: • Տեղեկատվության հավաստիությունը գնահատելու համար կիրառել հստակ և հաջորդական հարցադրումներ:
Անհրաժեշտ նյութեր	Մարկերներ, մեծ թղթեր, կպչուն ժապավեն:
Գործիքներ և աղբյուրներ	Դասընթացավարի կողմից նախապես պատրաստված նյութեր՝ չեզոք փաստերի, մոլորեցնող տարրերի, հուզական արձագանք առաջացնող բովանդակության և թեմայի հետ կապ չունեցող տեսողական նյութերի համադրությամբ:
Տևողություն	90-95 րոպե
Մասնակիցների թիվը	12-24 մասնակից
Ուսումնական նյութեր	Փաստերի ստուգման ուղեցույց, քարտերի օրինակների հավաքածու:

Նկարագրություն

Գործնական աշխատանքը բաղկացած է 5 մասից:

Նախապատրաստում

Մասնակիցները բաժանվում են փոքր խմբերի՝ յուրաքանչյուրում 3–4 հոգի: Յուրաքանչյուր խումբ պատահականության սկզբունքով ստանում է քարտերի հավաքածու, որը կարող է ներառել՝

- իրական փաստ,
- պատահականորեն ընտրված պատկեր,
- բանալի բառ (օրինակ՝ «ճգնաժամ», «առողջություն», «տեխնոլոգիա»),
- վերնագրի հատված,
- վիճակագրական տվյալ (որը կարող է լինել ոչ հստակ կամ թերի):

Մաս 1. Ստեղծել պատմությունը (20 րոպե)

Յուրաքանչյուր խումբ պետք է օգտագործի իրեն տրված բոլոր տարրերը՝ համոզիչ պատմություն կամ «լրատվական նյութ» ստեղծելու համար: Մասնակիցները կարող են ստեղծագործաբար մեկնաբանել փաստերը, լրացուցիչ համատեքստ ավելացնել և միմյանց հետ կապել իրականում իրար հետ կապ չունեցող տարրերը: Նպատակն է պատմությունը ներկայացնել հնարավորինս համոզիչ և արժանահավատ:

Դասընթացավարը խրախուսում է ստեղծագործական մոտեցումը, սակայն աշխատանքի ընթացքում շարունակաբար ուղղորդող հարցեր է տալիս, օրինակ՝

- Ինչպե՞ս եք միմյանց կապում այս տարրերը:
- Ո՞րն է ձեր պատմության հիմնական ասելիքը:
- Ի՞նչն է այս պատմությունը դարձնում արժանահավատ:
- Մի ուղղեք և մի գնահատեք մասնակիցների ստեղծած բովանդակությունը:
- Միջամտել և ուղղորդել խմբերին միայն այն դեպքում, երբ նրանք ամբողջությամբ շեղվում են առաջադրանքից:

Մաս 2. Ներկայացնել և համոզել (15 րոպե)

Խմբերն իրենց ստեղծած պատմությունները ներկայացնում են մյուս մասնակիցներին այնպես, կարծես դրանք իրական և հավաստի լրատվական նյութեր են:

Խորհուրդներ դասընթացավարին. խստորեն հետևել ժամանակին և չգնահատել ներկայացված պատմությունները: Փոխարենը կատարել չեզոք դիտարկումներ, օրինակ՝ «Նկատում եմ, որ այստեղ վիճակագրական տվյալներ եք օգտագործել», «Այս հատվածում հուզական երանգավորում ունեցող բառապաշար է կիրառվել»:

Մաս 3. Հետաքննություն (20 րոպե)

Յուրաքանչյուր պատմության ներկայացումից հետո մյուս խմբերը ստանձնում են «փաստեր ստուգողների» դերը: Նրանք պետք է քննադատական հարցեր ուղղեն, բացահայտեն անհամապատասխանությունները և կասկածի տակ դնեն ոչ հստակ կամ մանիպուլյատիվ տարրերը: Խմբերին տրվում է Բաշխիչ նյութ 1. «Փաստերի ստուգման ուղեցույց», որի օգնությամբ նրանք վերլուծում են ներկայացված պատմությունները, բացահայտում անհամապատասխանությունները և հարցադրումների միջոցով ստուգում ոչ հստակ կամ մանիպուլյատիվ տարրերը:

Խորհուրդ դասընթացավարին. յուրաքանչյուր խմբի դեպքում Մաս 2-ը և Մաս 3-ը իրականացնել հաջորդաբար՝ պատմության ներկայացումից անմիջապես հետո անցնելով դրա ստուգմանն ու քննարկմանը, այլ ոչ թե նախապես լսել բոլոր խմբերի ներկայացումները:

Մաս 4. Բացահայտում (10 րոպե)

Պատմությունները ներկայացրած խմբերը բացահայտում են, թե իրենց օգտագործած տարրերից որոնք էին իրական, որոնք՝ փոփոխված կամ մանիպուլյացիայի ենթարկված, իսկ որոնք՝ ամբողջությամբ հորինված: Դասընթացավարը վարում է ամփոփիչ քննարկում՝ անդրադառնալով այն հարցին, թե մասնակիցներն ինչու և որքան հեշտությամբ հավատացին ներկայացված պատմություններին կամ, հակառակը, կասկածի տակ դրեցին դրանք:

Մաս 5. Ամփոփում և անդրադարձ (15–20 րոպե)

- Իրականացնել ամփոփիչ քննարկումը բաց հարցերի միջոցով:
- Օգնել մասնակիցներին բացահայտել մանիպուլյացիայի կիրառված հնարքները՝ հուզական ազդեցություն, տվյալների ընտրովի ներկայացում, հեղինակավոր անձանց կամ աղբյուրների վկայակոչում, համատեքստի բացակայություն:
- Խուսափել «ճիշտ պատասխաններ» տալուց՝ կենտրոնանալով քննարկման, վերլուծության և գիտակցված մոտեցման ձևավորման վրա:

Կառուցվածքային անդրադարձ (Կոլբի ուսումնառության շրջափուլ)

Մասնակիցներն ամփոփում և վերլուծում են գործնական աշխատանքի ընթացքում ձեռք բերած փորձը՝ անցնելով հետևյալ չորս փուլերով՝

1. Անմիջական փորձ
- Ի՞նչ տեղի ունեցավ գործնական աշխատանքի ընթացքում:
- Ի՞նչ դեր էիք ստանձնել ձեր խմբում:

2. Փորձի վերլուծություն
- Ի՞նչ էիք զգում պատմությունը ստեղծելիս կամ վերլուծելիս:
- Ո՞ր պահերն էին ձեզ համար համոզիչ, իսկ որո՞նք՝ շփոթեցնող:

3. Եզրահանգումներ և ընդհանրացում
- Ինչու՞ էին որոշ պատմություններ ավելի արժանահավատ թվում, քան մյուսները:
- Մանիպուլյացիայի ի՞նչ հնարքներ էին կիրառվել՝ հուզական ազդեցություն, թվային տվյալներ, հեղինակավոր անձանց կամ աղբյուրների վկայակոչում, համատեքստի բացակայություն:
- Ո՞ր պահերին էր քննադատական մտածողությունը թուլանում, իսկ ո՞ր պահերին՝ ուժեղանում:

4. Սովորածի գործնական կիրառում

- Ինչպե՞ս կարող եք այս փորձը կիրառել իրական կյանքում:
- Ի՞նչ կփոխեք նորություններ, սոցիալական ցանցերում հրապարակումներ և այլ տեղեկատվություն ստանալու ու ընկալելու ձեր մոտեցման մեջ:
- Ի՞նչ կարող է օգնել ձեզ խուսափել ապատեղեկատվության ազդեցությունից:

Ամփոփիչ քննարկման հարցեր

- Հե՞շտ էր արդյոք արժանահավատ պատմություն ստեղծելը: Ինչու՞:
- Ի՞նչն էր որոշ պատմություններ մյուսներից ավելի համոզիչ դարձնում:
- Հավատացի՞ք որևէ կեղծ տեղեկատվության: Ինչու՞:
- Իրական կյանքում ինչպե՞ս կարող է տեղեկատվությունը մանիպուլյացիայի ենթարկվել:
- Ի՞նչ հմտություններ են անհրաժեշտ մոլորության մեջ չընկնելու համար:
- Մանիպուլյացիայի ո՞ր հնարքներն էին առավել ազդեցիկ:
- Ո՞ր պահին դադարեցիք կասկածի տակ դնել ստացած տեղեկատվությունը:
- Արդյո՞ք հույզերն ազդեցին ձեր դատողությունների վրա:
- Ինչո՞վ է այս գործնական աշխատանքը նման իրական կյանքում հանդիպող նորություններին և սոցիալական ցանցերի բովանդակությանը:

Աղբյուր՝ մշակվել է YIC-ի կողմից՝ VIBE նախագծի շրջանակում:

Բաշխիչ նյութ 1

Փաստերի ստուգման ուղեցույց

1. Փաստերի վերաբերյալ հարցեր (Ի՞նչ է մեզ հայտնի)

- Ո՞րն է այս տեղեկատվության աղբյուրը:
- Հնարավո՞ր է այս պնդման հավաստիությունը ստուգել այլ՝ անկախ աղբյուրների միջոցով:
- Կա՞ն այս պնդումը հաստատող տվյալներ կամ ապացույցներ:

2.Տրամաբանական վերլուծություն (Ի՞նչ կապ կա ներկայացված տեղեկությունների միջև)

- Արդյո՞ք ներկայացված տեղեկությունները տրամաբանորեն կապված են միմյանց:
- Արդյո՞ք ներկայացված փաստերը հիմնավորում են արված եզրակացությունը:
- Արդյո՞ք դատողությունների մեջ կան բացթողումներ կամ հակասություններ:

3. Բացակայող տեղեկատվության վերլուծություն (Ի՞նչ չի ասվում)

- Ի՞նչ կարևոր տեղեկատվություն է բացակայում:
- Ի՞նչ այլ բացատրություններ կարող են լինել:
- Ի՞նչ լրացուցիչ համատեքստ կարող է փոխել ներկայացված տեղեկատվության ընկալումը:

Բաշխիչ նյութ 2

Քարտերի օրինակների հավաքածու

Փաստ

Երիտասարդների՝ էկրանի առջև անցկացրած օրական միջին ժամանակը մոտավորապես 6 ժամ է:

Բանալի բառ

Ճգնաժամ
Տեխնոլոգիա
Առողջություն

Վերնագրի հատված

- «...մասնագետները մտահոգություն են հայտնում»:
- «...անսպասելի արդյունքներ են բացահայտվել»:
- «...համայնքում բուռն արձագանք է առաջացել»:

Վիճակագրական տվյալ

72%

3ից 1

45%

Պատկեր



Փաստ

Տեղի զբոսայգին վերանորոգվել է 2025 թվականին:

6. Տեղեկատվական փակ շրջանակի մարտահրավերը

Զարգացվող հմտություններ և հիմնական հասկացություններ	• Քննադատական մտածողություն • Հակամարտությունների կառավարում • Տրամաբանական կողմնակալությունների բացահայտում • Տարբեր տեսակետներ դիտարկելու կարողություն
Նպատակներ	• Սոցիալական միջավայրում կիրառվող մանիպուլյատիվ հաղորդակցման հնարքները բացահայտելու հմտությունների զարգացում: • Օբյեկտիվ փաստերը ավելորդ և շեղող տեղեկատվությունից տարբերակելու կարողության զարգացում: • Փոփոխվող տեղեկատվական պայմաններում արագ որոշումներ կայացնելու կարողության զարգացում:
Անհրաժեշտ նյութեր	Խաղային զառ, գրիչներ, թուղթ, փոքրիկ մուրճ (ըստ ցանկության):
Գործիքներ և աղբյուրներ	«Համատեքստի վերացման» մեթոդը
Տևողություն	50-60 րոպե
Մասնակիցների թիվը	8-12 մասնակից
Ուսումնական նյութեր	Խաղի կանոններն ու դերերը, քարտեր, «Զտիչ» խմբի դիտարկման ձևաթուղթ:

Նկարագրություն

Նախապատրաստում (5 րոպե)

Մասնակիցներին բաժանեք երկու ակտիվ խմբի՝ A և B, և երրորդ՝ «Վերլուծողներ» խմբի:

Եռակողմ դեպքի ուսումնասիրություն (5 րոպե)

Յուրաքանչյուր խումբ ստանում է որևէ սոցիալական թեմայի վերաբերյալ դեպքի նկարագրություն (օրինակ՝ գենդերային հավասարություն): Քարտում ներկայացված են «Հիմնական փաստը» և այն շեղող երեք տեսակի տեղեկություններ՝ տնտեսական, մշակութային և քաղաքական:

Մաս 1. Արձագանք (10 րոպե)

Խմբերը բեմադրում են իրավիճակ՝ առաջնորդվելով իրենց տրված «Գաղտնի նպատակով» (օրինակ՝ «Ռադիկալներ»՝ արմատական փոփոխությունների կողմնակիցներ, ընդդեմ «Պրագմատիկների»՝ գործնական մոտեցման կողմնակիցների) և իրենց փաստարկները հիմնավորելու համար օգտագործելով տրամադրված շեղող տեղեկությունները:

Մաս 2. Տեղեկատվական մարտահրավեր (5 րոպե)

Դասընթացավարը խմբերին տալիս է նոր փաստ պարունակող «Անսպասելի տեղեկություն» քարտ, որը հակասում է երկու խմբերի գաղտնի նպատակներին: Խմբերը պետք է անմիջապես հարմարեցնեն իրենց փաստարկները նոր տեղեկությանը՝ շարունակելով մնալ իրենց դերերում: Սա նրանց ստիպում է կա՛մ ավելի խորքային և բազմակողմանի դատողություններ անել, կա՛մ դիմել տրամաբանական սխալների:

Մաս 3. Վերլուծություն (10 րոպե)

«Վերլուծողները» պետք է բացահայտեն, թե ինչ մանիպուլյացիոն հնարքներ կամ տրամաբանական սխալներ են կիրառվել, ինչպես նաև փորձեն կռահել երկու խմբերի գաղտնի նպատակները:

Ամփոփիչ քննարկում (15–20 րոպե)

Վերջում անցկացվում է քննարկում՝ վերլուծելու, թե ինչպես է տեղեկատվությունը խեղաթյուրվել, և ինչ զգացողություններ են ունեցել մասնակիցները, երբ նոր փաստերը հակասել են իրենց խմբի «գաղտնի նպատակին»:

Ամփոփիչ քննարկման հարցեր

- Որքանո՞վ էր դժվար շարունակել առաջնորդվել ձեր «գաղտնի նպատակով», երբ ստացաք նոր, անսպասելի փաստ պարունակող քարտը:
- Ինչու՞ էին շեղող տեղեկություններն այդքան համոզիչ լսարանի համար:
- Իրական կյանքում ինչպե՞ս կարող ենք հանրային քննարկումներում բացահայտել տարբեր կողմերի թաքնված նպատակները:
- Ինչո՞վ է այս խաղում տեղի ունեցածը նման սոցիալական ցանցերի ալգորիթմների ստեղծած տեղեկատվական փակ շրջանակներին, երբ մեզ շարունակաբար ներկայացվում է հիմնականում այնպիսի տեղեկատվություն, որը համապատասխանում է մեր արդեն ձևավորված տեսակետներին կամ նախասիրություններին:
- Երբ «Տեղեկատվական շրջադարձի» ընթացքում ներկայացվեց միակողմանի տեղեկատվություն, ինչպե՞ս այն ազդեց ձեր ընտրությունների վրա: Ինչպե՞ս կարող ենք լավագույնս պաշտպանվել համացանցում նման մանիպուլյացիաներից և ալգորիթմների միջոցով մեզ ներկայացվող շեղող տեղեկատվությունից:

Աղբյուր՝ մշակվել է YIC-ի կողմից՝ VIBE նախագծի շրջանակում:

Դասընթացավարի համար

Բաժանում խմբերի

Մասնակիցներին բաժանեք երեք խմբի՝ A թիմ, B թիմ և «Վերլուծողներ»:
«Վերլուծողներին» տվեք գրիչներ և թուղթ:

Քարտի և շեղող տեղեկության ընտրություն

Ընտրեք քարտերից մեկը և բարձրաձայն կարդացեք «Հիմնական իրավիճակը»: Այնուհետև նետեք զառը՝

🎲 **1 կամ 2 =** 1. Տնտեսական բնույթի շեղող տեղեկություն
🎲 **3 կամ 4 =** 2. Մշակութային բնույթի շեղող տեղեկություն
🎲 **5 կամ 6 =** 3. Քաղաքական բնույթի շեղող տեղեկություն

Գաղտնի նպատակների բաշխում

Թիմերին թղթի վրա տրամադրեք իրենց «Գաղտնի նպատակները» (կամ յուրաքանչյուր թիմին առանձին մոտենալով՝ բանավոր հայտնեք դրանք): Մտածելու և իրենց դիրքորոշումը ձևավորելու համար նրանց տվեք 3 րոպե:

Մաս 1 (10 րոպե)

Սկսեք բանավեճը: Թիմերը պետք է ներկայացնեն իրենց տեսակետները՝ փաստարկները կառուցելով ընտրված շեղող տեղեկության շուրջ:

Մաս 2. Տեղեկատվական մարտահրավեր (5 րոպե)

Բանավեճի ամենաթեժ պահին փոքրիկ մուրճով հարվածեք սեղանին կամ ծափ տվեք և հայտարարեք. «Կանգ առե՛ք, նոր տեղեկություն է ստացվել»: Այնուհետև բարձրաձայն կարդացեք «Նոր հակասող փաստը» և հանձնարարեք թիմերին առանց դադարի շարունակել բանավեճը՝ հաշվի առնելով նոր տեղեկությունը:

Մաս 3. Վերլուծություն (10 րոպե)

Դադարեցրեք թիմերի բանավեճը և խոսքը փոխանցեք «Վերլուծողներին»: Նրանք պետք է ներկայացնեն իրենց եզրակացությունը՝ նշելով, թե ինչ մանիպուլյացիոն հնարքներ կամ տրամաբանական սխալներ են նկատել և ինչ թաքնված նպատակներ են բացահայտել:

Դուրս գալ դերերից (ԽԻՍՏ ԿԱՐԵՎՈՐ)

Նախքան ամփոփիչ քննարկմանն անցնելը հայտարարեք.
«Խաղն ավարտված է: Խնդրում եմ բոլորիդ կանգնել, թափահարել ձեռքերը և փոխել ձեր տեղերը: Դուք այլևս ձեր դերերում չեք»: Այս քայլը կօգնի մասնակիցներին դուրս գալ իրենց ստանձնած դերերից և կանխել խաղի ընթացքում առաջացած անձնական վիրավորանքի կամ լարվածության պահպանումը:

Բաշխիչ նյութ 1

Հիմնական իրավիճակ

Տարածաշրջանային հայտնի լրատվական հարթակը հրապարակում է խիստ կողմնակալ հոդված, որում ուսանողների նախաձեռնած բնապահպանական ծրագիրը մեղադրվում է հարկատուների միջոցներն անտեղի վատնելու մեջ:

Տեղեկատվական շեղումներ

Տնտեսական տեղեկատվական շեղումներ
Գաղտնի ֆինանսավորվում է կառուցապատող ընկերության կողմից, որը ցանկանում է ձեռք բերել ծրագրի իրականացման համար նախատեսված տարածքը:

Մշակութային տեղեկատվական շեղում
Տարեց բնակիչները քննադատում են երիտասարդների կողմից միջոցների ծախսումը, իսկ դեռահասները սոցիալական ցանցերում հակադարձում են նրանց:

Քաղաքական տեղեկատվական շեղում.
Դժգոհ ընտրողների աջակցությունը չկորցնելու համար քաղաքապետը սպառնում է դադարեցնել ծրագրի ֆինանսավորումը:

Գաղտնի նպատակ

Թիմ A



Ձեր նպատակն է բացահայտել լրատվական հարթակի կողմնակալության իրական պատճառները և ապահովել ծրագրի հետագա ֆինանսավորումը: Մեղադրեք լրատվամիջոցին առևտրային շահերին ծառայելու մեջ:

Գաղտնի նպատակ

Թիմ B



Ձեր նպատակն է հասնել երիտասարդական ծրագրի դադարեցմանը: Հոդվածում ներկայացված ֆինանսական պնդումներն օգտագործեք՝ հիմնավորելու, որ հանրային միջոցներն անտեղի են ծախսվում:

Անսպասելի փաստի քարտ



Երիտասարդական խումբը խոստովանում է, որ անզգուշությամբ նախատեսվածից 15%-ով ավելի է ծախսել, սակայն այդ գումարն օգտագործվել է էկոլոգիապես անվտանգ վերամշակման աղբամաններ ձեռք բերելու համար:

Հիմնական իրավիճակ

Դպրոցը մեկ միլիոն հետևորդ ունեցող հայտնի հեղինակի հրավիրում է՝ աշակերտների համար ձեռներեցության թեմայով ելույթ ունենալու:

Տեղեկատվական շեղումներ

Տնտեսական տեղեկատվական շեղումներ
Հրավիրված հեղինակի վարձատրությունը կազմում է 2 000 եվրո, սակայն դրա դիմաց նա առաջարկում է անվճար գովազդային տեսանյութ պատրաստել՝ դպրոցում նոր աշակերտներ ներգրավելու նպատակով:

Մշակութային տեղեկատվական շեղում.
Հրավիրված անձը հայտնի է «արագ հարստանալու» կասկածելի եղանակներ քարոզելով և ագրեսիվ վարքագծով:

Քաղաքական տեղեկատվական շեղում.
Աշակերտական խորհուրդը պնդում է, որ միջոցառման չեղարկումը խոսքի ազատության սահմանափակում է:

Գաղտնի նպատակ

Թիմ A



Ձեր նպատակն է հասնել նրան, որ նախատեսված ելույթը կայանա: Պնդեք, որ հրավիրված հեղինակը խոսում է երիտասարդներին հասկանալի լեզվով և կարող է նրանց ավելի շատ ոգեշնչել, քան ավանդական մոտեցումներով աշխատող ուսուցիչները:


Գաղտնի նպատակ

Թիմ B



Ձեր նպատակն է հասնել միջոցառման չեղարկմանը: Ներկայացրեք հրավիրված հեղինակին որպես երիտասարդների համար վատ օրինակ, ով անձնական շահից ելնելով կարող է բացասաբար ազդել նրանց մտածելակերպի և արժեքների ձևավորման վրա:

Անսպասելի փաստի քարտ



Երկու ժամ առաջ հրավիրված հեղինակը իր վարձատրության 80%-ը նվիրաբերել է տեղի կենդանիների ապաստարանին, սակայն միևնույն ժամանակ հրապարակել է տեսանյութ, որում ծաղրում է դպրոցի ուսուցչական կազմին:

Բաշխիչ նյութ 1

Հիմնական իրավիճակ

Դպրոցի խորհուրդը քվեարկում է այն հարցի շուրջ, թե արդյոք աշակերտների սմարթֆոնները պետք է ամեն օր՝ ժամը 08:00-ից մինչև 14:00-ն, հավաքվեն և պահվեն հատուկ փակվող պահարաններում:

Տեղեկատվական շեղումներ

Տնտեսական տեղեկատվական շեղում. Հատուկ պահարանների տեղադրումն արժե 5 000 եվրո, և այդ գումարը հատկացվելու է սպորտային ծրագրերի համար նախատեսված բյուջեից:

Մշակութային տեղեկատվական շեղում. Աշակերտները պնդում են, որ այս որոշումը խախտում է իրենց իրավունքները և արտակարգ իրավիճակներում սահմանափակում է կապ հաստատելու հնարավորությունը:

Քաղաքական տեղեկատվական շեղում. Երիտասարդական խորհուրդը սպառնում է բողոքի ակցիաներ կազմակերպել՝ այս որոշումը համարելով ավտորիտար մոտեցման դրսևորում:

Գաղտնի նպատակ

Թիմ A



Ձեր նպատակն է հասնել սմարթֆոնների օգտագործման արգելքի սահմանմանը: Դրանք ներկայացրեք բացառապես որպես ուսումնական գործընթացից շեղող գործոն, կիբերբուլինգի տարածմանը նպաստող միջավայր և ուսումնական առաջադիմության անկման հիմնական պատճառներից մեկը:

Գաղտնի նպատակ

Թիմ B



Ձեր նպատակն է հասնել նրան, որ դպրոցում սմարթֆոնների օգտագործման որևէ սահմանափակում չլինի: Մեղադրեք դպրոցի ղեկավարությանը հնացած մտածելակերպի մեջ և պնդեք, որ սմարթֆոնները ժամանակակից ուսուցման համար անհրաժեշտ գործիքներ են:

Անսպասելի փաստի քարտ



Նոր համազգային հարցման տվյալներով՝ աշակերտների շրջանում կիբերբուլինգի դեպքերի 60%-ը տեղի է ունենում հենց դպրոցական ընդմիջումների ժամանակ՝ անձնական հեռախոսների միջոցով:

Հիմնական իրավիճակ

Դպրոցի խորհուրդը քննարկում է արհեստական բանականության ծրագրի ներդրման հնարավորությունը, որը կարող է ավտոմատ ստուգել և գնահատել աշակերտների գրավոր տնային աշխատանքները:

Տեղեկատվական շեղումներ


Տնտեսական տեղեկատվական շեղում. Ծրագրի տարեկան արժեքը 15 000 եվրո է, սակայն դրա ներդրումը հնարավորություն կտա 20%-ով կրճատել ուսուցիչների արտաժամյա աշխատանքի վարձատրության ծախսերը:

Մշակութային տեղեկատվական շեղում. Արհեստական բանականության կիրառումը ուսուցման գործընթացից դուրս է մղում մարդկային շփումն ու ապրումակցումը:

Քաղաքական տեղեկատվական շեղում. Տնօրենը պնդում է ծրագրի ներդրման անհրաժեշտությունը՝ առաջիկա ընտրություններից առաջ դպրոցը որպես նորարար ներկայացնելու նպատակով:

Գաղտնի նպատակ

Թիմ A



Ձեր նպատակն է հասնել արհեստական բանականության ծրագրի անհապաղ ներդրմանը: Դրան դեմ արտահայտվողներին ներկայացրեք որպես «հնացած մտածելակերպ ունեցող և առաջընթացին դեմ» մարդկանց՝ միաժամանակ անտեսելով նրանց հուզական բնույթի մտահոգությունները:

Գաղտնի նպատակ

Թիմ B



Ձեր նպատակն է հասնել ծրագրի ամբողջական դադարեցմանը: Ձեր փաստարկները կառուցեք աշխատատեղերի կորստի, ուսուցման գործընթացում մարդկային շփման նվազման և տեխնոլոգիաներից չափազանց մեծ կախվածության վերաբերյալ մտահոգությունների շուրջ:

Անսպասելի փաստի քարտ



Հրապարակված ներքին աուդիտի տվյալները ցույց են տալիս, որ ոչ մայրենի լեզվով գրող աշակերտների շարադրությունները գնահատելիս արհեստական բանականության ծրագիրը դրսևորում է 35% կողմնակալություն՝ պայմանավորված նրանց լեզվական ծագմամբ:

Բաշխիչ նյութ 1

Կոտրատախտակ

Կոտրատախտակը փայտե մի տախտակ է, որի վրա կտրատում են միս, բանջարեղեն, մրգեր և այլ մթերքներ: Կոտրատախտակը պետք է լինի հարթ և ամուր, որպեսզի դանակը չսահի և չվնասի մթերքները: Կոտրատախտակը պետք է լինի մաքուր և չոր, որպեսզի չհամակերպվեն մանրէները: Կոտրատախտակը պետք է լվանալ տաք ջրով և օճառով, ապա չորացնել: Կոտրատախտակը պետք է պահել չոր տեղում, որպեսզի չհամակերպվեն մանրէները:

Թիմ B

Ձեզ տրվում է կոտրատախտակ և դանակ: Ձեր խնդիրն է կտրատել տրված մթերքները՝ պահպանելով անվտանգության կանոնները: Ուշադիր եղեք, որ կոտրատախտակը և դանակը մաքուր լինեն մթերքների միջև: Ավարտելուց հետո լվացեք ձեռքերը և մաքրեք աշխատանքային մակերեսը:

Թիմ A

Ձեզ տրվում է կոտրատախտակ և դանակ: Ձեր խնդիրն է կտրատել տրված մթերքները՝ պահպանելով անվտանգության կանոնները: Ուշադիր եղեք, որ կոտրատախտակը և դանակը մաքուր լինեն մթերքների միջև: Ավարտելուց հետո լվացեք ձեռքերը և մաքրեք աշխատանքային մակերեսը:

Տեղեկատվական նյութ

Կոտրատախտակը ճիշտ օգտագործելու համար կարևոր է հետևել մի քանի պարզ կանոնների: Նախ՝ կոտրատախտակը պետք է լինի հարթ և ամուր, որպեսզի դանակը չսահի և չվնասի մթերքները: Կոտրատախտակը պետք է լինի մաքուր և չոր, որպեսզի չհամակերպվեն մանրէները: Կոտրատախտակը պետք է պահել չոր տեղում, որպեսզի չհամակերպվեն մանրէները: Կոտրատախտակը պետք է լվանալ տաք ջրով և օճառով, ապա չորացնել: Կոտրատախտակը պետք է պահել չոր տեղում, որպեսզի չհամակերպվեն մանրէները:

Կոտրատախտակը պետք է լինի հարթ և ամուր, որպեսզի դանակը չսահի և չվնասի մթերքները: Կոտրատախտակը պետք է լինի մաքուր և չոր, որպեսզի չհամակերպվեն մանրէները: Կոտրատախտակը պետք է պահել չոր տեղում, որպեսզի չհամակերպվեն մանրէները: Կոտրատախտակը պետք է լվանալ տաք ջրով և օճառով, ապա չորացնել: Կոտրատախտակը պետք է պահել չոր տեղում, որպեսզի չհամակերպվեն մանրէները:

Կոտրատախտակը պետք է լինի հարթ և ամուր, որպեսզի դանակը չսահի և չվնասի մթերքները: Կոտրատախտակը պետք է լինի մաքուր և չոր, որպեսզի չհամակերպվեն մանրէները: Կոտրատախտակը պետք է պահել չոր տեղում, որպեսզի չհամակերպվեն մանրէները: Կոտրատախտակը պետք է լվանալ տաք ջրով և օճառով, ապա չորացնել: Կոտրատախտակը պետք է պահել չոր տեղում, որպեսզի չհամակերպվեն մանրէները:

Ուշադրություն վտանգի

Կոտրատախտակը պետք է լինի հարթ և ամուր, որպեսզի դանակը չսահի և չվնասի մթերքները: Կոտրատախտակը պետք է լինի մաքուր և չոր, որպեսզի չհամակերպվեն մանրէները: Կոտրատախտակը պետք է պահել չոր տեղում, որպեսզի չհամակերպվեն մանրէները: Կոտրատախտակը պետք է լվանալ տաք ջրով և օճառով, ապա չորացնել: Կոտրատախտակը պետք է պահել չոր տեղում, որպեսզի չհամակերպվեն մանրէները:

Բաշխիչ նյութ 3

«Վերլուծողների» խմբի դիտարկման ձևաթուղթ

Դեպքի անվանումը՝ _____

Թիմ/Փուլ	Ի՞նչ մանիպուլյացիոն հնարքներ, հուզական ազդեցություն ունեցող արտահայտություններ կամ տրամաբանական սխալներ կիրառվեցին:	Ձեր կարծիքով՝ ո՞րն է դրանց թաքնված նպատակը:
Թիմ A (Փուլ 1)		
Թիմ B (Փուլ 1)		
Թիմ A (Փուլ 2)		
Թիմ B (Փուլ 2)		

Ո՞ր թիմն էր ավելի համոզիչ, և մանիպուլյացիայի ինչ հիմնական հնարքների կամ շեղող տեղեկատվության ձևերի վրա էր այն հիմնվում:

_____

_____

_____

7. Արիադնեի թելը. տեղեկատվական լաբիրինթոսի չորս կայանները

Զարգացվող հմտություններ և հիմնական հասկացություններ	• Քննադատական մտածողություն • Մեդիա և տեղեկատվական գրագիտություն • Պնդումների, կարծիքների, ենթադրությունների և ապացույցների տարբերակում • Աղբյուրների գնահատում և փաստերի ստուգում • Պատճառահետևանքային և տրամաբանական կապերի վերլուծություն • Ապացույցների վրա հիմնված եզրակացությունների ձևակերպում • Քննադատական հարցադրում և թիմային աշխատանք
Նպատակներ	• Բացահայտել տեղեկատվության մեջ ներկայացված հիմնական պնդումը • Տարբերակել պնդումները, կարծիքները, ենթադրություններն ու ապացույցները • Բացահայտել բացակայող կամ անբավարար տեղեկատվությունը • Գնահատել՝ արդյոք առկա ապացույցները հիմնավորում են եզրակացությունը • Ճանաչել չհիմնավորված ընդհանրացումներն ու թույլ պատճառահետևանքային կապերը • Սահմանել տեղեկատվության ստուգման համապատասխան քայլերը • Ձևակերպել զգուշավոր և ապացույցների վրա հիմնված եզրակացություններ
Անհրաժեշտ նյութեր	Նախապես կտրված թելի կամ մանվածքի հատվածներ, գրիչներ, կպչուն ժապավեն, ժամաչափ, գրատախտակ, մարկերներ:
Գործիքներ և աղբյուրներ	• Ուղղորդված տեղեկատվական հետազոտություն • Կայաններով հերթափոխային աշխատանքի մեթոդ • «Ինչու՞» հարցադրման մեթոդ • «Պնդում – ապացույց – տրամաբանական կապ – ստուգում – եզրակացություն» վերլուծության շրջանակ
Տևողություն	60 րոպե
Մասնակիցների թիվը	16-20 մասնակից
Ուսումնական նյութեր	Տեղեկատվական լաբիրինթոսի կայանների քարտեր, թիմային հետազոտության աշխատանքային թերթիկ

Նկարագրություն

Հիմնական սկզբունք

Չորս թիմերը հերթով անցնում են չորս կայաններով, որոնք ներկայացնում են քննադատական մտածողության հետևյալ հաջորդականությունը՝

ՊՆԴՈՒՄ → ԱՊԱՑՈՒՅՑ → ՏՐԱՄԱԲԱՆԱԿԱՆ ԿԱՊ → ՍՏՈՒԳՈՒՄ → ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Յուրաքանչյուր կայանում թիմերը վերլուծում են ներկայացված դեպքը, գրանցում իրենց պատասխանները և վերցնում թելի մեկ հատված: Վերջում նրանք իրար են կապում հավաքած չորս հատվածները՝ ստանալով մեկ ամբողջական թել: Այս թելը խորհրդանշում է քննադատական մտածողության փոխկապակցված չորս քայլերը:

Նախապատրաստում

- Տպեք Բաշխիչ նյութ 1-ը, կտրեք կայանների 4 քարտերը և յուրաքանչյուր քարտը տեղադրեք սենյակի առանձին կայանում:
- Յուրաքանչյուր կայանի քարտի կողքին դրեք հավասար երկարության թելի 4 հատված:
- Յուրաքանչյուր թիմին տրամադրեք Բաշխիչ նյութ 2-ի մեկ օրինակ՝ «Թիմային հետազոտության աշխատանքային թերթիկը»:
- Գրատախտակին գրեք հետևյալ հաջորդականությունը.

ՊՆԴՈՒՄ → ԱՊԱՑՈՒՅՑ → ՏՐԱՄԱԲԱՆԱԿԱՆ ԿԱՊ → ՍՏՈՒԳՈՒՄ → ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Մաս 1. Մուտք տեղեկատվական լաբիրինթոս (10 րոպե)

Համառոտ ներկայացրեք գործնական աշխատանքը: Պատմեք, որ «Հին հունական առասպելում Արիադնեի թելը դարձավ լաբիրինթոսից դուրս գալու ուղեցույցը: Այսօր դուք նույնպես հայտնվելու եք լաբիրինթոսում, բայց այս անգամ՝ տեղեկատվական: Այստեղ ձեզ սպասում են համոզիչ պնդումներ, անձնական պատմություններ, թվային տվյալներ և չստուգված տեղեկություններ: Յուրաքանչյուր կայանում դուք պետք է ուսումնասիրեք ներկայացված իրավիճակը, հարցեր տաք, վերլուծեք տեղեկությունները և ստանաք ձեր թելի մեկ հատվածը: Չորս կայաններն անցնելուց հետո կմիացնեք թելի բոլոր հատվածները՝ ամբողջացնելով այն ուղին, որը կօգնի կողմնորոշվել տեղեկատվության բազմազանության մեջ, տարբերակել հիմնավորված պնդումները մոլորեցնող տեղեկություններից և կատարել փաստերի վրա հիմնված եզրակացություններ»:

Մասնակիցներին բաժանեք չորս թիմի՝ յուրաքանչյուրում 4–5 հոգի, և յուրաքանչյուր թիմի համար սահմանեք մեկնարկային կայան: Թիմերին տրամադրեք գրիչներ և Բաշխիչ նյութ 2-ի՝ «Թիմային հետազոտության աշխատանքային թերթիկի» մեկական օրինակ: Բացատրեք, որ յուրաքանչյուր կայանում աշխատելու համար նրանք կունենան 7 րոպե, որից հետո, ձեր ազդանշանով, ժամացույցի սլաքի ուղղությամբ կտեղափոխվեն հաջորդ կայան:

Ընդգծեք, որ առաջադրանքի նպատակը հնարավորինս արագ բոլոր կայաններն անցնելը չէ: Յուրաքանչյուր թիմ պետք է հավաքի թելի չորս հատված, սակայն աշխատանքի իրական արժեքը քննարկումների խորության, ճիշտ և տեղին հարցեր ձևակերպելու ու սեփական եզրակացությունները հիմնավորելու կարողության մեջ է:

Մաս 2. Տեղեկատվական չորս կայաններ (30 րոպե)

Յուրաքանչյուր կայանում թիմերն աշխատում են 7 րոպե: Նրանք կարդում են Բաշխիչ նյութ 1-ի համապատասխան քարտը, միասին քննարկում առաջադրված հարցերը և պատասխանները գրանցում Բաշխիչ նյութ 2-ում՝ «Թիմային հետազոտության աշխատանքային թերթիկում»: Աշխատանքն ավարտելուց հետո թիմը վերցնում է թելի մեկ հատված և դասընթացավարի ազդանշանով անցնում հաջորդ կայան:

Ուղղորդումներ դասընթացավարին
Կայան *1*. Պնդման համոզիչ և վստահ հնչելը դեռ չի նշանակում, որ այն հիմնավորված է ապացույցներով:
Կայան *2*. Մեկ անձի փորձի հիման վրա չի կարելի բոլորի մասին ընդհանրացված եզրակացություն անել:
Կայան *3*. Եթե երկու իրադարձություն տեղի են ունենում միաժամանակ կամ հաջորդում են միմյանց, դա դեռ չի նշանակում, որ մեկը մյուսի պատճառն է:
Կայան *4*. Նախքան որևէ տեղեկություն տարածելը անհրաժեշտ է ստուգել դրա սկզբնաղբյուրը, հրապարակման ամսաթիվը, պաշտոնական աղբյուրներում դրա հաստատված լինելը և համեմատել այլ վստահելի աղբյուրներում առկա տեղեկությունների հետ:

Մասնակիցների պատասխանները մի սահմանափակեք պարզապես «ճիշտ» կամ «սխալ» գնահատականով: Նպատակն է օգնել նրանց հասկանալ, թե ինչի վրա են հիմնված իրենց դատողությունները և որքանով են դրանք հիմնավորված: Անհրաժեշտության դեպքում քննարկումն ուղղորդեք հետևյալ հարցերով.

- Ի՞նչ տեղեկությունների կամ ապացույցների վրա եք հիմնավորում ձեր եզրակացությունը:
- Ներկայացված տեղեկություններից ո՞րն է փաստ, իսկ ո՞րը՝ ենթադրություն:
- Ի՞նչ տեղեկություն դեռևս չունենք:
- Ի՞նչ նոր տեղեկություն կարող է փոխել ձեր եզրակացությունը:

Մաս 3. Թելի միավորում և ամփոփիչ քննարկում (20 րոպե)

Թիմերը միացնում են իրենց հավաքած թելի չորս հատվածները՝ ստանալով մեկ ամբողջական երկար թել: Այնուհետև յուրաքանչյուր թիմ մեկ նախադասությամբ ներկայացնում է աշխատանքային թերթիկում գրանցված իր ամենակարևոր եզրահանգումներից մեկը:

Դրանից հետո դասընթացավարն ասում է. «Այժմ ձեր ձեռքում մեկ ամբողջական թել է, որը կազմված է չորս փոխկապակցված հատվածներից: Դրանցից յուրաքանչյուրն իր նշանակությունն ունի: Եթե բաց թողնենք թեկուզ մեկ քայլ՝ ճիշտ չընկալենք պնդումը, չգնահատենք ներկայացված ապացույցները, չստուգենք դատողությունների տրամաբանական կապը կամ չպարզենք աղբյուրի հավաստիությունը, տեղեկատվական լաբիրինթոսում հեշտությամբ կարող ենք մոլորվել և սխալ եզրակացության հանգել»: Այնուհետև մասնակիցների ուշադրությունը կրկին հրավիրեք գրատախտակին գրված հաջորդականության վրա.

ՊՆԴՈՒՄ → ԱՊԱՑՈՒՅՑ → ՏՐԱՄԱԲԱՆԱԿԱՆ ԿԱՊ → ՍՏՈՒԳՈՒՄ → ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ամփոփելով՝ բացատրեք, որ Արիադնեի թելը պատրաստի պատասխաններ չի տալիս: Այն խորհրդանշում է այն ուղին, որով պետք է անցնել նախքան որևէ տեղեկության հավատալը, այն մերժելը կամ ուրիշներին փոխանցելը: Այս քայլերի հաջորդականությունը օգնում է կանգ առնել, հարցեր տալ, ստուգել առկա տեղեկությունները և միայն դրանից հետո եզրակացություն անել:

Մնացած *15* րոպեն տրամադրեք ստորև ներկայացված ամփոփիչ քննարկման հարցերին:

Ամփոփիչ քննարկման հարցեր

- Տեղեկատվական լաբիրինթոսի ո՞ր կայանն էր ձեզ համար ամենադժվարը և ինչու՞:
- Ինչու՞ ենք հաճախ հակված կարծելու, որ միաժամանակ տեղի ունեցող երկու իրադարձություններ անպայման կապված են միմյանց հետ: Ինչպե՞ս կարող ենք խուսափել նման սխալ եզրակացությունից:
- Ձեր թիմում եղե՞լ են տարաձայնություններ որևէ պնդման արժանահավատության վերաբերյալ: Ինչպե՞ս կարողացաք քննարկել տարբեր տեսակետները և ընդհանուր եզրակացության գալ:
- Ո՞ր դեպքերում կարող է անձնական պատմությունը կամ կարծիքը օգտակար տեղեկություն տալ, և ե՞րբ կարող է այն մոլորեցնող լինել, եթե ներկայացվում է որպես որևէ պնդման ապացույց:
- Ի՞նչը կարող է նույնիսկ չհիմնավորված կամ չստուգված պնդումը համոզիչ դարձնել:
- Այսուհետ ի՞նչ հարց կտաք ինքներդ ձեզ՝ նախքան որևէ տեղեկության հավատալը կամ այն ուրիշներին փոխանցելը:

Աղբյուր՝ մշակվել է YIC-ի կողմից՝ VIBE նախագծի շրջանակում:

Բաշխիչ նյութ 1

Տեղեկատվական լաբիրինթոսի կայանների քարտեր

Կայան 1
Բացահայտել պնդումը
Իրավիճակ

Սոցիալական ցանցում հրապարակված գովազդում նշվում է. «Ուսուցման այս նոր հավելվածը 100%-ով բարելավում է հիշողությունը և օգնում յուրաքանչյուր սովորողի բարձրացնել իր առաջադիմությունը»:

Քննարկեք հետևյալ հարցերը և հիմնական մտքերը գրանցեք Բաշխիչ նյութ 2-ում.

1. Ո՞րն է այս գովազդում հնչող հիմնական պնդումը:
2. Ո՞ր բառերն ու ձևակերպումներն են պնդումն առավել համոզիչ դարձնում:
3. Ներկայացվածը փա՞ստ է, կարծի՞ք, գովազդային խոստու՞մ, թե՞ չստուգված տեղեկություն:
4. Ի՞նչ ապացույցներ կամ տվյալներ են անհրաժեշտ՝ այս պնդման հիմնավորվածությունը գնահատելու համար:
5. Ներկայացված տեղեկությունների հիման վրա ի՞նչ հիմնավորված եզրակացություն կարող եք անել:

Աշխատանքն ավարտելուց հետո հիմնական եզրահանգումները գրանցեք Բաշխիչ նյութ 2-ում, վերցրեք թելի մեկ հատված և սպասեք ազդանշանին՝ հաջորդ կայան անցնելու համար:

Կայան 2
Գնահատել ապացույցները
Իրավիճակ

Բլոգերը պնդում է.«Ես սովորել եմ այս մեթոդով և ընդամենը մեկ շաբաթում սկսել եմ ազատ խոսել անգլերեն: Հետևաբար, այս մեթոդն արդյունավետ է բոլորի համար»:

Քննարկեք հետևյալ հարցերը և հիմնական մտքերը գրանցեք Բաշխիչ նյութ 2-ում.

1. Ի՞նչ է պնդում բլոգերը, և ի՞նչ ապացույց է ներկայացնում իր պնդումը հիմնավորելու համար:
2. Արդյո՞ք մեկ անձի փորձը բավարար է բոլորի վերաբերյալ ընդհանուր եզրակացություն անելու համար:
3. Ուրիշ ի՞նչ գործոններ կարող էին ազդել ստացված արդյունքի վրա:
4. Ի՞նչ լրացուցիչ տեղեկություններ են անհրաժեշտ՝ մեթոդի արդյունավետությունը գնահատելու համար:
5. Այս պահին առկա տեղեկությունների հիման վրա ի՞նչ հիմնավորված եզրակացություն կարող եք անել:

Աշխատանքն ավարտելուց հետո հիմնական եզրահանգումները գրանցեք Բաշխիչ նյութ 2-ում, վերցրեք թելի մեկ հատված և սպասեք ազդանշանին՝ հաջորդ կայան անցնելու համար:

Կայան 3

Ստուգել տրամաբանական կապը

Իրավիճակ

Այս տարի ամբողջ քաղաքում տեղադրվել են անվտանգության նոր տեսախցիկներ: Նույն տարվա ընթացքում հանցագործությունների թիվը նվազել է 20%-ով: Հետևաբար, եզրակացություն է արվում, որ հենց տեսախցիկների տեղադրումն է լուծել քաղաքում հանցավորության խնդիրը:

Քննարկեք հետևյալ հարցերը և հիմնական մտքերը գրանցեք Բաշխիչ նյութ 2-ում.

1. Ի՞նչ երկու տեղեկություն է ներկայացված այս իրավիճակում:
2. Արդյո՞ք ապացուցված է դրանց միջև պատճառահետևանքային կապը:
3. Ուրիշ ի՞նչ գործոններ կարող էին նպաստել հանցագործությունների թվի նվազմանը:
4. Ի՞նչ տվյալներ են անհրաժեշտ՝ տեսախցիկների իրական ազդեցությունը գնահատելու համար:
5. Ինչպե՞ս կարելի է ներկայացված եզրակացությունն ավելի զգուշավոր և հիմնավորված ձևակերպել:

Աշխատանքն ավարտելուց հետո հիմնական եզրահանգումները գրանցեք Բաշխիչ նյութ 2-ում, վերցրեք թելի մեկ հատված և սպասեք ազդանշանին՝ հաջորդ կայան անցնելու համար:

Կայան 4

Ստուգել նախքան տարածելը

Իրավիճակ

Դուք ստանում եք հետևյալ հաղորդագրությունը. «ՇՏԱՊ: Վաղվանից բոլոր դպրոցներում արգելվելու է բջջային հեռախոսների օգտագործումը: ՏԱՐԱԾԵ՛Ք, որպեսզի բոլորն իմանան»: Հաղորդագրության մեջ նշված չեն տեղեկության սկզբնաղբյուրը, հրապարակման ամսաթիվը կամ որոշման համար պատասխանատու մարմինը, ինչպես նաև չկա պաշտոնական հայտարարության հղում:

Քննարկեք հետևյալ հարցերը և հիմնական մտքերը գրանցեք Բաշխիչ նյութ 2-ում.

1. Ի՞նչ է պնդվում այս հաղորդագրության մեջ:
2. Ի՞նչ կարևոր տեղեկություններ են բացակայում:
3. Ո՞ր բառերն ու ձևակերպումներն են դրդում ձեզ անմիջապես արձագանքել կամ տարածել հաղորդագրությունը:
4. Նշեք առնվազն չորս քայլ, որոնք անհրաժեշտ է կատարել նախքան հաղորդագրությունը տարածելը:
5. Այս պահին առկա տեղեկությունների հիման վրա ի՞նչ հիմնավորված եզրակացություն կարող եք անել:

Աշխատանքն ավարտելուց հետո հիմնական եզրահանգումները գրանցեք Բաշխիչ նյութ 2-ում և վերցրեք ձեր թելի վերջին հատվածը:

Բաշխիչ նյութ 2

Թիմային հետազոտության աշխատանքային թերթիկ

Կայան 1. Բացահայտել պնդումը

ՊՆԴՈՒՄ → ԱՊԱՑՈՒՅՑ → ՏՐԱՄԱԲԱՆԱԿԱՆ ԿԱՊ → ՍՏՈՒԳՈՒՄ → ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Հիմնական պնդում

Ի՞նչն էր թերի կամ խնդրահարույց

Եզրակացություն

Կայան 2. Գնահատել ապացույցները

ՊՆԴՈՒՄ → ԱՊԱՑՈՒՅՑ → ՏՐԱՄԱԲԱՆԱԿԱՆ ԿԱՊ → ՍՏՈՒԳՈՒՄ → ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ի՞նչ ապացույցներ էին ներկայացված

Ի՞նչ լրացուցիչ տեղեկություն էր անհրաժեշտ

Եզրակացություն

Բաշխիչ նյութ 2

Թիմային հետազոտության աշխատանքային թերթիկ

Կայան 3. Ստուգել տրամաբանական կապը

ՊՆԴՈՒՄ → ԱՊԱՑՈՒՅՑ → ՏՐԱՄԱԲԱՆԱԿԱՆ ԿԱՊ → ՍՏՈՒԳՈՒՄ → ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ի՞նչ կապ էր ներկայացված

Ի՞նչ այլ բացատրություն կարող էր լինել:

Ավելի զգուշավոր ձևակերպված եզրակացություն

Կայան 4. Ստուգել նախքան տարածելը

ՊՆԴՈՒՄ → ԱՊԱՑՈՒՅՑ → ՏՐԱՄԱԲԱՆԱԿԱՆ ԿԱՊ → ՍՏՈՒԳՈՒՄ → ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ի՞նչ կարևոր տեղեկություն էր բացակայում

Ստուգման քայլերը

Եզրակացություն

Համայնքային ներգրավվածություն և սթորիթելինգ

Այս թեմատիկ ուղղության շրջանակում ներկայացվում է սթորիթելինգի և համայնքային ներգրավվածության տեսական հիմքը՝ առանձնացնելով դրանց առնչվող հիմնական հասկացությունները: Դերային խաղերի և այլ ինտերակտիվ մեթոդների միջոցով մասնակիցները ծանոթանում են հիմնական եզրույթներին, յուրացնում դրանք և սովորում կիրառել գործնականում: Ընտրված գործիքներն առաջարկում են գործնական մոտեցումներ և ուղեցույցներ, որոնք անհրաժեշտ են ներառական, ժողովրդավարական և մարդու իրավունքների վրա հիմնված համայնքների ձևավորման համար:

Ներկայացված գործիքները ներառում են տարբեր ռազմավարություններ և վարժություններ, որոնք նպաստում են խմբային և համայնքային որոշումների կայացման գործընթացներում ակտիվ, բովանդակալից և փոխադարձ հարգանքի վրա հիմնված մասնակցությանը: Բաժնում ներկայացվում են նաև քաղաքացիական ներգրավվածությունը խթանող թվային հարթակներ, որոնք օգնում են ավելի լավ հասկանալ ժողովրդավարական գործընթացները, նպաստում են հավասար հնարավորությունների ստեղծմանը և համայնքային կապերի ամրապնդմանը:



8. Համայնքային խնդիրների լուծման թիմ

Զարգացվող հմտություններ և հիմնական հասկացություններ	• Քննադատական և վերլուծական մտածողություն • Խնդիրների լուծման հմտություններ • Թիմային աշխատանք, ստեղծարարություն և հաղորդակցման հմտություններ • Ակտիվ քաղաքացիություն և համայնքային ներգրավվածություն
Նպատակներ	• Բարձրացնել տեղական համայնքների առջև ծառացած խնդիրների վերաբերյալ իրազեկվածությունը: • Զարգացնել քննադատական մտածողության և խնդիրների լուծման հմտությունները: • Գաղափարները վերածել համայնքում իրագործելի նախաձեռնությունների: • Բացահայտել և վերլուծել տարբեր համայնքների վրա ազդող խնդիրները: • Հասկանալ տարբեր շահագրգիռ կողմերի տեսակետներն ու դիրքորոշումները: • Համագործակցային մեթոդների միջոցով մշակել գործնական լուծումներ:
Անհրաժեշտ նյութեր	Գրատախտակի մեծ թուղթ, կպչուն թերթիկներ, մարկերներ, ժամաչափ, կպչուն ժապավեն, A4 ձևաչափի թուղթ, «Խնդրի վերլուծության ձևաթուղթ» (ըստ ցանկության):
Տևողություն	90-120 րոպե
Մասնակիցների թիվը	12-30 մասնակից

Նկարագրություն

Մաս 1. Նախավարժանք. «Ինչպիսի՞ն է լավ համայնքը» (10 րոպե)

Մասնակիցներին ուղղեք հետևյալ հարցը. «Պատկերացրեք այն համայնքը, որտեղ կցանկանայիք ապրել: Ինչպիսի՞ն է այն»: Խնդրեք մասնակիցներին յուրաքանչյուր կպչուն թերթիկի վրա գրել մեկ գաղափար: **Օրինակ՝** անվտանգ փողոցներ / բարեհամբույր հարևաններ / կանաչ ու բարեկարգ այգիներ / հասանելի տրանսպորտ / մշակութային միջոցառումներ / բոլորի համար հասանելի և ներառական տարածքներ:

Բոլոր թերթիկները փակցրեք պատին, ապա մասնակիցների հետ կարճ քննարկեք, թե որ գաղափարներն են առավել հաճախ կրկնվում:

Մաս 2. Համայնքային խնդիրների բացահայտում (15 րոպե)

Խնդրեք մասնակիցներին անհատապես մտածել իրենց համայնքի մասին և գրի առնել այն խնդիրները, որոնք իրենք նկատել են: **Օրինակ**՝ աղբի կուտակում / երիտասարդների համար հավաքվելու վայրերի բացակայություն / տարեցների մեկուսացվածություն / հեծանվով երթևեկելու համար ոչ անվտանգ ճանապարհներ / սննդի վատնում / մշակութային միջոցառումների պակաս:

Նմանատիպ գաղափարները խմբավորեք: Այնուհետև յուրաքանչյուր մասնակցի տվեք երեք կպչուն թերթիկ և խնդրեք քվեարկել այն խնդիրների օգտին, որոնք, իրենց կարծիքով, առավել կարևոր են: Ընտրեք ամենաշատ ձայներ ստացած 3–5 խնդիրներ հաջորդ փուլում քննարկելու և վերլուծելու համար:

Մաս 3. Թիմերի ձևավորում (5 րոպե)

Մասնակիցներն ընտրում են այն խնդիրը, որի լուծմամբ առավել հետաքրքրված են: Ըստ ընտրված խնդիրների՝ ձևավորվում են 4–6 հոգուց բաղկացած թիմեր:

Մաս 4. Խնդիրների լուծում (30 րոպե)

Դասընթացավարը մեծ թղթի վրա ներկայացնում է ստորև նշված հարցերը կամ յուրաքանչյուր թիմի տրամադրում է նախապես տպված «Խնդրի վերլուծության ձևաթուղթը»:

- Ո՞րն է խնդիրը:
- Ու՞մ է այն առնչվում:
- Ինչու՞ այս խնդիրը գոյություն ունի:
- Ի՞նչ քայլեր են արդեն ձեռնարկվել խնդրի լուծման ուղղությամբ:
- Ո՞րն է մեր առաջարկած լուծումը:
- Ի՞նչ ռեսուրսներ են անհրաժեշտ այն իրականացնելու համար:
- Ի՞նչ խոչընդոտներ կարող են առաջանալ:

Մաս 5. Ներկայացրեք ձեր լուծումը (20 րոպե)

Յուրաքանչյուր թիմին տրամադրեք 3 րոպե՝ իր առաջարկած լուծումը ներկայացնելու համար, և ևս 2 րոպե՝ հարցերին պատասխանելու համար: Խրախուսեք թիմերին իրենց լուծումները ներկայացնել ստեղծագործ և հետաքրքիր ձևաչափով:
Ներկայացման հնարավոր տարբերակներ՝ դերային խաղ/պաստառ/լրատվական ռեպորտաժ/կարճ գովազդ/հարցազրույց:

Ամփոփիչ քննարկման հարցեր

- Քննարկված խնդիրներից ո՞րն էր ձեզ համար ամենաանսպասելին:
- Ի՞նչն է դժվարացնում համայնքային խնդիրների լուծումը:
- Ինչպե՞ս էր ձեր թիմը որոշումներ կայացնում:
- Քննարկման ընթացքում փոխվե՞ց ձեր առաջարկած լուծումը: Եթե այո, ապա ինչպե՞ս:
- Այս աշխատանքի ընթացքում ի՞նչ հմտություններ կիրառեցիք:
- Այս աշխատաժողովից հետո ձեր առաջարկած գաղափարներից ո՞րը կարող եք իրականում կյանքի կոչել:
- Ի՞նչ դեր կարող են ունենալ երիտասարդներն իրենց համայնքի զարգացման և բարելավման գործում:

Աղբյուր՝ մշակվել է FECE-ի կողմից՝ VIBE նախագծի շրջանակում:

Դասընթացավարի համար

Խնդրի վերլուծության ձևաթուղթ

Ո՞րն է խնդիրը:
Նկարագրեք այն մեկ նախադասությամբ:
Խնդրի օրինակ՝ Այգին լի է աղբով:

Ու՞մ է առնչվում այս խնդիրը:
Օրինակներ՝ դեռահասներ, տարեց բնակիչներ, ընտանիքներ, տեղական բիզնեսներ, համայնքապետարան:

Ինչու՞ այս խնդիրը գոյություն ունի:
Խրախուսեք մասնակիցներին խորությամբ ուսումնասիրել խնդիրը և բացահայտել դրա պատճառները՝ միայն տեսանելի հետևանքները նկարագրելու փոխարեն: **Օրինակներ՝** աղբամանների անբավարար քանակ, իրազեկվածության պակաս, համայնքի նկատմամբ ընդհանուր պատասխանատվության պակաս, տարածքի ոչ պատշաճ խնամք:

Ի՞նչ քայլեր են արդեն ձեռնարկվում:
Արդյո՞ք որևէ կառույց կամ խումբ արդեն փորձում է լուծել այս խնդիրը:
Օրինակներ՝ դպրոցներ, ՀԿ-ներ / ՔՀԿ-ներ, համայնքապետարան, կամավորներ:

Մեր առաջարկած լուծումը
Մշակեք մեկ ստեղծագործ լուծում: Հնարավորության դեպքում այն պետք է լինի իրագործելի, ներառական, կայուն և մեծ ֆինանսական միջոցներ չպահանջի:

Ի՞նչ ռեսուրսներ են անհրաժեշտ:
Օրինակներ՝ մարդիկ, ֆինանսական միջոցներ, նյութեր, գործընկերներ, կամավորներ:

Հնարավոր խոչընդոտներ
Օրինակներ՝ ֆինանսավորման պակաս, մասնակցության ցածր մակարդակ, բյուրոկրատական խոչընդոտներ, եղանակային պայմաններ, ժամանակի սղություն:

9. Իրակա՞ն, թե՞ հորինվածք

Զարգացվող հմտություններ և հիմնական հասկացություններ	• Քննադատական մտածողություն և մեդիագրագիտություն • Խնդիրների լուծման և վերլուծական հմտություններ • Փաստերի ստուգում և ստեղծարարություն
Նպատակներ	• Զարգացնել մեդիա բովանդակությունն ընկալելիս և գնահատելիս քննադատաբար մտածելու կարողությունը: • Սովորել ճանաչել ապատեղեկատվությունը, մոլորեցնող տեղեկությունը և մանիպուլյացիոն հնարքները: • Գնահատել տարբեր տեղեկատվական աղբյուրների արժանահավատությունը: • Զարգացնել փաստերի ստուգման և ապացույցների վրա հիմնված դատողություններ անելու հմտությունները: • Վերլուծել մեդիա բովանդակության սպառման սեփական սովորությունները: • Սովորել մեդիայում տարբերակել փաստերը, կարծիքներն ու հուզական ազդեցություն ունեցող բովանդակությունը:
Անհրաժեշտ նյութեր	Տպագիր «լրատվական հոդվածներ», սոցիալական ցանցերի գրառումներ, վերնագրեր, մեմեր և սքրինշոթեր (իրական և հորինված բովանդակության համադրությամբ), կպչուն թերթիկներ, մեծ թղթեր, մարկերներ, համացանցի հասանելիություն (ըստ ցանկության), սմարթֆոններ (ըստ ցանկության), «Փաստերի ստուգման աշխատանքային թերթիկ» (ըստ ցանկության):
Տևողություն	90–120 րոպե
Մասնակիցների թիվը	12–30 մասնակից

Նկարագրություն

Մաս 1. Նախավարժանք՝ «Կտարածեի՞ք սա» (10 րոպե)

Սենյակի տարբեր հատվածներում փակցրեք ուշադրություն գրավող 8–10 վերնագիր: Օրինակ՝

- «Գիտնականները պարզել են, որ շոկոլադը կարող է օգնել նիհարել ընդամենը մեկ գիշերում»:
- «Տեղի այգին փակվել է, քանի որ սկյուռները չափազանց խելացի են դարձել»:
- «Նոր հետազոտությունը ցույց է տվել, որ դեռահասներն առանց հեռախոսների ավելի լավ են քնում»:
- «Հայտնի անձը գաղտնի մեկ միլիոն եվրո է նվիրաբերել բարեգործական նպատակներով»:

Մասնակիցները շրջում են սենյակում, կարդում վերնագրերը և յուրաքանչյուրի դեպքում ընտրում իրենց դիրքորոշմանը համապատասխան երեք տարբերակներից մեկը՝ կանգնելով համապատասխան գրության մոտ

- ✅ Ես կտարածեի այս տեղեկությունը:
- ❓ Վստահ չեմ:
- ❌ Ես չէի տարածի այս տեղեկությունը:

Յուրաքանչյուր վերնագրից հետո մասնակիցներին ուղղեք հետևյալ հարցերը.

- Ինչու՞ ընտրեցիք հենց այս տարբերակը:
- Ի՞նչն էր այս տեղեկությունը արժանահավատ դարձնում:
- Ի՞նչ լրացուցիչ տեղեկություն կցանկանայիք ունենալ նախքան այն տարածելը:

Բացատրեք, որ ուշադրություն գրավող վերնագրերը հաճախ առաջին հերթին հուզական արձագանք են առաջացնում՝ թույլ չտալով, որ մենք անմիջապես քննադատաբար գնահատենք ներկայացված տեղեկությունը:

Մաս 2. Բացահայտել մանիպուլյացիոն հնարքները (20 րոպե)

Մասնակիցներին բաժանեք 4–5 հոգուց բաղկացած խմբերի: Յուրաքանչյուր խմբի տրամադրեք մեդիա բովանդակության 5–6 տարբեր օրինակ: Դրանց թվում կարող են լինել՝ վստահելի լրատվական նյութեր, երգիծական բովանդակություն, դիտումներ գրավելու համար գրված մոլորեցնող վերնագրեր, փոփոխված կամ կեղծված պատկերներ, մոլորեցնող վիճակագրական տվյալներ, սոցիալական ցանցերի կեղծ գրառումներ և արհեստական բանականությամբ ստեղծված բովանդակություն:

Խմբերի առաջադրանքն է պարզել՝

- Ի՞նչ հիմնական միտք կամ հաղորդագրություն է փոխանցվում:
- Ո՞վ է ստեղծել կամ հրապարակել այս բովանդակությունը:
- Ի՞նչ հույզեր է այն առաջացնում:
- Ի՞նչ ապացույցներ կամ հիմնավորումներ են ներկայացված:
- Ի՞նչ կարևոր տեղեկություններ են բացակայում:
- Արդյո՞ք կարելի է վստահել այս բովանդակությանը: Ինչու՞:

Խմբերն իրենց դիտարկումները գրանցում են կպչուն թերթիկների վրա:

Մաս 3. Հետաքննության առաջադրանք (30 րոպե)

Մասնակիցներին ներկայացրեք տեղեկությունների ստուգման SIFT մեթոդը: Յուրաքանչյուր խմբի տրամադրեք կասկածելի տեղեկություն պարունակող մեկ նյութ, որը նրանք պետք է ուսումնասիրեն և փորձեն պարզել՝ որքանով է այն արժանահավատ:

Եթե հասանելի է համացանց, խմբերը կարող են գտնել տեղեկության սկզբնաղբյուրը, կատարել պատկերի հակադարձ որոնում, օգտվել փաստերի ստուգման կայքերից և համեմատել ներկայացված տվյալները պաշտոնական վիճակագրության հետ: Եթե աշխատանքն անցկացվում է առանց համացանցի, խմբերին տրամադրեք նախապես տպված «հուշումներ»՝ աղբյուրների, փաստերի, պատկերների կամ այլ տվյալների տեսքով, որոնց միջոցով նրանք կարող են ստուգել ներկայացված տեղեկությունը:

Մաս 4. Ստեղծեք ձեր սեփական կեղծ լուրը (20 րոպե)

Յուրաքանչյուր խումբ ստեղծում է հորինված և միտումնավոր մոլորեցնող լրատվական նյութ: Այն պատրաստելիս խմբերը պետք է գիտակցաբար կիրառեն մանիպուլյացիոն մի քանի հնարք, օրինակ՝ հուզական ազդեցություն ունեցող լեզու, մոլորեցնող վերնագիր, փաստերի ընտրովի ներկայացում, աղբյուրների բացակայություն, հորինված փորձագետի կարծիք, փոփոխված պատկեր կամ չափազանցված վիճակագրական տվյալներ: Այնուհետև խմբերը փոխանակվում են իրենց պատրաստած նյութերով: Յուրաքանչյուր թիմ ուսումնասիրում է մյուս խմբից ստացած նյութը և փորձում բացահայտել դրանում կիրառված բոլոր մանիպուլյացիոն հնարքները: Այս առաջադրանքը մասնակիցներին հնարավորություն է տալիս խնդրին նայել հակառակ տեսանկյունից և գործնականում հասկանալ, թե ինչպես է ստեղծվում ու համոզիչ ներկայացվում մոլորեցնող տեղեկատվությունը:

Ամփոփիչ քննարկման հարցեր

- Ո՞ր նյութերի արժանահավատությունը գնահատելն էր ամենադժվարը: Ինչու՞:
- Ի՞նչն է մոլորեցնող տեղեկությունը համոզիչ դարձնում:
- Երբևէ տարածե՞լ եք որևէ տեղեկություն՝ նախապես չստուգելով դրա հավաստիությունը:
- Ձեր կարծիքով՝ ինչու՞ են կեղծ կամ մոլորեցնող տեղեկություններն այդքան արագ տարածվում:
- Ինչպե՞ս են հույզերն ազդում համացանցում մեր որոշումների և արձագանքների վրա:
- Որպես մեդիա բովանդակության սպառողներ՝ ի՞նչ պատասխանատվություն ենք կրում:
- Ի՞նչ սովորություններ կարող են օգնել մեզ ավելի քննադատաբար մոտենալ մեր ստացած և տարածած տեղեկություններին:

Աղբյուր՝ մշակվել է FECE-ի կողմից՝ VIBE նախագծի շրջանակում:

Դասընթացավարի համար

Փաստերի ստուգման աշխատանքային թերթիկ

Ո՞րն է հիմնական միտքը:
Մեկ նախադասությամբ ամփոփեք ներկայացված հիմնական պնդումը:

Ո՞վ է ստեղծել կամ հրապարակել այն:
Փորձեք պարզել՝ նշվա՞ծ է հեղինակի, լրատվամիջոցի կամ սոցիալական ցանցի օգտատիրոջ անունը, թե՞ աղբյուրն անհայտ է:

ու՞մ է դա ձեռնտու:
Մտածեք, թե ինչ նպատակ կարող է հետապնդել տվյալ բովանդակության ստեղծողը կամ տարածողը: Դա կարող է լինել ֆինանսական շահը, ավելի շատ դիտումներ ու արձագանքներ ստանալը, քաղաքական ազդեցություն գործելը կամ հանրային ճանաչում ձեռք բերելը:

Ի՞նչ հույզեր է այն առաջացնում:
Փորձեք հասկանալ՝ արդյո՞ք բովանդակությունը միտումնավոր փորձում է ուժեղ հուզական արձագանք առաջացնել, օրինակ՝ վախ, զայրույթ, վրդովմունք, զարմանք կամ չափազանց մեծ ոգևորություն:

Ի՞նչ ապացույցներ են ներկայացված:
Ուշադրություն դարձրեք՝ արդյո՞ք նշված են վստահելի աղբյուրներ, փորձագետների անուններ, պաշտոնական տվյալներ կամ ներկայացված են բնօրինակ լուսանկարներ:

Ի՞նչ կարևոր տեղեկություններ են բացակայում:
Ուշադրություն դարձրեք համատեքստի բացակայությանը, մոլորեցնող կամ չափազանցված վերնագրերին և փաստերի ընտրովի ներկայացմանը:
Կվստահեի՞ք այս տեղեկությանը:

Տվեք ձեր վերջնական գնահատականը՝ **այո / վստահ չեմ / ոչ,** և հիմնավորեք ձեր պատասխանը:

Դասընթացավարի համար

SIFT մեթոդ

S – Կանգ առ (Stop)

- Մի՛ շտապիր անմիջապես արձագանքել:

I – Ուսումնասիրիր աղբյուրը (Investigate the source)

- Ո՞վ է հրապարակել տեղեկությունը:
- Հնարավո՞ր է պարզել, թե ով է հեղինակը:
- Ի՞նչ նպատակ է հետապնդում այս հրապարակումը:

F – Փնտրիր այլ վստահելի աղբյուրներ (Find better coverage)

- Արդյո՞ք նույն տեղեկությունը ներկայացված է նաև այլ վստահելի աղբյուրներում:

T – Գտիր սկզբնաղբյուրը (Trace to the original)

- Որտեղի՞ց է սկզբնապես տարածվել այս տեղեկությունը:
- Կա՞ն արդյոք սկզբնական տվյալներ կամ ապացույցներ, որոնք հաստատում են այն:

S top

I nvestigate the source

F ind better coverage

T race to the original

10. Համայնքի զարկերակը. բացահայտելով համայնքի իրական պատկերը

Զարգացվող հմտություններ և հիմնական հասկացություններ	• Ակտիվ լսելու հմտություն և ապրումակցում • Ապացույցների վրա հիմնված մտածողություն • Հանրային հաղորդակցություն և շահերի պաշտպանություն • Սթորիթելինգ՝ հանուն քաղաքացիական ակտիվության
Նպատակներ	• Խրախուսել երիտասարդներին ինքնուրույն բացահայտել, ուսումնասիրել և քարտեզագրել համայնքային խնդիրներն ու հանրայնորեն չբարձրաձայնված պատմությունները: • Զարգացնել ակտիվ լսելու հմտությունները: • Սովորել դիտարկումների հիման վրա ստեղծել ազդեցիկ պատմություններ և ձևակերպել առաջարկներ: • Ամրապնդել երիտասարդների նախաձեռնողականությունն ու քաղաքացիական պատասխանատվությունը:
Անհրաժեշտ նյութեր	Գրիչներ, երկու գույնի կպչուն թերթիկներ, մեծ թղթեր, գունավոր մարկերներ:
Գործիքներ և աղբյուրներ	D.E.A.R. համակցված մոտեցում՝ Բացահայտել – Ներգրավվել – Վերլուծել – Վերաիմաստավորել
Տևողություն	120 րոպե
Մասնակիցների թիվը	15-20 մասնակից

Նկարագրություն

Մաս 1. Համայնքի պատկերի բացահայտում (10 րոպե)

Դասընթացավարը մեծ թղթի վրա գծում է չորս մասից բաղկացած աղյուսակ՝ հանրային տարածքներ, տեղական ծառայություններ, սոցիալական ներառում և շրջակա միջավայր: Յուրաքանչյուր մասնակից կպչուն թերթիկի վրա գրում է իր համայնքում առկա, սակայն հաճախ անտեսված որևէ խնդիր, իրողություն կամ չբարձրաձայնված պատմություն և փակցնում այն աղյուսակի համապատասխան բաժնում: Արդյունքում ձևավորվում է համայնքի ընդհանուր պատկերը, որը հնարավորություն է տալիս միասին բացահայտել և տեսանելի դարձնել ուշադրության կարիք ունեցող հարցերը:

Մաս 2. Բացահայտում. պատմության զարգացման ընթացքի պատկերում (15 րոպե)

Մասնակիցներին բաժանեք 3–5 հոգուց բաղկացած փոքր խմբերի: Յուրաքանչյուր խումբ աղյուսակից ընտրում է փոխկապակցված խնդիրների կամ պատմությունների մեկ թեմատիկ խումբ: Այնուհետև մեծ թղթի վրա թիմերը բլրի տեսքով գծում են պատմության զարգացման կորագիծ և դրա միջոցով փուլ առ փուլ պատկերում ընտրված խնդրի կամ պատմության զարգացումը:

Կորագծի ձախ ստորին հատվածում թիմերը նշում են վայրը և համատեքստը՝ որտեղ և ինչ պայմաններում է տեղի ունենում տվյալ իրավիճակը: Կորագծի գագաթին ձևակերպում են հիմնական խնդիրը՝ տվյալ իրավիճակում առկա գլխավոր դժվարությունը կամ հակասությունը: Կորագծի աջ ստորին հատվածում նշում են խնդրին առնչվող անձանց և խմբերին՝ նրանց, ում վրա տվյալ իրավիճակն անմիջական ազդեցություն է ունենում: Այս կերպ թիմերը ստանում են համայնքում առկա իրավիճակի հստակ և տեսանելի պատկերը, որը հիմք է դառնում խնդրի հետագա՝ ավելի խորքային ուսումնասիրության համար:

Մաս 3. Ներգրավում. դերային հարցազրույց (25 րոպե)

Խմբերն անցկացնում են դերային հարցազրույց: Մասնակիցներից մեկը ստանձնում է տվյալ խնդրին անմիջականորեն առնչվող համայնքի բնակչի կամ շահագրգիռ կողմի դերը, իսկ մյուսները հանդես են գալիս որպես երիտասարդ հետազոտողներ: Հարցազրույցի ընթացքում թիմերը կիրառում են ակտիվ լսելու հմտությունները և տալիս բաց հարցեր՝ փորձելով ավելի լավ հասկանալ տվյալ անձի փորձը, ապրումներն ու տեսակետը: Առավել կարևոր մտքերն ու արտահայտությունները գրանցում են անմիջապես իրենց պատմության զարգացման կորագծի վրա:

Մաս 4. Վերլուծություն. փաստերի և ենթադրությունների տարբերակում (15 րոպե)

Թիմերը մեծ թղթի ստորին կամ կողային հատվածը բաժանում են երկու սյունակի՝ «Ինչ գիտենք հաստատ» և «Ինչ ենք ենթադրում»:

«Ինչ գիտենք հաստատ» սյունակում գրանցում են դերային հարցազրույցի ընթացքում հնչած խոսքերից կարևոր մեջբերումներ, ակնհայտ փաստեր կամ առկա տվյալներ:
«Ինչ ենք ենթադրում» սյունակում նշում են անձնական կարծիքները, ընդհանրացումներն ու կարծրատիպերը, որոնք դեռևս պետք է ստուգել:
Այս աշխատանքն օգնում է մասնակիցներին տարբերակել փաստերը սեփական ենթադրություններից և հնարավոր կողմնակալ մոտեցումներից՝ հետագա առաջարկները կառուցելով իրական ապացույցների, այլ ոչ թե ենթադրությունների վրա:

Մաս 5. Վերաիմաստավորում. լուծման առաջարկի ներկայացում (15 րոպե)

Թիմերն իրենց բացահայտումներն ու եզրահանգումները վերաիմաստավորում և ներկայացնում են երեք րոպեանոց խոսքի ձևաչափով: Ներկայացումը կառուցվում է երեք հիմնական կետի շուրջ.

- Իրական պատկերը. ի՞նչ տեսանելի փաստեր և տվյալներ են ներկայացնում խնդրի իրական պատկերը:
- Մարդկանց ձայնը. ու՞մ փորձն ու տեսակետը պետք է լսելի և տեսանելի դարձնել:
- Գործողությունը. երիտասարդների նախաձեռնությամբ ի՞նչ կոնկրետ քայլ կարելի է ձեռնարկել դրական փոփոխության հասնելու համար:

Մաս 6. Աշխատանքների ընդհանուր ներկայացում և փոխադարձ գնահատում (25 րոպե)

Թիմերն իրենց աշխատանքները փակցնում են սենյակի տարբեր հատվածներում: Մասնակիցները հերթով շրջում են սենյակում, ծանոթանում մյուս թիմերի առաջարկներին և մարկերներով անմիջապես պաստառների վրա գրում իրենց կառուցողական դիտարկումներն ու առաջարկությունները:

Մաս 7. Ամփոփիչ քննարկում և վերլուծություն (15 րոպե)

Դասընթացավարն անցկացնում է ամփոփիչ քննարկում՝ մասնակիցներին օգնելով վերլուծել, թե ինչպես կարելի է համայնքային խնդիրները պարզապես նկատելուց և դիտարկելուց անցնել դրանց փաստերի ու ապացույցների վրա հիմնված ուսումնասիրությանը և ակտիվ քաղաքացիական մասնակցությանը:

Ամփոփիչ քննարկման հարցեր

- Համայնքային խնդիրը պատմության զարգացման կորագծի միջոցով ներկայացնելն ինչպե՞ս օգնեց ավելի լավ հասկանալ և վերլուծել համայնքի կարիքները:
- Դերային հարցազրույցն ի՞նչ օգնեց բացահայտել մեր անձնական ենթադրությունների և մարդկանց իրական փորձի միջև եղած տարբերությունների մասին:
- Ինչու՞ է կարևոր ստուգելի փաստերը տարբերակել ենթադրություններից քաղաքացիական նախաձեռնություններն արդյունավետ ներկայացնելու և պաշտպանելու համար:
- Ո՞րն է այն առաջին քայլը, որը ձեր թիմը կարող է ձեռնարկել արդեն հիմա՝ առաջարկը համայնքում իրական գործողության վերածելու համար:
- Ձեր ներկայացումից ո՞ր հիմնական ուղերձը կցանկանայիք, որ համայնքի բնակիչները հիշեն:
- Այս աշխատանքից հետո ավելի վստահ զգու՞մ եք, որ կարող եք նպաստել ձեր համայնքում դրական փոփոխությունների իրականացմանը: Ինչու՞:

Աղբյուր՝ մշակվել է MilleniuM/FECE-ի կողմից՝ VIBE նախագծի շրջանակում:

11. Շահերի պաշտպանության շրջանակը
Խոսքից՝ գործ

Զարգացվող հմտություններ և հիմնական հասկացություններ	• Հանրային ելույթի հմտություններ • Ուշադիր և ակտիվ լսելու կարողություն • Քննադատական մտածողություն • Ռազմավարական բանակցությունների վարման և համոզելու հմտություններ • Պատումի վերաիմաստավորում և նորովի ներկայացում
Նպատակներ	• Սովորել անձնական կարծիքները վերաձևակերպել և վերածել փաստերի վրա հիմնված, կառուցողական քաղաքացիական նախաձեռնությունների: • Ուսումնասիրել, թե ինչպես կարող են հստակ փաստարկներն ու ստուգելի փաստերը նպաստել համայնքում առկա բևեռացման հաղթահարմանը: • Զարգացնել ապրումակցելու և հակադիր տեսակետներն ակտիվորեն լսելու կարողությունները: • Սովորել պատմությունների միջոցով բարդ համայնքային խնդիրները ներկայացնել մարդկային ու հասկանալի տեսանկյունից:
Անհրաժեշտ նյութեր	Կպչուն ժապավեն՝ հատակին փակցնելու համար, ֆլիպչարտի թղթեր, գունավոր մարկերներ:
Գործիքներ և աղբյուրներ	«3P» կարճ ներկայացման կառուցվածք՝ խնդիր, հիմնավորում, առաջարկ (Problem, Proof, Proposal):
Տևողություն	60–70 րոպե
Մասնակիցների թիվը	15–20 մասնակից

Նկարագրություն

Մաս 1. Միջավայրի նախապատրաստում (10 րոպե)

Դասընթացավարը հատակին ժապավենով գիծ է անցկացնում՝ մի ծայրում տեղադրելով «Լիովին աջակցում եմ», իսկ մյուսում՝ «Թերահավատ եմ» գրությունները: Այնուհետև բացատրում է, որ համայնքային նախաձեռնությունները հաճախ թերահավատության կամ կասկածների են հանդիպում, իսկ շահերի պաշտպանության նպատակը բանավեճում հաղթելը չէ, այլ տարբեր տեսակետներ ունեցող մարդկանց միջև ընդհանուր եզրեր գտնելը: Խմբի առանձնահատկություններից և հետաքրքրություններից ելնելով՝ ընտրվում է ստորև ներկայացված համայնքային իրավիճակներից մեկը կամ նախապես պատրաստված մեկ այլ տարբերակ:

- **Երիտասարդական տարածք և տեղի բնակիչներ.** երիտասարդների խումբը ցանկանում է համայնքին պատկանող լքված այգին վերածել երիտասարդների համար նախատեսված բացօթյա հավաքատեղիի և միջոցառումների անցկացման վայրի: Տեղի բնակիչները կտրականապես դեմ են նախաձեռնությանը՝ մտահոգվելով հնարավոր աղմուկի, աղբի կուտակման և անվտանգության խնդիրներով:
- **Տարեցների թվային գրագիտություն և երիտասարդ կամավորների ներգրավվածություն.** նախաձեռնությամբ առաջարկվում է հանգստյան օրերին կազմակերպել թվային գրագիտության պարտադիր դասընթացներ, որոնց ընթացքում երիտասարդները տարեց բնակիչներին կօգնեն զարգացնել թվային տեխնոլոգիաներից օգտվելու հմտությունները: Սակայն երիտասարդներն արդեն ծանրաբեռնված են և չեն ցանկանում իրենց հանգստյան օրերը տրամադրել այս աշխատանքին՝ առանց իրենց ներդրման պաշտոնական ճանաչման կամ փոխհատուցման:
- **Էկոլոգիապես մաքուր տրանսպորտ և տեղական առևտրականների շահերը.** առաջարկվում է քաղաքի կենտրոնական առևտրային փողոցներից մեկը դարձնել հետիոտնային գոտի՝ վնասակար արտանետումները նվազեցնելու և համայնքի բնակիչների համար նոր հանրային տարածքներ ստեղծելու նպատակով: Տեղի խանութների սեփականատերերը մտահոգված են, որ կայանման և ապրանքների առաքման հնարավորությունների սահմանափակումը կարող է հանգեցնել հաճախորդների և եկամուտների կրճատման:

Մաս 2. 3P ձևաչափով համոզիչ առաջարկի պատրաստում (20 րոպե)

Մասնակիցներին բաժանեք 4–5 հոգանոց փոքր խմբերի: Յուրաքանչյուր թիմ մեծ թղթի վրա, 3P ձևաչափի օգնությամբ, պատրաստում է երեք րոպեանոց համոզիչ ներկայացում, որի նպատակն է փարատել նախաձեռնության վերաբերյալ կասկածները և ստանալ թերահավատորեն մոտեցողների աջակցությունը: Ներկայացումը կառուցվում է երեք հիմնական բաղադրիչի շուրջ՝

- **Խնդիր (Problem)** Ո՞րն է համայնքում առկա կոնկրետ խնդիրը, ու՞մ է այն առնչվում, և ինչու՞ է կարևոր դրան անդրադառնալ հենց հիմա:
- **Հիմնավորում (Proof)** Ի՞նչ ստուգելի փաստ, տվյալ կամ փոխզիջումային առաջարկ կարող է պատասխանել մարդկանց հիմնական մտահոգություններին և փարատել նրանց կասկածները:
- Օրինակ՝ տվյալները ցույց են տալիս, որ երիտասարդական կենտրոնների առկայությունը 30%-ով նվազեցնում է վանդալիզմի դեպքերը, իսկ աղմուկի վերաբերյալ մտահոգությունները հաշվի առնելու համար առաջարկվում է ժամը 22:00-ից հետո պահպանել լռություն:
- **Առաջարկ (Proposal)** Երիտասարդների նախաձեռնությամբ ի՞նչ կոնկրետ լուծում կարելի է առաջարկել, որը թերահավատ բնակիչներին ոչ թե կհակադրի նախաձեռնությանը, այլ հնարավորություն կտա նրանց ևս օգտվել դրանից կամ մասնակցել դրա իրականացմանը:

Մաս 3. Դիրքորոշումների փոփոխություն և համոզիչ ներկայացում (20 րոպե)

Բոլոր մասնակիցները կրկին կանգնում են հատակին նշված դիրքորոշումների գծի վրա՝ ընտրված համայնքային իրավիճակի վերաբերյալ իրենց սկզբնական դիրքորոշմանը համապատասխան: Յուրաքանչյուր խումբ ներկայացնում է 3P ձևաչափով պատրաստած իր երեք րոպեանոց առաջարկը: Յուրաքանչյուր ներկայացումից հետո «Թերահավատ եմ» հատվածում կանգնած 1–2 մասնակից բարձրաձայնում են իրենց հիմնական մտահոգությունը կամ այն հարցը, որի վերաբերյալ դեռևս կասկածներ ունեն: Ներկայացնող թիմին տրվում է մեկ րոպե՝ իր ներկայացրած փաստերի և առաջարկի հիման վրա պատասխանելու այդ մտահոգությանը կամ առաջարկելու փոխզիջումային լուծում: Քննարկումն ավարտելուց հետո դասընթացավարը մասնակիցներին ասում է. «Եթե ներկայացված փաստարկներն ու թիմի պատասխանները փոխեցին ձեր տեսակետը կամ փարատեցին ձեր կասկածներից որևէ մեկը, մեկ քայլ առաջ շարժվեք՝ դեպի «Լիովին աջակցում եմ» հատվածը»: Մասնակիցների տեղաշարժը դիրքորոշումների գծի վրա տեսանելի է դարձնում, թե որքանով են հիմնավորված փաստարկները, կառուցողական երկխոսությունն ու փոխզիջման պատրաստակամությունը կարող փոխել մարդկանց վերաբերմունքը և նպաստել նախաձեռնության նկատմամբ աջակցության ձևավորմանը:

Մաս 4. Ամփոփիչ քննարկում և վերլուծություն (15 րոպե)

Դասընթացավարն անցկացնում է ընդհանուր ամփոփիչ քննարկում՝ մասնակիցների հետ վերլուծելով, թե ինչպես կարելի է կառուցողական կերպով ազդել համայնքային գործընթացների վրա, լսել ու հասկանալ տարբեր տեսակետներ և ընդհանուր եզրեր գտնել հակադիր դիրքորոշումներ ունեցող մարդկանց միջև:

Ամփոփիչ քննարկման հարցեր

- Ի՞նչ զգացողություն էր համայնքային նախաձեռնությանը թերահավատորեն մոտեցող մարդու դերում հայտնվելը:
- 3P ձևաչափն օգնե՞ց ձեզ ավելի հստակ ձևակերպել և կառուցել ձեր մտքերը:
- Ներկայացման ո՞ր պահին այն սկսեց ընկալվել որպես իրական պատմություն, այլ ոչ թե պարզապես փաստարկների շարադրանք:
- Հակառակ տեսակետը լսելն ինչպե՞ս ազդեց ձեր առաջարկի ձևակերպման վրա:
- Կոնկրետ ի՞նչը ստիպեց ձեզ փոխել ձեր դիրքը դիրքորոշումների գծի վրա:
- Մտածեք ձեր համայնքում առկա որևէ իրական խնդրի կամ նախաձեռնության մասին, դրանցից ո՞րի դեպքում կարող եք կիրառել այս մոտեցումը՝ մարդկանց սկզբնական դիմադրությունը աջակցության վերածելու համար:

Աղբյուր՝ մշակվել է MilleniuM/FECE-ի կողմից՝ VIBE նախագծի շրջանակում:

12. Միասին՝ հանուն համայնքային խնդիրների լուծման

Զարգացվող հմտություններ և հիմնական հասկացություններ	• Համագործակցություն և ակտիվ մասնակցություն երկխոսությանը • Համայնքային ներգրավվածություն • Քննադատական մտածողություն և խնդիրների լուծման հմտություններ • Ակտիվ լսելու հմտություններ
Նպատակներ	• Բացահայտել համայնքում առկա հրատապ խնդիրները՝ հաշվի առնելով երիտասարդների տարբեր տեսակետներն ու փորձը: • Համատեղ մշակել իրատեսական և երիտասարդների նախաձեռնությամբ իրականացվող քայլեր, որոնք կարող են դրական փոփոխություն բերել համայնքում: • Զարգացնել կառուցողական երկխոսություն վարելու և համայնքային խնդիրների համար համատեղ լուծումներ գտնելու հմտությունները: • Բացահայտել և քարտեզագրել համայնքում առկա ռեսուրսներն ու այն հնարավոր գործընկերներին, որոնք կարող են աջակցել նախաձեռնությունների իրականացմանը: • Ամրապնդել երիտասարդների առաջնորդության հմտությունները և խթանել նրանց ակտիվ մասնակցությունը որոշումների կայացման գործընթացներին:
Անհրաժեշտ նյութեր	Աթոռներ (դասավորված երեք առանձին խմբային աշխատանքային հատվածներում), մեծ թղթեր, գրատախտակներ՝ թղթերն ամրացնելու համար (ըստ ցանկության), գունավոր մարկերներ, երեք տարբեր գույնի կպչուն թերթիկներ, ժամաչափ:
Գործիքներ և աղբյուրներ	«World Café» («Համաշխարհային սրճարան») մեթոդ — The World Café Community Foundation («Համաշխարհային սրճարան» համայնքային հիմնադրամ)
Տևողություն	80-90 րոպե
Մասնակիցների թիվը	12-15 մասնակից

Նկարագրություն

Մաս 1. Ներածություն (10 րոպե)

Դասընթացավարը ներկայացնում է ինտերակտիվ աշխատաժողովի նպատակը՝ մասնակիցների հետ համատեղ մշակել համայնքային գործողությունների ընդհանուր քարտեզ: Սենյակում նախապես առանձնացվում է քննարկման երեք հատված, որտեղ մասնակիցներն աշխատելու են խմբերով և պարբերաբար փոխելու են իրենց տեղերը:

Դասընթացավարը ներկայացնում է նաև աշխատանքի հիմնական կանոնները. մասնակիցները պետք է կենտրոնանան գործնական լուծումների վրա, իրենց գաղափարներն անմիջապես գրանցեն աշխատանքային թերթիկների վրա, շարունակեն և զարգացնեն միմյանց առաջարկները և քննարկումների ողջ ընթացքում ուշադիր լսեն միմյանց:

Ինչպես են կազմակերպվում փուլերը և խմբերի հերթափոխը (Համառոտ բացատրություն դասընթացավարի համար)

Ուղղորդող հարց. դասընթացավարի կողմից ներկայացվող հիմնական հարցը, որի շուրջ ծավալվում է խմբային քննարկումը:

Քննարկման նպատակը. յուրաքանչյուր փուլի ակնկալվող արդյունքը և քննարկման համար սահմանված պայմանները: Դրանք օգնում են քննարկումը պահել նպատակային և արդյունավետ՝ մասնակիցներին ուղղորդելով հնարավորինս հստակ ու կոնկրետ պատասխանների, այլ ոչ թե ընդհանուր ձևակերպումների:

Խմբերի հերթափոխ (2 րոպե). յուրաքանչյուր *15*-րոպեանոց փուլի ավարտին յուրաքանչյուր քննարկման հատվածում պատահականորեն ընտրված մեկ մասնակից մնում է տեղում՝ որպես խմբի պատասխանատու, իսկ մյուս մասնակիցները տեղափոխվում են հաջորդ քննարկման հատված: Երկու րոպե տևողությամբ անցման ընթացքում խմբի պատասխանատուն մոտ մեկ րոպեում նոր խմբին համառոտ ներկայացնում է նախորդ քննարկման հիմնական մտքերն ու առաջարկները:

Յուրաքանչյուր փուլի ընթացքում մասնակիցներն իրենց գաղափարները գրում կամ պատկերում են երեք տարբեր գույնի կպչուն թերթիկների վրա՝ ըստ տվյալ քննարկման հատվածի թեմայի և նպատակի: Նոր խումբը աշխատանքը սկզբից չի սկսում և չի փոփոխում արդեն գրանցված գաղափարները:

Փոխարենը մասնակիցները նախ ծանոթանում են նախորդ խմբերի աշխատանքին, ապա իրենց նոր կպչուն թերթիկներն ավելացնում արդեն եղածների կողքին՝ զարգացնելով, լրացնելով և հարստացնելով նախորդ մասնակիցների առաջարկները:

Մաս 2. Քննարկման երեք փուլերը (45 րոպե)

Փուլ 1. Համայնքի իրական խնդիրների բացահայտում (15 րոպե)

Ուղղորդող հարց. Այսօր մեր համայնքում երիտասարդներն ի՞նչ հրատապ, բայց հաճախ անտեսված խնդիրների են բախվում:

Քննարկման նպատակը. բացահայտել համայնքում առկա կոնկրետ խնդիրները՝ խուսափելով ընդհանուր դժգոհություններից և չափազանց ընդհանրացված ձևակերպումներից: (2 րոպե՝ խմբերի հերթափոխ. մասնակիցները տեղափոխվում են քննարկման հաջորդ հատված, իսկ խմբի պատասխանատուն նոր խմբին համառոտ ներկայացնում է նախորդ քննարկման հիմնական մտքերը:)

Փուլ 2. Համայնքի հնարավորությունների բացահայտում (15 րոպե)

Ուղղորդող հարց. Մեր համայնքում ի՞նչ չօգտագործված ռեսուրսներ, հնարավոր գործընկերներ կամ ուժեղ կողմեր կան, որոնք կարող ենք օգտագործել բացահայտված խնդիրների լուծման համար:

Քննարկման նպատակը. ուշադրությունը «ի՞նչն է մեզ պակասում» հարցից տեղափոխել դեպի «ի՞նչ ունենք և ինչպե՞ս կարող ենք դա օգտագործել» մոտեցումը: Օրինակ՝ տեղական բիզնեսներ, դպրոցներ, թվային գործիքներ, ակտիվ և նախաձեռնող երիտասարդներ:

(2 րոպե՝ խմբերի հերթափոխ. մասնակիցները վերջին անգամ տեղափոխվում են քննարկման հաջորդ հատված:)

Փուլ 3. Լուծման մշակում (15 րոպե)

Ուղղորդող հարց. Երիտասարդների նախաձեռնությամբ ի՞նչ կոնկրետ ծրագիր կամ գործողություն կարող ենք առաջարկել տեղական որոշումներ կայացնողներին՝ տվյալ խնդրի լուծման համար:

Քննարկման նպատակը. մշակել իրագործելի առաջարկ՝ հստակ սահմանելով դրա իրականացման առաջին քայլերը:

Մաս 3. Արդյունքների ամփոփում և գործողությունների քարտեզի կազմում (10 րոպե)

Արդյունքները ամփոփելու համար երեք խմբերի պատասխանատուներն իրենց աշխատանքային թերթիկները բերում են սենյակի առջևում տեղադրված մեծ թղթի մոտ: Դասընթացավարի հետ միասին նրանք ընտրում և խմբավորում են կպչուն թերթիկների վրա գրանցված հիմնական գաղափարները և ամփոփում քննարկումների կարևոր եզրահանգումները՝ կազմելով համայնքային գործողությունների միասնական քարտեզ:

Քարտեզը բաժանվում է երեք հիմնական սյունակի՝

- Խնդիր
- Ռեսուրս / հնարավոր գործընկեր
- Հաջորդ քայլ

Մաս 4. Ամփոփիչ քննարկում և վերլուծություն (15 րոպե)

Աշխատանքն ավարտվում է ընդհանուր քննարկմամբ, որի ընթացքում դասընթացավարը մասնակիցներին ուղղորդում է վերլուծելու, թե ինչպես կարելի է առաջարկված գաղափարներով իրական փոփոխություն բերել համայնքում, հասկանալ և հաշվի առնել տարբեր տեսակետները և քննարկումների ընթացքում ձևավորված գաղափարները վերածել հստակ ու իրագործելի քայլերի:

Ամփոփիչ քննարկման հարցեր

- Ո՞ր գաղափարն ամենաշատը փոխվեց և զարգացավ, երբ տարբեր խմբեր դրան ավելացրին իրենց տեսակետներն ու առաջարկները:
- Այսօրվա համատեղ աշխատանքի ընթացքում ձևավորված ո՞ր փոխզիջումային տարբերակը կամ լուծումն էր ձեզ համար ամենահետաքրքիրը:
- Արդյո՞ք ստիպված եղաք հրաժարվել ձեր սկզբնական գաղափարից՝ ավելի լավ լուծման հնարավորություն տալու համար:
- Մյուս մասնակիցների նշած ռեսուրսներից կամ հնարավոր գործընկերներից ո՞րն էր ձեզ համար անսպասելի, որի մասին նախկինում չէիք մտածել:
- Աշխատանքի ավարտին ընդհանուր քարտեզի վրա տեսա՞ք նաև ձեր առաջարկած գաղափարները:
- Ինչպե՞ս կարող եք այս եռաստիճան մոտեցումը՝ խնդիր – ռեսուրս – լուծում, կիրառել ձեր համայնքային ծրագրերում և նախաձեռնություններում:

Աղբյուր՝ մշակվել է MilleniuM/FECE-ի կողմից՝ VIBE նախագծի շրջանակում:

13. Միասին կերտելով փոփոխություն

Զարգացվող հմտություններ և հիմնական հասկացություններ	• Ապրումակցում և ակտիվ լսելու հմտություններ • Կարծրատիպերի հաղթահարում • Միջմշակութային երկխոսություն • Համայնքային խնդիրների լուծման հմտություններ
Նպատակներ	• Բացահայտել և վերաիմաստավորել կարծրատիպերը՝ երիտասարդների միջև անձնական պատմությունների փոխանակման միջոցով: • Զարգացնել բջջային տեխնոլոգիաների օգնությամբ արագ տեղեկատվություն որոնելու, այն քննադատաբար գնահատելու և հնարավոր լուծումներ գտնելու հմտությունները: • Խթանել ներառական թիմային աշխատանքը, ակտիվ լսելու հմտությունները և համայնքային ու քաղաքացիական հարցերի շուրջ կառուցողական քննարկումը: • Ապահով միջավայրում զարգացնել գաղափարները համոզիչ ներկայացնելու և հանրային խոսքի հմտությունները: • Անձնական պատմություններն ու փորձը վերածել երիտասարդների նախաձեռնությամբ իրականացվող գործնական քայլերի:
Անհրաժեշտ նյութեր	Գրիչներ, մեծ թղթեր, գունավոր մարկերներ, կպչուն թերթիկներ, համացանցին միացված հեռախոսներ, ժամաչափ:
Գործիքներ և աղբյուրներ	Մշակվել է «Կենդանի գրադարան» մեթոդի հիման վրա:
Տևողություն	75-80 րոպե
Մասնակիցների թիվը	15-20 մասնակից
Ուսումնական նյութեր	Թվային հետազոտության ուղեցույց (յուրաքանչյուր խմբի համար մեկ օրինակ կամ մեծ թղթի վրա գրված՝ բոլոր մասնակիցների համար տեսանելի ձևով):

Նկարագրություն

Մաս 1. Ներածություն և նախապատրաստում (10 րոպե)

Դասընթացավարը բացատրում է, որ աշխատանքի ընթացքում մասնակիցները հերթով ստանձնելու են «Կենդանի գրքի»՝ պատմողի, և «Ընթերցողի»՝ լսողի ու հետազոտողի դերերը: Նպատակն է լսել համայնքի մարդկանց իրական փորձն ու պատմությունները և թվային գործիքների օգնությամբ դրանց հիման վրա գտնել համայնքային խնդիրների լուծման հնարավոր ուղիներ:

Մասնակիցները բաժանվում են երեք խմբի և տեղավորվում սենյակի տարբեր հատվածներում: Նախքան աշխատանքը սկսելը սահմանվում են նաև մի քանի հիմնական սկզբունքներ՝ փոխադարձ հարգանք, ակտիվ լսելու հմտություններ և տարբեր տեսակետներ լսելու ու ընդունելու պատրաստակամություն:

Մաս 2. Պատմության ներկայացում (10 րոպե)

Երեք խմբերից յուրաքանչյուրին տրվում է 3–4 րոպե՝ քննարկելու և ընտրելու մեկ կոնկրետ պատմություն կամ թեմա, որի շուրջ շարունակելու են աշխատանքը: Այնուհետև խմբի անդամներից մեկը ստանձնում է «Կենդանի գրքի» դերը և մոտ 5 րոպեի ընթացքում ներկայացնում անձնական փորձի կամ համայնքում նկատած որևէ խնդրի կամ կարծրատիպի վրա հիմնված պատմություն: Օրինակ՝ խտրականություն, երիտասարդների պասիվ մասնակցություն համայնքային կյանքին, հանրային տարածքների պակաս կամ բնապահպանական խնդիրներ: Խմբի մյուս անդամները ուշադիր լսում են պատմությունը՝ առանց ընդհատելու՝ պատրաստվելով հաջորդ փուլում ստանձնել «Ընթերցողների» դերը: Եթե մասնակիցներից ոչ ոք չի ցանկանում անմիջապես կիսվել անձնական պատմությամբ, խումբը կարող է ընտրել համայնքում բոլորին հայտնի որևէ խնդիր կամ տարածված կարծրատիպ և հետագա աշխատանքը կառուցել դրա շուրջ:

Մաս 3. Պատմության ուսումնասիրություն և թվային հետազոտություն (20 րոպե)

Պատմությունը լսելուց հետո խումբն անցնում է դրա ավելի խորքային ուսումնասիրությանը՝ որպես ուղղորդող գործիք օգտագործելով «Թվային հետազոտության ուղեցույցը»:

Հստակեցնող հարցեր (5 րոպե)

«Ընթերցողները» կարճ և հարգալից հարցեր են տալիս «Կենդանի գրքին»՝ պատմությունն ավելի լավ հասկանալու և դրանում առկա հիմնական խնդիրը, խոչընդոտը կամ կարծրատիպը բացահայտելու համար:

Թվային հետազոտություն (15 րոպե)

Ուղեցույցում ներկայացված հարցերի օգնությամբ մասնակիցներն իրենց հեռախոսներով ուսումնասիրում են, թե աշխարհի տարբեր քաղաքներում, կազմակերպություններում կամ երիտասարդական ծրագրերում ինչպես են հաջողությամբ լուծել նմանատիպ խնդիրներ, հաղթահարել նման խոչընդոտներ կամ պայքարել նման կարծրատիպերի դեմ: Որոնման արդյունքներից նրանք ընտրում են 1–2 գործնական և ոգեշնչող օրինակ, որոնք հնարավոր կլինի դիտարկել նաև իրենց համայնքի համատեքստում:

Մաս 4. Գործողությունների թերթիկի կազմում (20 րոպե)

Յուրաքանչյուր խումբ մեկ մեծ թղթի վրա համադրում է «Կենդանի գրքի» պատմությունն ու թվային հետազոտության ընթացքում գտած տեղեկությունները՝ կազմելով չորս բաժնից բաղկացած «Գործողությունների թերթիկ»:

- **Խնդիրը.** պատմության մեջ ներկայացված հիմնական խնդրի կամ իրավիճակի համառոտ նկարագրությունը:
- **Կարծրատիպը / խոչընդոտը.** տվյալ խնդրի հետ կապված հիմնական նախապաշարմունքը, կարծրատիպը կամ սոցիալական խոչընդոտը:
- **Այլ երկրների փորձը.** թվային հետազոտության ընթացքում բացահայտված՝ տվյալ խնդրին առավել համապատասխան հաջողված փորձը կամ նախաձեռնությունը:
- **Մեր քայլը համայնքում.** կոնկրետ և իրատեսական քայլ, որը երիտասարդները կարող են ձեռնարկել իրենց համայնքում՝ տվյալ խնդրի լուծումը սկսելու համար:

Մաս 5. Գաղափարի ներկայացում (10 րոպե)

Յուրաքանչյուր խումբ ընտրում է մեկ ներկայացուցչի կամ հանդես է գալիս ամբողջ թիմով: Խումբը համառոտ ներկայացնում է իր «Կենդանի գրքի» պատմությունը, այնուհետև մյուս մասնակիցներին ներկայացնում է իր կազմած «Գործողությունների թերթիկը»: Յուրաքանչյուր խմբին հատկացվում է 3 րոպե: Դասընթացավարը հետևում է, որ ներկայացումները կենտրոնանան գործնական լուծումների և երիտասարդների կողմից նախաձեռնվող կոնկրետ քայլերի վրա:

Մաս 6. Ամփոփիչ քննարկում և վերլուծություն (15 րոպե)

Դասընթացավարը բոլոր մասնակիցներին հրավիրում է ընդհանուր քննարկման՝ միասին վերլուծելու, թե այս աշխատանքն ինչպես նպաստեց ապրումակցման, թվային գրագիտության և քաղաքացիական մասնակցության զարգացմանը:

Ամփոփիչ քննարկման հարցեր

- Համացանցում իրական օրինակների ուսումնասիրությունն ինչ-որ կերպ փոխե՞ց կամ ընդլայնե՞ց ձեր պատկերացումները սկզբում ներկայացված պատմության կամ կարծրատիպի վերաբերյալ:
- Ինչպե՞ս կարող են երիտասարդներն առօրյա կյանքում ավելի արդյունավետ օգտագործել թվային գործիքները՝ համայնքային և քաղաքացիական խնդիրներին արձագանքելու համար:
- Այսօր ներկայացված պատմություններից կամ թեմաներից որո՞նք ամենամեծ տպավորությունը թողեցին ձեզ վրա:
- Ինչպե՞ս կարող է բաց և անկեղծ երկխոսությունը նպաստել ավելի համախմբված և կարծրատիպերից զերծ համայնքի ձևավորմանը:
- Ո՞րն է առաջին հաղորդագրությունը կամ հրապարակումը, որը կարող եք հենց այսօր տարածել՝ մարդկանց ուշադրությունը ձեր առաջարկած լուծման վրա հրավիրելու և նրանց հետաքրքրությունը առաջացնելու համար:

Աղբյուր՝ մշակվել է MilleniuM/FECE-ի կողմից՝ VIBE նախագծի շրջանակում:

Բաշխիչ նյութ 1

Թվային հետազոտության ուղեցույց

1. Որո՞նք են «Կենդանի գրքի» ներկայացրած խնդիրը բնութագրող 2–3 հիմնական բանալի բառերը: (Օրինակ՝ երիտասարդների ներգրավվածություն և հանրային տարածքներ, երիտասարդների շրջանում խտրականության դեմ պայքար, ուսանողների բնապահպանական նախաձեռնություններ համայնքում:)

2. Մեկ այլ քաղաքում, ՀԿ-ում կամ դպրոցում փորձե՞լ են լուծել նմանատիպ խնդիր: Ի՞նչ կոնկրետ ծրագիր կամ նախաձեռնություն են իրականացրել:

3. Ի՞նչ միջոցներ են օգտագործել նախաձեռնությունը հաջողությամբ իրականացնելու համար՝ սոցիալական ցանցե՞ր, ինտերակտիվ քարտեզնե՞ր, ստեղծագործական միջոցառումնե՞ր, համայնքային ստորագրահավաքնե՞ր:

4. Նրանց հաջողված փորձից ո՞ր մեկ գաղափարը կամ մոտեցումը կարող ենք հեշտությամբ կիրառել կամ հարմարեցնել մեր համայնքում:

14. Սթենդափի ստեղծագործական արվեստանոց

Զարգացվող հմտություններ և հիմնական հասկացություններ	• Ստեղծագործական և արագ մտածելու հմտություններ • Համագործակցային մտածելակերպ • Ինքնարտահայտման վստահության ամրապնդում • Ուրիշների առջև խոսելու կաշկանդվածության հաղթահարում
Նպատակներ	• Օգնել մասնակիցներին ավելի վստահ զգալ իմպրովիզացիայի ժամանակ: • Ծանոթացնել սթորիթելինգի և պատմության ստեղծման հիմնական փուլերին: • Ցույց տալ, թե ինչպես կարելի է ստեղծագործական գործընթացը դարձնել արդյունավետ և նպատակային: • Ընդգծել պատմության կառուցման ընթացքում հետևողական և մանրակրկիտ աշխատանքի կարևորությունը: • Զարգացնել ուրիշների հետ աշխատելիս բաց լինելու, նրանց գաղափարներն ընդունելու և համագործակցելու կարողությունը:
Անհրաժեշտ նյութեր	Բավարար տարածք, որպեսզի բոլոր մասնակիցները կարողանան խմբերով կանգնած աշխատել, ստվարաթուղթ (նախընտրելի է) կամ թուղթ, գրիչներ:
Գործիքներ և աղբյուրներ	Պատմության կառուցվածքն ու պատմության զարգացման կորագիծը պարզ և մատչելի ձևով ներկայացնող կարճ տեսանյութերի օրինակներ՝ տեսանյութ 1 կամ տեսանյութ 2: Եթե մասնակիցները նոր են ծանոթանում սթորիթելինգի գործնական աշխատանքներին, ցանկալի է ընտրել ոչ շատ բարդ և հեշտ ընկալվող տեսանյութեր:
Տևողությունը	60 րոպե
Մասնակիցների թիվը	15-40 մասնակից
Ուսումնական նյութ	• Պատմության չորս հիմնասյուները (ըստ ցանկության) • Պատմության եռամաս կառուցվածքը (ըստ ցանկության)

Նկարագրություն

Նախապես պատրաստեք թղթի կամ ստվարաթղթի կտորների հինգ հավաքածու: Յուրաքանչյուր հավաքածուի վրա գրեք հետևյալ հինգ խմբերից մեկին պատկանող տարբեր բառեր կամ արտահայտություններ. գոյականներ (սեղան, շուն, բանան և այլն), կերպարներ (մսագործ, Տանյա, ոստիկան և այլն), գործողություններ (ուտել, կտրել, շերտատել և այլ), վայրեր (փողոցում, բազմոցին, մեքենայի ուղևորի նստատեղին և այլն),ժամանակ (վաղ առավոտյան, ժամը 02:00-ին, տասնհինգ րոպեից և այլն):

Մասնակիցներին հարցրեք, թե ինչ են հասկանում սթորիթելինգ ասելով և, իրենց կարծիքով, ի՞նչն է պատմությունը հետաքրքիր ու հաջողված դարձնում: Այնուհետև համառոտ ներկայացրեք սթորիթելինգի հիմնական սկզբունքները և պատմության կառուցվածքի հետևյալ բաղադրիչները՝ ուշադրություն գրավող սկիզբ, կերպար, հակասություն կամ երկընտրանք և հանգուցալուծում: Անհրաժեշտության դեպքում ներկայացրեք նաև օրինակներ՝ օգտվելով Բաշխիչ նյութ 1-ից և Բաշխիչ նյութ 2-ից (ըստ ցանկության):

Մասնակիցներին բաժանեք 5 հոգանոց խմբերի: Խմբի անդամների թիվը պետք է համապատասխանի նախապես պատրաստված քարտերի հինգ խմբերին, որպեսզի յուրաքանչյուր մասնակից ստանա տարբեր խմբի պատկանող մեկ բառ: Ցանկալի է մասնակիցներին խմբերի բաժանել պատահականության սկզբունքով, սակայն, կախված իրավիճակից, դա պարտադիր չէ: Խմբերը ձևավորելուց հետո յուրաքանչյուր խմբից հերթով հրավիրեք մասնակիցներին մոտենալ և ընտրել մեկական քարտ՝ տարբեր խմբերից: Քարտերը դրեք գրությամբ դեպի ներքև, որպեսզի ընտրությունը պատահական լինի՝ վիճակահանության նման: Այնուհետև խնդրեք խմբերին տեղավորվել սենյակի տարբեր հատվածներում և բացատրեք, որ առաջադրանքը կատարելու համար նրանք ունենալու են 10–15 րոպե:

Յուրաքանչյուր խումբ պետք է իր ընտրած պատահական բառերն օգտագործելով ստեղծի մեկ ամբողջական պատմություն: Հիշեցրեք, որ պատմությունը պետք է ունենա հստակ կառուցվածք՝ ուշադրություն գրավող սկիզբ, կերպար, հակասություն կամ երկընտրանք և հանգուցալուծում: Միացրեք ժամաչափը և խմբերին տրամադրեք նախատեսված ժամանակը: Ժամանակի ավարտից քիչ առաջ զգուշացրեք մասնակիցներին, եթե, իհարկե, նրանք ավելի շուտ չեն ավարտել աշխատանքը: Այնուհետև հերթով հրավիրեք յուրաքանչյուր խմբին ներկայացնելու իր պատմությունը: Ներկայացումից հետո ստեղծագործ և հետաքրքիր հարցերի միջոցով օգնեք մասնակիցներին բացահայտել պատմության երկընտրանքը, հանգուցալուծումը և մյուս հիմնական բաղադրիչները: Քննարկումը վարեք ազատ ու անկաշկանդ՝ առանց պատմությունները գնահատելու կամ դատողություններ անելու: Կարող եք անդրադառնալ նաև պատմություններում հնչած զվարճալի կամ հետաքրքիր դրվագներին:

Մասնակիցներին տրամադրեք հինգ րոպե ընդմիջում, որից հետո կրկին հավաքեք խմբին՝ ամփոփիչ քննարկման համար: Վերջում կարող եք առաջարկել նաև թեմային առնչվող լրացուցիչ տեսանյութերի կամ այլ նյութերի ցանկ:

Ամփոփիչ քննարկման հարցեր

- Ի՞նչ զգացողություններ ունեցաք այս աշխատանքի ընթացքում:
- Պատմության կառուցվածքի ո՞ր բաղադրիչն էր ձեզ համար ամենահեշտը ստեղծել, իսկ ո՞րը՝ ամենադժվարը՝ ուշադրություն գրավող սկիզբը, կերպարը, հակասությունը, թե՞ հանգուցալուծումը:
- Որքանո՞վ էիք ձեզ ազատ և վստահ զգում պատմությունը ներկայացնելիս: Ներկայացման ընթացքում ստիպված եղա՞ք տեղում որևէ բան հորինել կամ իմպրովիզացիա անել:
- Պատահական ընտրված տարրերն արագ համադրելու և դրանցից հստակ պատմություն ստեղծելու կարողությունն ինչպե՞ս կարող է օգտակար լինել ձեզ առօրյա կյանքում կամ աշխատանքում:
- Հիմա, երբ հետադարձ հայացք եք գցում այս աշխատանքին, պատկերացնու՞մ եք, թե ձեր կամ մեկ այլ խմբի պատմությունն ինչպե՞ս կարող էր այլ կերպ զարգանալ:

Աղբյուր՝ մշակվել է VisMed-ի կողմից՝ VIBE նախագծի շրջանակում:

Բաշխիչ նյութ 1

Պատմության չորս տարրերը

Յուրաքանչյուր պատմություն՝ 15 վայրկյան տևողությամբ Reel-ից մինչև լիամետրաժ ֆիլմ, հենվում է այս չորս հենասյուների վրա: Գտեք դրանք, և կառուցվածքը կհետևի:

01 Կերպար

Պատմությունը ու՞մ մասին է:

Այն մարդը, որին մենք հետևում ենք և որի մասին հոգ ենք տանում: Հանդիսատեսին պետք է մեկը, ում համար կարելի է երկրպագել՝ դեմք, ձայն, տեսակետ:

02 Նպատակ

Ի՞նչ են ցանկանում:

Հստակ և կոնկրետ նպատակ, որից բխում է հերոսի յուրաքանչյուր գործողությունը: Առանց նպատակի պատմությունը կորցնում է իր ուղղությունն ու զարգացումը կանգ է առնում:

03 Խոչընդոտ

Ի՞նչն է խանգարում?

Հակամարտությունը կարող է լինել արտաքին (մրցակից, սահմանված ժամկետ) կամ ներքին (վախ, կասկած): Հենց այստեղ է ծնվում և զարգանում պատմությունը:

04 Փոփոխություն

Ի՞նչ փոփոխությունների են ենթարկվում:

Պատմության ավարտին հերոսը կամ նույնիսկ դիտողն այլևս նույնը չէ, ինչ սկզբում էր: Հենց սա է պատմության ազդեցիկ հանգուցալուծումը:

Զարգացում →

Կերպար + Նպատակ — ստեղծում են պատմության սկիզբը:
Խոչընդոտ — ձևավորում է պատմության միջնամասը:
Փոփոխություն — ապահովում է պատմության ավարտը:

Բաշխիչ նյութ 2

Երեք գործողությամբ կառուցվածք

Լարվածությունը պատմության ընթացքում նույն մակարդակի վրա չի մնում, այն աստիճանաբար աճում է: Ցանկացած պատմություն կարելի է ներկայացնել հակասության զարգացման կորագծով, որտեղ լարվածությունն աստիճանաբար ուժեղանում է, հասնում իր գագաթնակետին, ապա հանգուցալուծվում:



Գործողություն I
Սկիզբ

Սահմանեք սկզբնական իրավիճակը և կերպարի սովորական աշխարհը, ապա խախտեք այն: Խթանող իրադարձությունը (inciting incident) այն կայծն է, որը շարժման մեջ է դնում հերոսի նպատակը:

Գործողություն II
Զարգացում

Հակամարտությունը սրվում է խոչընդոտների և փոքր բախումների միջոցով: Վտանգներն աճում են, բարդությունները կուտակվում են՝ պատմությունը տանելով դեպի գագաթնակետ՝ ամենաբարձր լարվածության պահը:

Գործողություն III
Ավարտ

Լարվածությունը թուլանում է: Հակամարտությունը լուծվում է, նպատակը ձեռք է բերվում կամ ձախողվում, իսկ փոփոխությունը՝ սովորած դասը, հասնում է հանդիսատեսին:

Կանոն → Մեծացրեք վտանգները. վատագույնը, որ կարող է տեղի ունենալ, եթե նպատակը չկատարվի:

15. ու՞ր է տանում պատմությունը

Զարգացվող հմտություններ և հիմնական հասկացություններ	• Ստեղծագործական և արագ մտածելու հմտություններ • Համագործակցային մտածելակերպ • Ակտիվ լսելու հմտություններ • Ապրումակցում և ընդունելու կարողություն • Ինքնարտահայտման վստահության ամրապնդում • Ուրիշների առջև խոսելու կաշկանդվածության հաղթահարում
Նպատակներ	• Խթանել մասնակիցների ստեղծագործական մտածողությունը: • Զարգացնել ազատ և վստահ իմպրովիզացիա անելու կարողությունը: • Զարգացնել համագործակցելու կարողությունը՝ միասին ստեղծելով մի արդյունք, որի ընթացքը մասնակիցներից որևէ մեկը չի կարող լիովին վերահսկել: • Թեթև և հետաքրքիր խմբային աշխատանքի միջոցով խթանել փոխադարձ հարգանքի վրա հիմնված հաղորդակցությունը: • Զարգացնել թիմային աշխատանքի ընթացքում բաց լինելու, ուրիշների գաղափարներն ընդունելու և սեփական գաղափարներով վստահորեն կիսվելու կարողությունը:
Անհրաժեշտ նյութեր	Բավարար տարածք, որպեսզի բոլոր մասնակիցները կարողանան շրջանաձև նստել և հեշտությամբ տեսնել, թե ով է ձեռք բարձրացնում խոսելու համար, էկրան կամ մեծ ստվարաթուղթ, վայրկյանաչափ կամ ավազե ժամացույց:
Տևողություն	60-90 րոպե
Մասնակիցների թիվը	15-40 մասնակից

Նկարագրություն

Գործնական աշխատանքը բաղկացած է երկու մասից:

Մաս 1. Նախապատրաստում

Նախապես ընտրեք երեք պատրաստի արտահայտություն, որոնք մասնակիցները կարող են օգտագործել, եթե համատեղ պատմություն ստեղծելիս դժվարանում են արագ որևէ գաղափար առաջարկել կամ շարունակել պատմությունը: Օրինակ՝ «ու՞ր է տանում այս պատմությունը», «Դուք էլ ե՞ք օդում ամոնիակի հոտ զգում» կամ «Մեզնից մեկը հաստատ ինչ-որ բան է թաքցնում»: Այս արտահայտությունների նպատակն է աշխատանքը հասանելի և հարմարավետ դարձնել բոլոր մասնակիցների համար:

Դրանք հատկապես օգտակար են այն պահերին, երբ մասնակիցը կաշկանդվում է, կորցնում է մտքի թելը կամ պարզապես չի կողմնորոշվում՝ ինչ ասել: Այդ դեպքում նա կարող է օգտագործել պատրաստի արտահայտություններից մեկը և առանց ավելորդ լարվածության շարունակել մասնակցել պատմության ստեղծմանը:

Նախապես պատրաստեք նաև պատմության հետաքրքիր սկիզբ՝ ներառելով այնպիսի մանրամասներ կամ իրավիճակներ, որոնք կշարժեն մասնակիցների երևակայությունը և գաղափարներ կտան պատմությունը շարունակելու համար:

Նախապես գրեք պատրաստի արտահայտությունները էկրանին, մեծ թղթի կամ ստվարաթղթի վրա և տեղադրեք այնպես, որ գործնական աշխատանքի ողջ ընթացքում դրանք տեսանելի լինեն բոլոր մասնակիցներին:

Մաս 2. Իրականացում

Մասնակիցներին խնդրեք նստել շրջանաձև կամ դասավորվել այնպես, որ բոլորը կարողանան տեսնել միմյանց: Ներկայացրեք առաջադրանքը և բացատրեք, որ այն համատեղ պատմություն ստեղծելու հետաքրքիր և աշխույժ աշխատանք է, որն ունի հստակ նպատակներ: Կարևորն այստեղ կատարյալ պատմություն ստեղծելը չէ, այլ միասին ստեղծագործելը, միմյանց գաղափարները զարգացնելը և սեփական մտքերը հստակ ու որոշակի կանոնների շրջանակում արտահայտելը: Մասնակիցներին բացատրեք աշխատանքի ընթացքը: Դասընթացավարը սկսում է պատմությունը, ապա ընտրում է հաջորդ մասնակցին, որը պետք է շարունակի այն: Միաժամանակ, եթե որևէ մասնակից արդեն ունի պատմությունը շարունակելու գաղափար, կարող է ձեռք բարձրացնել և առաջարկել իր տարբերակը: Պատմությանը ավելացվող նոր իրադարձություններն ու անսպասելի շրջադարձերը պետք է լինեն հնարավորինս հստակ և կոնկրետ: Ժամանակ առ ժամանակ դասընթացավարը կարող է նաև նոր պայման կամ անսպասելի իրավիճակ առաջարկել, օրինակ՝ «Իսկ հիմա պատմության մեջ անսպասելի շրջադարձ է տեղի ունենում» կամ «Իսկ հիմա սկսում է անձրև գալ»: *

Բացատրեք նաև, որ եթե որևէ մասնակից իր հերթին չի կողմնորոշվում, թե ինչպես շարունակել պատմությունը կամ ինչ ավելացնել, կարող է օգտագործել նախապես պատրաստված երեք արտահայտություններից մեկը: Կարիք չկա մասնակիցներին բացատրելու, որ այս հնարավորությունը նախատեսված է լարվածությունը նվազեցնելու և բոլորի մասնակցությունը հեշտացնելու համար: Բավական է նշել, որ եթե տվյալ պահին որևէ գաղափար չունեն, կարող են պարզապես ընտրել այդ երեք արտահայտություններից մեկը և այդ կերպ շարունակել մասնակցել աշխատանքին:

Սկսեք պատմությունը և հերթով ընտրեք այն մասնակիցներին, որոնք պետք է շարունակեն այն: Շարունակեք այնքան ժամանակ, մինչև պատմությունը բնական ավարտի հասնի (օրինակ՝ երբ պատմության բոլոր գլխավոր կերպարները մահանում են), խմբի ակտիվությունը նվազի կամ նախատեսված ժամանակը սպառվի:

Խորհուրդ չի տրվում առաջադրանքը կրկնել երկրորդ անգամ: Սակայն, եթե առաջին փուլում մասնակիցներին որոշ ժամանակ է պահանջվել ակտիվանալու համար, կարելի է փորձել ևս մեկ անգամ՝ օգտագործելով պատմության նույն սկիզբը, բայց այս անգամ այն զարգացնել բոլորովին այլ ուղղությամբ՝ նոր գաղափարների և դասընթացավարի առաջարկած անսպասելի շրջադարձերի միջոցով: Աշխատանքի ընթացքը ակտիվ պահելու համար մասնակիցներին տեղեկացրեք, երբ նախատեսված ժամանակի կեսն անցնի, ինչպես նաև նախապես զգուշացրեք, երբ ժամանակը մոտենում է ավարտին: Պատմությունն ավարտելուց հետո խրախուսեք մասնակիցներին ծափահարել միմյանց, տրամադրեք 5 րոպե ընդմիջում, ապա անցեք ամփոփիչ քննարկմանը:

*Կախված մասնակիցների խմբից՝ դասընթացավարը կարող է աշխատանքի սկզբում կամ վերջում նրանց ուշադրությունը հրավիրել պատմության կառուցվածքի չորս հիմնական բաղադրիչների վրա՝ ուշադրություն գրավող սկիզբ, կերպար, հակասություն և հանգուցալուծում: Պատմության ստեղծման տարբեր փուլերում դասընթացավարի ուղղորդող առաջարկներն ու հուշումները կարող են օգնել պահպանել այս կառուցվածքը և նպաստել պատմության բնական զարգացմանը:

Ամփոփիչ քննարկման հարցեր

- Ի՞նչպիսի զգացողություններ ունեցաք այս աշխատանքի ընթացքում:
- Ի՞նչ հույզեր և զգացողություններ ունեցաք պատմությունը միասին ստեղծելու տարբեր փուլերում:
- Որքանո՞վ էիք ձեզ ընդհանուր գործընթացի մաս զգում: Եղա՞ն պահեր, երբ ձեզ դուրս մնացած կամ պակաս ներգրավված զգացիք:
- Ձեր կարծիքով՝ բոլոր մասնակիցներն ունե՞ի պատմության ստեղծմանը հավասարապես մասնակցելու հնարավորություն:
- Պատրաստի արտահայտությունների նպատակը հասկանալի՞ էր ձեզ: Դրանք օգնեցի՞ն ավելի հանգիստ և վստահ շարունակել աշխատանքը այն պահերին, երբ դժվարանում էիք արագ որևէ գաղափար առաջարկել:
- Աշխատանքն օգնե՞ց ավելի լավ հասկանալ պատմության հիմնական բաղադրիչները՝ ուշադրություն գրավող սկիզբը, կերպարը, հակասությունը և հանգուցալուծումը: Ինչպե՞ս են այս բաղադրիչներն օգնում պատմությունն ավելի հետաքրքիր և գրավիչ դարձնել:
- Այս աշխատանքից հետո համագործակցության ի՞նչ նոր հմտություններ կամ մոտեցումներ բացահայտեցիք ձեզ համար:

Աղբյուր՝ մշակվել է VisMed-ի կողմից՝ VIBE նախագծի շրջանակում:

16. Պատմության կառուցման ստեղծագործական արվեստանոց

Զարգացվող հմտություններ և հիմնական հասկացություններ	• Ստեղծագործական և արագ մտածելու հմտություններ • Ակտիվ թիմային աշխատանք և հանրային խոսքի հմտություններ • Հուզական բանականություն և ապրումակցում • Կերպարների զարգացում և տարբեր զգայարանների ներգրավմամբ սթորիթելինգ
Նպատակներ	• Խթանել մասնակիցների ստեղծագործական մտածողությունը: • Զարգացնել ազատ և վստահ իմպրովիզացիա անելու կարողությունը: • Զարգացնել համատեղ աշխատելու և ընդհանուր արդյունքի հասնելու համար շարունակաբար փոխզիջումներ գտնելու կարողությունը: • Ամրապնդել խմբային աշխատանքի ընթացքում դժվարություններին հարմարվելու և դրանք հաղթահարելու կարողությունը: • Ստեղծագործական աշխատանքի միջոցով զարգացնել կենտրոնանալու կարողությունը և ուշադրությունը երկար ժամանակ պահպանելու հմտությունը:
Անհրաժեշտ նյութեր	Բավարար տարածք՝ բոլոր մասնակիցների ընդհանուր աշխատանքի համար, իսկ մեծ խմբի դեպքում՝ նաև առանձին տարածքներ փոքր խմբերով աշխատելու համար: Նոթբուք՝ անհրաժեշտության դեպքում միացված ձայնն ուժեղացնող սարքավորմանը:
Տևողություն	60-90 րոպե
Մասնակիցների թիվը	15-40 մասնակից
Ուսումնական նյութեր	Կառուցվածք ունեցող և չունեցող պատմություններ

Նկարագրություն

Գործնական աշխատանքը բաղկացած է երեք մասից:

Մաս 1. Նախապատրաստում

Նախապես պատրաստեք մեկ շատ կարճ պատմություն, որը կծառայի որպես աշխատանքի հիմք: Այն պետք է հստակ արտացոլի պատմության զարգացման հաջորդականությունը՝ ուշադրություն գրավող սկիզբ, կերպար, հակասություն և հանգուցալուծում:

Պատմությունը ներկայացրեք հնարավորինս համառոտ՝ առանձնացնելով միայն հիմնական իրադարձություններն ու զարգացման ընթացքը: Եթե մասնակիցները շատ են և աշխատանքը կազմակերպվելու է փոքր խմբերով, պատրաստեք մի քանի տարբեր պատմություններ՝ յուրաքանչյուր խմբի համար:

Մաս 2. Իրականացում

Հավաքեք մասնակիցներին և նախ ներկայացրեք պատմության կառուցման հիմնական սկզբունքները՝ ուշադրություն գրավող սկիզբ, կերպար, հակասություն և հանգուցալուծում: Անհրաժեշտության դեպքում բերեք պարզ և հասկանալի օրինակներ՝ դրանք հարմարեցնելով մասնակիցների՝ մեդիագրագիտության և սթորիթելինգի ոլորտում ունեցած գիտելիքներին ու փորձին:

Ներկայացրեք գործնական աշխատանքի նպատակը և բացատրեք, որ մասնակիցները միասին աշխատելու են որպես ստեղծագործական արվեստանոց և սցենարի համատեղ մշակման թիմ: Ընդգծեք, որ վերջնական արդյունքը լինելու է ամբողջ խմբի համատեղ աշխատանքի արդյունքը: Ներկայացրեք նաև այն հմտությունները, որոնք զարգացվելու են աշխատանքի ընթացքում՝ հատկապես համագործակցելու, միմյանց լսելու, տարբեր գաղափարներ համադրելու և ընդհանուր արդյունքի հասնելու համար փոխզիջումներ գտնելու կարողությունը: Անհրաժեշտության դեպքում մասնակիցներին բաժանեք փոքր խմբերի: Նախքան խմբային աշխատանքին անցնելը կարճ ընդմիջում կազմակերպեք, որպեսզի մասնակիցները կարողանան վեր կենալ, շարժվել և փոքրու՞չ հանգստանալ: Խմբերը ձևավորելուց հետո, եթե մասնակիցները դեռ լավ չեն ճանաչում միմյանց, որոշ ժամանակ տրամադրեք ծանոթությանը: Այնուհետև կրկին հավաքեք նրանց և ներկայացրեք աշխատանքի հաջորդ քայլերը:

Խմբերի համար կարդացեք նախապես պատրաստված կարճ պատմությունը և համոզվեք, որ մասնակիցները կարողանում են դրանում առանձնացնել ուշադրություն գրավող սկիզբը, կերպարը, հակասությունը և հանգուցալուծումը:

Եթե միաժամանակ աշխատում են մի քանի խմբեր, ցանկալի է ներգրավել մի քանի դասընթացավարների, որպեսզի յուրաքանչյուր խումբ կարողանա առանձին տարածքում միաժամանակ լսել իր համար նախատեսված պատմությունը:

Խմբային աշխատանքն իրականացվում է երեք փուլով

Ա. Կերպարների զարգացում

Մասնակիցները քննարկում են պատմության հիմնական սյուժեն և ավելի մանրամասն մշակում դրանում ներգրավված կերպարներին:

Նրանք կարող են նաև նոր կերպարներ ավելացնել, որոնք սկզբնական պատմության մեջ նշված չեն եղել: Այնուհետև յուրաքանչյուր մասնակից կամ զույգ ընտրում է մեկ կամ մի քանի կերպար և հնարավորինս ամբողջական ձևավորում նրանց՝ մտածելով բնավորության, անցյալի, սովորությունների, ցանկությունների, վախերի և այլ առանձնահատկությունների մասին: Այդ մանրամասներից ոչ բոլորն են պարտադիր ներառվելու վերջնական պատմության մեջ, սակայն դրանք օգնում են կերպարներին դարձնել ավելի իրական և համոզիչ: Անհրաժեշտության դեպքում դասընթացավարն ուղղորդում է աշխատանքը՝ օգնելով պահպանել կապը սկզբնական պատմության հետ և արդյունավետ օգտագործել նախատեսված ժամանակը:

Բ. Պատմության զարգացում և հուզական շերտի ավելացում

Մշակված կերպարների հիման վրա խումբն ընդլայնում և հարստացնում է սկզբնական պատմությունը՝ ավելացնելով նոր իրադարձություններ, մանրամասներ և իրավիճակներ: Խումբը միասին որոշում է նաև, թե ինչ հիմնական հույզ կամ զգացողություն է ցանկանում փոխանցել և պատմության որ հատվածներում այն պետք է առավել հստակ արտահայտվի: Մասնակիցները քննարկում են՝ այդ հույզը վերաբերում է միայն կերպարի ապրումներին, թե նաև պետք է հասկանալի և զգալի լինի հանդիսատեսի համար, ինչպես նաև՝ ինչպիսի արձագանք այն կարող է առաջացնել լսարանի մոտ: Ընդհանուր տարբերակի շուրջ համաձայնության գալու ընթացքում մասնակիցները վերանայում և փոփոխում են պատմությունը երկու կամ երեք անգամ՝ աստիճանաբար այն դարձնելով ավելի ամբողջական, հուզական և համոզիչ:

Գ. Վերջնական պատմության պատրաստում

Վերջին փուլում խումբը մշակում է պատմության վերջնական տարբերակը՝ սկզբնական կարճ պատմությունը վերածելով ավելի ծավալուն և ամբողջական պատմության: Այնուհետև մասնակիցները միասին որոշում են, թե ինչպես են ներկայացնելու այն մյուս խմբերին՝ բաշխելով դերերն ու նախապատրաստելով համատեղ ներկայացումը:

Մաս 3. Արդյունքների ներկայացում

Ընդմիջումից հետո յուրաքանչյուր խմբի առաջարկեք ընտրել երաժշտություն, որը կարող է ծառայել որպես իրենց պատմության ձայնաշերտ: Այս փոքրիկ անակնկալ առաջադրանքն օգնում է խմբին կրկին կենտրոնանալ համատեղ աշխատանքի վրա և պատրաստվել վերջնական պատմության ներկայացմանը: Յուրաքանչյուր խումբ ներկայացնում է իր պատմությունը, իսկ ընտրած երաժշտությունը նոթբուքով հնչում է որպես ուղեկցող ձայնաշերտ:

Եթե ներկայացվելու է մեկից ավելի պատմություն, ցանկալի է խմբերի փոխադարձ արձագանքներն ու քննարկումը թողնել բոլոր ներկայացումների ավարտին: Այդպես հնարավոր կլինի պահպանել ներկայացումների շարունակականությունն ու ստեղծել կարճամետրաժ ֆիլմերի դիտման տպավորություն:

Բոլոր ներկայացումների ավարտին մասնակիցներին խրախուսեք ծափահարել միմյանց և կիսվել իրենց տպավորություններով: Դասընթացավարը կարող է քննարկումն ուղղել նաև պատմությունների բովանդակության և կառուցվածքի վերլուծությանը, սակայն դա կարող է թուլացնել աշխատանքի ավարտին ձևավորված դրական և ոգևորիչ մթնոլորտը: Ուստի եզրափակիչ քննարկման ժամանակ ավելի նպատակահարմար է կենտրոնանալ աշխատանքի ընթացքում մասնակիցների ապրած հույզերի, զգացողությունների և ընդհանուր փորձի վրա:

Ամփոփիչ քննարկման հարցեր

- Կարո՞ղ եք ձեր ստեղծած պատմությունը պատկերացնել որպես կարճամետրաժ ֆիլմ:
- Որքանո՞վ եք գոհ համատեղ ստեղծված պատմության վերջնական տարբերակից:
- Սահմանափակ ժամանակը լարվածություն առաջացրե՞ց: Ձեր կարծիքով՝ հնարավո՞ր էր այս աշխատանքն իրականացնել ավելի կարճ ժամանակում:
- Ժամանակի սահմանափակումն օգնե՞ց խմբին ավելի արագ ընդհանուր համաձայնության գալ և կենտրոնանալ վերջնական արդյունքի վրա:
- Եթե խմբում տարաձայնություններ առաջացան, ինչպե՞ս կարողացաք դրանք հաղթահարել և ընդհանուր որոշման գալ:
- Այս աշխատանքը ձեզ համար հուզական փորձառությու՞ն էր: Ի՞նչ զգացողություններ ունեցաք դրա տարբեր փուլերում:
- Աշխատանքի ընթացքում նկատեցի՞ք, որ այն նաև պահանջում էր կենտրոնանալ, կազմակերպել սեփական մտքերը, հաշվի առնել մյուսների տեսակետները և միասին աշխատել որոշակի կանոնների շրջանակում:
- Համատեղ աշխատանքի ընթացքում համագործակցության ի՞նչ նոր հմտություններ կամ մոտեցումներ բացահայտեցիք ձեզ համար:

Աղբյուր՝ մշակվել է VisMed-ի կողմից՝ VIBE նախագծի շրջանակում:

Բաշխիչ նյութ 1

Պատմություն 1

Սուտ տեղեկության հետևանքները

Ընդամենը մեկ ապակողմնորոշող վերնագիր կարող է մի ակնթարթում խաթարել ամիսների ընթացքում ձևավորված վստահությունը:

Ստեֆանը երիտասարդ ակտիվ առաջնորդ է: Նա հաճախ է օգտվում սոցիալական ցանցերից՝ կամավորներ ներգրավելու և համայնքային նախաձեռնությունների մասին տեղեկություններ տարածելու համար: Համայնքային կարևոր նախաձեռնություններից մեկի ընթացքում Ստեֆանը, առանց տեղեկությունները ստուգելու, տարածում է աղմկահարույց մի հոդված: Հրապարակումն արագ տարածվում է՝ առաջացնելով բուռն արձագանք և շփոթություն: Արդյունքում մարդիկ սկսում են կասկածի տակ դնել նաև Ստեֆանի թիմի աշխատանքն ու նրանց նախաձեռնության արժանահավատությունը: Սակայն Ստեֆանը չի փորձում պարզապես ջնջել հրապարակումը կամ խուսափել պատասխանատվությունից: Նա բացահայտ ընդունում է իր սխալը, հրապարակում է պարզաբանում՝ ներկայացնելով ստուգված և հավաստի տեղեկություններ, մասնակցում մեդիագրագիտության գործնական դասընթացի և իր թիմում ներդնում տեղեկատվությունը հրապարակելուց առաջ ստուգելու հստակ կարգ: Սխալն ընդունելու և այն շտկելու նրա ազնիվ ու պատասխանատու մոտեցումն աստիճանաբար վերականգնում է համայնքի վստահությունը: Ավելին՝ այս փորձից հետո թիմն ավելի պատասխանատու է մոտենում առցանց տարածվող տեղեկատվությանը, իսկ նրանց թվային հարթակները դառնում են ավելի վստահելի և արդյունավետ:

Պատմություն 1. Կառուցվածքային

Սուտ տեղեկության հետևանքները

Ուշադրություն գրավող սկիզբ. Ընդամենը մեկ ապակողմնորոշող վերնագիր կարող է մի ակնթարթում խաթարել ամիսների ընթացքում ձևավորված վստահությունը:

Կերպար (Ստեֆան). Ստեֆանը երիտասարդ ակտիվ առաջնորդ է: Նա հաճախ է օգտվում սոցիալական ցանցերից՝ կամավորներ ներգրավելու և համայնքային նախաձեռնությունների մասին տեղեկություններ տարածելու համար:

Հակասություն. Համայնքային կարևոր նախաձեռնություններից մեկի ընթացքում Ստեֆանը, առանց տեղեկությունները ստուգելու, տարածում է աղմկահարույց մի հոդված: Հրապարակումն արագ տարածվում է՝ առաջացնելով բուռն արձագանք և շփոթություն: Արդյունքում մարդիկ սկսում են կասկածի տակ դնել նաև Ստեֆանի թիմի աշխատանքն ու նրանց նախաձեռնության արժանահավատությունը:

Հանգուցալուծում. Սակայն Ստեֆանը չի փորձում պարզապես ջնջել հրապարակումը կամ խուսափել պատասխանատվությունից: Նա բացահայտ ընդունում է իր սխալը, հրապարակում է պարզաբանում՝ ներկայացնելով ստուգված և հավաստի տեղեկություններ, մասնակցում մեդիագրագիտության գործնական դասընթացի և իր թիմում ներդնում տեղեկատվությունը հրապարակելուց առաջ ստուգելու հստակ կարգ: Սխալն ընդունելու և այն շտկելու նրա ազնիվ ու պատասխանատու մոտեցումն աստիճանաբար վերականգնում է համայնքի վստահությունը: Ավելին՝ այս փորձից հետո թիմն ավելի պատասխանատու է մոտենում առցանց տարածվող տեղեկատվությանը, իսկ նրանց թվային հարթակները դառնում են ավելի վստահելի և արդյունավետ:

Բաշխիչ նյութ 2

Պատմություն 2

Խզված կամուրջը

Նորարարությունն առանց ավանդույթների ամուր հիմք չունի, իսկ ավանդույթներն առանց նորարարության՝ ապագա:

Իվանան նպատակասլաց երիտասարդ է, որը վերջերս ավարտել է դպրոցը: Նա առաջարկում է հին քաղաքի շենքերից մեկում ստեղծել երիտասարդական կենտրոն: Սակայն նրա նախաձեռնությունը բախվում է քաղաքային խորհրդի ավագ սերնդի ներկայացուցիչների կոշտ դիմադրությանը: Նրանք երիտասարդներին անպատասխանատու են համարում, իսկ պատմական նշանակություն ունեցող համայնքային շենքը երիտասարդական կենտրոնի վերածելը՝ աննպատակ և ոչ խելամիտ օգտագործում: Իվանան որոշում է փոխել իր մոտեցումը: Նա ավագ սերնդի ներկայացուցիչներին հրավիրում է մասնակցելու համատեղ կլոր սեղան-քննարկման և առաջարկում երիտասարդական կենտրոնը դարձնել սերունդներին միավորող ընդհանուր տարածք: Այստեղ մի կողմից կպահպանվի ու կներկայացվի տեղական մշակութային ժառանգությունը, իսկ մյուս կողմից երիտասարդների համար կանցկացվեն ժամանակակից թվային հմտությունների զարգացման դասընթացներ: Այս նոր մոտեցումը փոխում է քաղաքային խորհրդի անդամների վերաբերմունքը, և նրանք միաձայն հավանություն են տալիս նախաձեռնությանը:

Պատմություն 2. Կառուցվածքային

Խզված կամուրջը

Ուշադրություն գրավող սկիզբ. Նորարարությունն առանց ավանդույթների ամուր հիմք չունի, իսկ ավանդույթներն առանց նորարարության՝ ապագա:

Կերպար (Իվանա). Իվանան նպատակասլաց երիտասարդ է, որը վերջերս ավարտել է դպրոցը և առաջարկում է հին քաղաքի շենքերից մեկում ստեղծել երիտասարդական կենտրոն:

Հակասություն. Նրա նախաձեռնությունը բախվում է քաղաքային խորհրդի ավագ սերնդի ներկայացուցիչների կոշտ դիմադրությանը: Նրանք երիտասարդներին անպատասխանատու են համարում, իսկ պատմական նշանակություն ունեցող համայնքային շենքը երիտասարդական կենտրոնի վերածելը՝ աննպատակ և ոչ խելամիտ օգտագործում:

Հանգուցալուծում. Իվանան փոխում է իր մոտեցումը: Նա ավագ սերնդի ներկայացուցիչներին հրավիրում է համատեղ կլոր սեղան-քննարկման և առաջարկում երիտասարդական կենտրոնը դարձնել սերունդներին միավորող ընդհանուր տարածք, որտեղ կպահպանվի տեղական մշակութային ժառանգությունը և միաժամանակ կանցկացվեն ժամանակակից թվային հմտությունների զարգացման դասընթացներ: Նոր առաջարկը ստանում է քաղաքային խորհրդի բոլոր անդամների աջակցությունը, և նախաձեռնությունը միաձայն հաստատվում է:

17. Պատմության վերելքն ու անկումը

Զարգացվող հմտություններ և հիմնական հասկացություններ	• Ստեղծագործական և քննադատական մտածողություն • Համագործակցություն և թիմային աշխատանք • Խնդիրների լուծման և վերլուծական հմտություններ • Գրական ստեղծագործությունների վերլուծության հմտություններ • Հույզերը ճանաչելու և հասկանալու կարողություն
Նպատակներ	• Ծանոթանալ Քուրթ Վոնեգութի՝ «Պատմությունների ձևերի» գաղափարին և կարողանալ բացատրել դրա էությունը: • Սովորել պատմության մեջ առանձնացնել հուզական վերելքներն ու անկումները: • Պատմության զարգացման ընթացքը տեսանելի ներկայացնել գրաֆիկի միջոցով: • Զարգացնել համագործակցության հմտությունները՝ խմբային աշխատանքի և քննարկումների միջոցով: • Վերլուծել, թե ինչպես են պատմություններն ու անձնական փորձառությունները զարգանում որոշակի հուզական օրինաչափություններով:
Անհրաժեշտ նյութեր	A4 ձևաչափի թուղթ կամ վանդակավոր թուղթ, գրիչներ, մատիտներ, գունավոր մարկերներ, գրատախտակ կամ պրոյեկտոր, կպչուն թերթիկներ, պատմության զարգացման գրաֆիկի ձևանմուշ (ըստ ցանկության):
Գործիքներ և աղբյուրներ	Քուրթ Վոնեգութի՝ պատմությունների 8 «ձևերի» մասին, Սթիվեն Ջոնսոն, 13 հունիսի, 2022 թ. Kurt Vonnegut on the 8 “shapes” of stories
Տևողություն	60-90 րոպե
Մասնակիցների թիվը	15-30 մասնակից

Նկարագրություն

Գործնական աշխատանքը բաղկացած է երկու մասից:

Մաս 1. Նախավարժանք՝ «Գուշակի՛ր պատմությունը» (10 րոպե)

Աշխատանքի ընթացքը

- Խնդրեք մասնակիցներին մտաբերել իրենց սիրելի ֆիլմը, հեքիաթը կամ վեպը:
- Առանց վերնագիրը նշելու՝ նրանք պետք է նկարագրեն միայն գլխավոր կերպարի հուզական ճանապարհը: Օրինակ՝ «Սկզբում կերպարն իրեն երջանիկ է զգում, հետո կորցնում է ամեն ինչ, բայց վերջում կարողանում է հաղթահարել դժվարությունները և հասնել հաջողության»:

- Մյուս մասնակիցները փորձում են գուշակել, թե որ պատմության մասին է խոսքը:
- Մի քանի օրինակ քննարկելուց հետո ներկայացրեք Քուրթ Վոնեգութի այն գաղափարը, ըստ որի՝ պատմության ընթացքում կերպարի հուզական վերելքներն ու անկումները կարելի է պատկերել պարզ գրաֆիկի միջոցով:

Նպատակ՝ ներգրավել մասնակիցներին և ծանոթացնել պատմության միջոցով հույզերի փոխանցման գաղափարին:

Մաս 2. Կարճ ներկայացում. պատմության հուզական զարգացման ընթացքը (15 րոպե)

Դասընթացավարի ներկայացումը.

Ամերիկացի գրող Քուրթ Վոնեգութի դիտարկմամբ՝ պատմությունները հաճախ զարգանում են որոշակի ճանաչելի հուզական օրինաչափություններով: Գրատախտակին գծեք կամ տպագիր տարբերակով ներկայացրեք պատմության զարգացման գրաֆիկի ձևանմուշը: Բացատրեք, որ գրաֆիկի գիծը բարձրանում է, երբ պատմության մեջ դրական իրադարձություն է տեղի ունենում, և իջնում է, երբ տեղի է ունենում բացասական իրադարձություն:

Որպես օրինակ ներկայացրեք բոլորին ծանոթ որևէ պատմություն, օրինակ՝ «Մոխրոտիկը».
- Մոխրոտիկն իր տանը դժբախտ է (անկում):
- Նա գնում է պարահանդեսի (վերելք):
- Կեսգիշերին նա ստիպված է հեռանալ և կորցնում է արքայազնին (անկում):
- Արքայազնը գտնում է նրան, և նրանք ամուսնանում են (վերելք):

Մասնակիցների հետ քննարկեք, թե ինչպես են պատմության ընթացքում հուզական վերելքներն ու անկումները այն դարձնում ավելի հետաքրքիր, դինամիկ և գրավիչ:

Մաս 3. Խմբային առաջադրանք. կառուցեք պատմության հուզական զարգացման գրաֆիկը (30 րոպե)

Աշխատանքի ընթացքը

Մասնակիցներին բաժանեք 3–5 հոգանոց խմբերի: Յուրաքանչյուր խումբ ընտրում է որևէ հայտնի պատմություն, օրինակ՝ «Մոխրոտիկը», «Հարի Փոթերը», «Սառցե սիրտը», «Մոանան», «Սարդ-մարդը», «Առյուծ արքան» կամ մեկ այլ պատմություն: Այնուհետև խմբերը քննարկում են ընտրված պատմության հիմնական իրադարձությունները: Թղթի վրա գրաֆիկի միջոցով պատկերում են գլխավոր կերպարի հուզական զարգացման ընթացքը՝ ցույց տալով նրա հուզական վերելքներն ու անկումները:

Գրաֆիկի յուրաքանչյուր վերելքի և անկման հատվածում նշում են պատմության համապատասխան կարևոր իրադարձությունը:

Արդյունքների ներկայացում

Յուրաքանչյուր խումբ ներկայացնում է իր գրաֆիկը՝ չնշելով պատմության վերնագիրը: Մյուս մասնակիցները փորձում են գրաֆիկի հուզական վերելքներից ու անկումներից գուշակել, թե որ պատմությունն է պատկերված: Դրանից հետո խումբը բացահայտում է ճիշտ պատասխանը:

Մաս 4. Անհատական անդրադարձ. իմ պատմության հուզական զարգացման գրաֆիկը (20 րոպե)

Աշխատանքի ընթացքը

Խնդրեք մասնակիցներին մտաբերել իրենց կյանքից որևէ կարևոր փորձառություն: Օգտվելով նույն գրաֆիկից՝ նրանք պատկերում են այդ փորձառության հուզական զարգացման ընթացքը՝ նշելով՝

- **ինչ դժվարության են բախվել,**
- **որն է եղել շրջադարձային պահը,**
- **ինչպես է ավարտվել իրավիճակը,**
- **ինչ են սովորել այդ փորձից:**

Ցանկության դեպքում մասնակիցները կարող են իրենց գրաֆիկները ներկայացնել և դրանց մասին պատմել խմբին:


Ամփոփիչ քննարկման հարցեր

- Ի՞նչ ընդհանրություններ նկատեցիք տարբեր պատմությունների հուզական զարգացման գրաֆիկների միջև:
- Ձեր կարծիքով՝ ինչու՞ են պատմությունների մեջ սովորաբար հանդիպում խնդիրներ կամ հակասություններ:
- Հուզական զարգացման ո՞ր օրինաչափությունն էր առավել հաճախ հանդիպում տարբեր պատմություններում:
- Ձեր անձնական փորձառություններից որևէ մեկի հուզական զարգացումը նմանվե՞ց որևէ հայտնի պատմության զարգացման ընթացքին:
- Պատմության կառուցվածքը հասկանալն ինչպե՞ս կարող է օգնել մեզ ավելի լավ ընկալել պատմությունները և ինքներս ավելի հետաքրքիր պատմություններ ստեղծել:

Աղբյուր՝ մշակվել է FECE-ի կողմից՝ VIBE նախագծի շրջանակում:

Դասընթացավարի համար

Պատմության հուզական զարգացման գրաֆիկի ձևանմուշ



Եզրակացություն

Այս գործիքակազմը ցույց է տալիս, թե սթորիթելինգը, մեդիագրագիտությունն ու քննադատական մտածողությունն ինչ կարևոր դեր կարող են ունենալ՝ օգնելով երիտասարդներին դառնալ իրենց համայնքի ակտիվ, պատասխանատու և ինքնավստահ անդամներ: Համադրելով մասնակցային և գործնական ուսուցման տարբեր մեթոդներ՝ ձեռնարկն օգնում է երիտասարդական աշխատողներին ստեղծել այնպիսի միջավայր, որտեղ նրանց ձայնը լսելի է, տեսակետները՝ հարգված, իսկ սեփական մտքերն ու կարծիքներն ազատ արտահայտելու ցանկությունը՝ խրախուսված: Այս մոտեցումը ոչ միայն նպաստում է հաղորդակցման և առաջնորդության հմտությունների զարգացմանը, այլև ամրապնդում է սոցիալական համերաշխությունը, խթանում ժողովրդավարական գործընթացներին մասնակցությունը և եվրոպական արժեքների նկատմամբ պատասխանատու վերաբերմունքը: Ի վերջո, ձեռնարկն օգնում է երիտասարդներին դուրս գալ տեղեկատվությունը պարզապես ստացողի դերից՝ դառնալով տեղեկացված, սեփական ձայնն ունեցող և համայնքային կյանքում ակտիվ մասնակցություն ցուցաբերող քաղաքացիներ:



Co-funded by the European Union

Սթորիթելինգի ուսուցման գործիքակազմ երիտասարդական աշխատողների համար



Սույն հրատարակությունը տարածվում է Creative Commons արտոնագրով՝ CC BY-NC 4.0: Հրատարակությունը հասանելի է բաց և անվճար ներբեռնման համար VIBE նախագծի պաշտոնական կայքում՝ VIBE Youth Project: